



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

19657

բարձրագույն ԱՊ.

Մանկավարժական համալսարանի
հարկը.

Ժողովուրդ

1879

371.7

B-12

2010

12001

Գրքի համար
Կ. Պ. Բաբուխանյան

ՈՒՍՈՒՄՆԵՐՆԻ
ՆՈՂՋԱԳԱՀՈՒԹԵԱՆ

Հ Ա Ր Ց Ե Ր

ԲՃԻՇԿ ԱԻԵՏԻՔ ԲԱԲԱՅԵԱՆ

ԹԻՖԼԻԶ

Ի Տպարանի Յ. Մարտիրոսյանց

1879

Բ-12

Հ. Բ.

Այս գրքի համարը 14. *Այս գրքի համարը*

18 ^{vii}/₁₄ 74

Քրիստոս

Հ. Բ. 14

ՆՈՒԷՐ

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՄՕՐԱ

ՄԱՀՏԵՍԻ ԽԱՆՈՒՄ — ՄԱՐԳԱՐՏԻ

ՅԻՉԱՏԱԿԻՆ

ՈՒՍՈՒՄՆԵՐԸՆԻ
ԼՈՒՂ, ԶԼՊԸ ՀՈՒԹԵԼՆ ԿԵՐՅԵՐ

Յօրինեց

ԲԺԻՇԿ ԱԻԵՏԻՔ ԲԱԲԱՅԵԱՆ

„Հարբ կերին զազոխն եւ որբոց
„ստամունք առան.“

Հին ժողովրդական առած:

„Անկանոն կրթութիւնը զանազան պատ-
„ճառներով կարող է այլակերպել լմարդ-
„կային սեռի քաջակազմութիւնը
„Ֆիզիքական եւ բարոյական թշուառութիւնը
„յստաջ բերելով“:

Reich. Ueber die Entartung etc.

(Արտատպուած «ՓՈՐՁ» ամսագրից)

ԹԻՖԼԻՉ

ի Տպարանի Յ. Մարտիրոսեանց:

1879

69869 - Ա. 7.



392-22

Յ Ե Ռ Ե Զ Ե Բ Ե Ն

Дозволено Цензурою. 15 Февраля 1879 г. Тифлисъ.

Типографія И. Мартиросіанца, на Орб. у. д. 5.

Յառաջիկայ գրքոյկի նպատակն է ընթերցող հայ հասարակութիւնը ծանօթացնել ուսումնարանի առողջապահութեան և վիճակագրութեան զանազան հարցերին:

Վերջի տարիները որպէս ծածկաստանի հայերի մէջ զանազան ընկերութիւններ կազմուելով մեծ հոգատարութիւն է երևում հիմնել ու բազմացնել կանոնաւոր ժողովրդական դպրոցներ, նոյնպէս և մեր հոգևոր իշխանութիւնը մեծ ջանք է ցոյց տալիս բարեկարգելու կանոնաւոր հիմանց վրայ իւր իրաւասութեան տակ զանուոյ ծրարական և հոգևոր դպրոցները:

«Կանոնաւոր և Բարեկարգեալ» ժողովրդական դպրոց ստելով՝ անշուշտ մենք պէտք է ներկայացնենք մեր աչքին՝ կենդանի կերպով — դաւառական որևէ քաղաքում կամ հարուստ գիւղում գեղեցիկ և յարմար մի շէնք, որ դրոյց տեսնողը արդէն ուրախ և մխիթար սրտով ասէ՛ այո՛, սա վարժարանի շէնք պիտի լինի՛. — բարձրայարկ մեծ և պայծաս լուստմուտներով, դասատուների օգտակարութեան և տաքութեան վիճակը լաւ վստահաններով և հոգմարարներով (վնասիլատօր) ապահոված, կրեխայի մտադրահաս կազմուածքին և երկարատե պարապմունքներին յարմարացրած նստարաններով (գրասեղաններով), լրերացուցական դաստիարակութեան համար տեսակ-տեսակ պատի և ձեռաց պատկերներով, կաղապարներով, գրատախտակներով և այլ կարևոր դպրոցական պիտոյքներով՝ վերջապէս՝ այդ բոլորին կեանք տուող, գործը հասկացող աշխուարարոյ և մանկավարժ ուսուցիչներով՝ իրանց աշակերտաց հետ միասին — ահա՛ այս է ընդհանրապէս կանոնաւոր և Բարեկարգեալ ուսումնարանի պատկերը:

Այսպիսի ուսումնարաններ իրօք մեր մէջ տարածելու և հաստատահիմն արմատացնելու համար բաւական չեն միայն դպրոցական կառավարութեանց ջանքերը, այլ պէտք է ժողովուրդը ինքն էլ օգնի այդ գործին նիւթական ձեռնավորութիւնով և իւր եռանդուն

համակրութիւնովը, եթէ ոչ գործը շատ դժուար և դանդաղ յառաջ կերթայ:

Բայց մեր ժողովուրդը սովոր չէ դեռ իւր առատ օժանդակութիւնը նուիրել սկզբնական ուսումնարանների այդ նոր պահանջներին. նա կաշխատի, որքան կարելի է այդ պահանջներից աժան պրծնել. ի՞նչեց է այդ. մի՞թէ միայն չքաւորութիւնը կամ ժլատութիւնն է ժողովրդի այդպիսի դժկամակութեան պատճառը. ո՛չ, մենք ինքներս, փոքր ՚ի շատէ տեղեկութիւններ ունեցողներս և պահանջողներս, չհասկացրի՛նք ժողովրդին (կամ նրանց, որոնց սովորաբար հեռուում է ժողովուրդը) թէ՛ որքան կարևոր են և օգտաւէտ նոր ուսումնարանի պահանջները. հոգ չտարանք վաղ ժամանակով նրանց ապացուցանել այժմեան դպրոցների պարադաների թերութիւնները և փաստակար արդեցութիւնները մեր մաստղահաս երեխաների առողջութեան վրայ: Աւրեմն մեղաւորը ժողովուրդը չէ, որ կարծում է թէ «հին ձևով է՛լ կարելի է էօլ» դնալ, ինչպէս մինչև հիմայ էօլ» գնացել է»:

Արբ որ ժողովրդին հրաւիրում ենք օգնելու, նուիրատու և նպատամատոյց լինելու մի որևէ ձեռնարկութեան կամ հաստատութեան, պէտք է նորան հասկացնենք այդ ձեռնարկութեան նշանակութիւնը, օգուաները, լաւն ու վատը: Աւ ընդհակառակը՝ եթէ մի որևէ իցէ հասարակական հաստատութիւն բազմակողմանի չէ քըննուած ու հասարակաց գիտակցութեանը հասցրած, նորա գործադրութիւնը հարկաւ թերի և անկատար կ'լինի, վաղ թէ ուշ գտնազան վատ հետեանքներ կ'յառաջացնէ, իւր բուն նպատակից շեղուելով և չարմատանալով ժողովրդի կեանքի մէջ:

Այս պատճառներով կարծում ենք թէ այժմն մանաւանդ շատ հարկաւոր է և պարտք՝ տարածել մեր ժողովրդի մէջ ուսումնարանի առողջապահութեան հարցերը, ցոյց տալով արդի դպրոցաց Լեւրուիւնները և փաստակար արդեցութիւնները:

Թո՛ղ կրկնուի և դարձեալ կրկնուի թէ՛ ուսումնարանի նպատակն է կատարեալ մարդիկ պատրաստելը, ո՛չ միայն բարոյապէս և մտաւորապէս, այլև Ֆիզիքապէս. թէ՛ առանց հոգստարութեան երեխաների առողջութեանը և Ֆիզիքական դաստիարակութեանը՝ միշտ թերի պիտի մնայ մեր սերնդոց մտքի լիակատար զարգացումը. որովհետև հոգու զարգացումը մարմնի (մանաւանդ ուղեղի և ջղային գրու թեան) կանոնաւոր զարգացումից է կախուած. այդ երկու

բանը ամենասերտ և անբաժանելի կապերով կապուած են և ուսումնարանը իրաւունք չունի բաժան նայելու դոցա վրայ:

Թո՛ղ ցոյց տրուին ուսումնարանի զանցառութիւնները և փաստակար արդեցութիւնները այդ կողմից, և չվախեցուի թէ՛ ժողովուրդը սխալ կ'հասկանայ այդ մտքերը և կ'խուսափէ այնուհետև ուսումնարանից: Մեր ժողովուրդը արդէն լաւ ճանաչում է թէ՛ «առանց ուսման չիք մեզ փրկու թիւն», բայց չգիտէ դեռ թէ՛ ինչպիսի ուսումնարաններ են պէտք: Աւտի ուսումնարանաց «Գրաս, չարիէ, Բեղ» խօսքերը (որ յաճախ գործ են ածուած այս գրքոյկի՛մէջ ևս) նա կ'հասկանայ և կ'ընդունէ իբրև հրաւիր ուսումնարանի նորագունէան և ո՛չ ամբաստանութիւն իսկուան ուսումնարանի վրայ:

Յաւոււմ ենք, որ այժմ անկարող ենք մեր հասարակութեան առաջը դնել գործնական առողջապահութեան մի շեշտաբար չարհանգ մեր տեղական ուսումնարանների զանցառութեանց դէմ: Գորա համար մեծ փորձ է հարկաւոր և մեր ուսումնարանաց մանրամասն վիճակագրութիւն:

Գերմանիայ, բացի վարչութեանց օգնութիւնը, մասնաւոր բժշկիկներ իրանց առանձին ցանկութեամբ շատ օգնել են և օգնում են ուսումնարանների առողջապահութեան հանգամանքները հետազօտելուն և ճիշդ վիճակագրութիւններ հաւաքելուն: Բայց մեր մէջ թէ ուսումնարանական վարչութիւնք և թէ բժիշկները այդ հարցերին շատ սակաւ ուշադրութիւն են դարձնում:

Այսպիսի հանգամանքների մէջ շատ ցանկալի է որ գոնէ մեր դպրոցաց վերահսարչները ուշք դարձնէին ուսումնարանների առողջապահական վիճակագրութեանը, պատուիրէին տեսուչներին կամ զլխաւոր վաժապետներին, որ ծանօթ բժիշկների հետ յառաջուց խորհրդակցելով և ծրագիր կազմելով չ'զանդաղէին սոքա՝ աշակերտների բացակայութեան պատճառների մէջ նշանակելու ամեն անգամ և աշակերտների հիւանդութեանց դէպքերը: Նոքա պէտք է ինդրին, որ ծնողները ճիշդ տեղեկութիւն տան հիւանդութեան մասին, հասկացնեն ծնողաց թէ՛ ինչ նշանակութիւն ունի այդ տեղեկութիւնը: Հիւանդութիւնների դէպքերը նշանակել, որքան կարելի է, մանրամասն պարագաներով և համեմատաբար, այսինքն միտք դարձնելով երբեմն ուսումնարանի տեղաւորութեան, տարութեան (բարեխառնութեան) վիճակին, դասատանց զանազանութեանը, փոխադրական հիւանդութեանց պատճառներին ուսումնարանի մէջ և այլն:

Այսպիսի հետազոտութիւններ և վիճակագրական տեղեկութիւններ մեր ուսումնարանաց վերաբերութեամբ դեռ բոլորովին չըկան, ուստի մեզ կ'մնար դիմել դարձեալ Եւրոպայի բազմափորձութեանը, ուր ուսումնարանները վաղուց և շատ տարածուած գոյով նոցա յառաջ բերած մի քանի վնասակար հետեանքները առաւել շօշափելի են եղել: Գուցէ այդ փորձերից համոզուէին մերոնք ուշագիւր լինելու ուսումնարանի առողջապահութեանը և հոգ տանէին այժմէն մեր դպրոցների պարագաների փոփոխութեանը: Բայց պէտք է ասել, որ Եւրոպայումն ևս դպրոցի առողջապահութեան հարցը դեռ ևս շատ վիճարանութեանց նիւթ է և մեծ զգուշութիւն է հարկաւոր զանազան աղբիւրներից այս կամ այն վերջնական եզրակացութիւնն ընդունելու համար: Ուստի պէտք էր մեզ այնպիսի հեղինակների դիմել, որոնց քննութեանց ճշգրութեանը միանգամայն վստահ լինէինք:

Այսպիսի հեղինակութիւնք ընտրած ենք մեզ համար նախ և յառաջ՝ Բեռլինի պրոֆեսոր Ֆիրխովը որ վաղուց արդէն երեւելի է ամբողջ Եւրոպայի մէջ, իբրև անաչառ քննադատ բժշկականութեան լայն ասպարիզի մէջ: Սորա համառօտ, բայց ազու և համոզել յօգուածը՝

1) Ueber gewisse, die Gesundheit benachtheiligenden Einflüsse der Schule, (Ուսումնարանների կողմից առողջութեան վնասող հանի մի ազդեցութեանց մասին), որ տպուած է իւր հրատարակած Archiv für Pathologische Anatomie etc. 46 հաս. 4-րդ տետրի մէջ 1869 թ. կազմում է մեր գրքոյկի զլսաւոր հիւնքը: Մենք աշխատել ենք այդպիսի մի ուսումնական դրուած, որքան կարելի էր, մեր հայ հասարակութեան հասկանալի կացուցանել՝ ազատ գրուածով, զանազան նորանոր բացատրութիւններով, յաւելուածներով, Ֆիրխովի կարծեաց դէմ՝ այս քանի տարուայ մէջ, ինչ որ ուշագրութեան արժանի բան կար, ՚ի նկատի առնելով:

Երկրորդ հեղինակութիւնք, որից մենք բաւականին օգուտ քաղեցինք գրքոյկիս բովանդակութեան համար, և մանաւանդ այն գլուխների, որոնք բոլորովին դուրս են Ֆիրխովի ծրագրից — է՝

2) W. Zwez-ի Das Schulhaus und dessen innere Einrichtung, für Lehrer, Schulvorstände, Aerzte etc. (1870 Weimar), (Ուսումնարանի շինութիւնը և նորա ներքին կառուցութիւնը . . .) վերնագրով պատուական գիրքը: Ինքը Յվեյը՝ Վայմարում լուսաւորութեան բաժնի ծառայող է և շատ խղճմտանօք հետեւում է

ուսումնարանների առողջապահութեան հարցին. սորա գիրքը ուսումնարանների շէնքի մասին կարող է հաղորդել թանկագին նիւթեր այդ հարցով պարապողներին.

3) Երրորդ՝ Schulbankfrage und die Kunze'sche Schulbank (Գրասեղանների հարցը և Կունզեի գրասեղանը) von Dr C. H. Schildbach. 1872 Leipzig (երկր. տպագ.). որպէս Յվեյից, նոյնպէս Շիլդբախից քաղած նիւթերս գրքոյկիս համապատասխանող գլուխներու մէջ ցոյց տուած ենք:

4) Բրեւոյաւի բժ. H. Cohn-ի Untersuchung der Augen von 10,060 Schulkindern nebst Vorschlägen etc. (Գննութիւն աչուց 10,060 աշակերտների և այլն) Leipzig 1867:

Պետերբուրգի բժ. Էրիսմանի հետազոտութիւնքը Պետերբուրգի ուսումնարանաց վերաբերութեամբ հաստատում էին զլսաւորապէս Կոհնի եզրակացութիւնքը:

5) Յիւրիխի պրոֆեսոր Meyer-ի Die Mechanik des Sitzens mit besonderer Rücksicht auf die Schulbankfrage. Virchow's Archiv für Patholog. Anat etc. Bd. 35, H. 1. 1867: (Նստելու մեխանիկան և գրասեղանների հարցը):

6) Իրանախցի Վերնուայի Etat hygienique des lycées de l'empire (Կայսրութեան շէնքերի առողջապահական հանգամանքը): Paris, 1868:

7) Riant. Hygiène scolaire, influence de l'école sur la sante' des enfants. Paris 1874 et 1875.

8) D-r Baginsky. Handbuch der Schul-Hygiene. (Ուսումնարանի առողջապահութեան ջեմարէ) Berlin 1875.

Չզգական և հոգեկան հիւանդութեանց գլուխների վերաբերութեամբ նպաստել են մեզ՝

9) Мауделей. Физиология и патология души, (Մտադուրի Բնութագրութիւնը և հիւանդութեան հոգեւոր) перев. съ англ. И. Исаина. Спб. 1871.

10) Die naturwissenschaftliche Methode in der Psychiatrie. Vorträge v. Dr. Paul Samt. 1874 Berlin.

11) Այստեղ կ'ըլնէնք ևս W. Lange-ի Rheinische Blätter für Erziehung und Unterricht մանկավարժական ամսագրի 1875 թ. 1 և 2 տետրակների «Հիպոթիզեր» վերնագրով յօդուածը, որից կտեսնուի որ մանկավարժները իրանք էլ այժմ գինաւորվում են ուսումնարանի առողջապահութեան չհետեւելու դէմ:

Ուսուցող գրականութեան իսկապէ՛մ մեր գրքոյկի նիւթին վե-

րաբերեալ գրուածներէց յիշենք՝ մանաւանդ Ֆր. Էրիսմանի ուսումնարանաց առողջապահութեան մասը.

Փ. Զրիսման. „Руководство къ Гигиенѣ“ изд. медиц. департаментомъ. (Զեանսորէ առողջապահութեան) 1875 — 77.

Գալով վերջապէս մեր հայոց գրականութեան, առաջարկեալ գրքոյկի նիւթի վերաբերութեամբ, պէտք է ասել, որ նա շատ ազգատիկ է և գլխաւորապէս թարգմանական: Մենք կ'ըբերենք այստեղ բոլոր գրուածները և գրքերը (ժամանակի կարգով), որ մենք ձեռքի տակ ունեցել ենք և որոնցից օգուտ ենք քաղել, և կարծեմ թէ մեր նիւթի վերաբերեալ բոլոր գրականութիւնը այդքանն է միայն:

1) Մանսարտուրան, աշխատ. Սէրվիչէնեան: Պօլիս 1844: Հին գրուածք քանի մի հնացած կարծիքներով. բայց ճաճկաստանի կողմերի մեր շատ գերդաստանների համար դեռ ևս պիտանի և օգտաւէտ կարող է լինել:

2) 1868 թ. տպուեցաւ Ս. Պետերբուրգ.

Մանսարտուրան Էրեխայոյ՝ Տարմուտի և Բարոյտի, Անգղ. թագուհւոյ բժ. Կոմբի. թարգմանութիւն Պ. Մ. Տէր Գրիգորեանցի. հրատ. Ս. Միանսարեանցի՝ զանազան յաւելուածներով հրատարակչի կողմից:

Այս գրքի քանի մի գլուխները միայն Ֆիզիքական դաստիարակութեան նկատմամբ փոքր ինչ վերաբերում են մեր առաջարկեալ նիւթին: Գիրքը իւր ամբողջութեամբ նուիրած է նորածին երեխայի առողջապահութեանը, և պարտք ենք համարում յայտնել այստեղ, որ չ'նայելով մանր, քանի մի պակասութեանց, պ. հրատարակչի կողմից շատ յաջող և յարմար ընտրութիւն է իսկ թարգմանութեան լեզուն բաւականին լաւ: Որքան մենք կարողացանք Կովկասում նկատել՝ այդ գիրքը բաւականին տարածուած է այժմ մեր փոքր ի շատէ բարեկիրթ գերդաստանաց մէջ և խելացի մայրերի ձեռքին թանկագին ընթերցանութեան նիւթ է:

3) 1869 թ. «Արարատ» ամսագրի հոկտ. և նոյեմբ. համարների մէջ տպուեցան մեր երկու փոքր յօդուածները՝ «Ուսումնարանի քննասիրտ աղբիւրներէն» վերնագրով (Պ. Հ. Ո. Ա. Ժպտեալ անուանով), որք այժմ քանի մի փոփոխութիւններով և յաւելուածներով կազմում են առաջարկեալ գրքոյկի առաջի 2 գլուխը:

4) 1870 թ. «Արարատի» յունով. համարի մէջ, մի փոքրիկ յօդուած՝ «Հայեցուածք ուսումնարանների վերայ բժշկական կողմա-

նէ», ուր առաջ են բերուած համառօտ կերպով Ֆիրսովի եզրակացութիւնը միայն:

5) 1872 թիւին լոյս տեսաւ Ս. Պետերբուրգում՝ հեղինակութիւն Մ. Մ. Միանսարեանցի «Կանոնաւոր և վայելուչ գրութեան պատմութիւնը»:

Մեզ մանաւորապէս հետաքրքրական այդ գրքից նորա այն մասն է, որ նուիրած է գրասեղանների խնդրին և ուսումնարանի առողջապահութեան: Մենք առաջարկեալ գրքոյկին համապատասխանող գլուխների մէջ հրաւիրել ենք մեր ընթերցողը ուշադրութիւնը պ. Միանսարեանցի այս գրքի մէջ տպած գրասեղանների ստուերադրերին, և անկանոն և կանոնաւոր նստուածքի պատկերներին նոցա օրէնսդրի կողքերի վրայ: Ուսումնարանի արտաքնոցի մասին Միանսարեանցի օգուտ ենք քաղել:

6) 1874 Վ. Պօլսում Յակոբ Պոյաճեանցի տպարանից դուրս եկած գիրքը՝ «Տարերք անդամազննութեան, բնախօսութեան և առողջապահութեան, ընտանեաց և դպրոցաց համար» վերնագրով:

Այս գրքի հեղինակը չէ յիշուած, թէ և երևում է, որ թարգմանութիւն պիտի լինի՝ ամերիքական մի հեղինակութեան: Շատ ընտիր, յարմար և օգտաւէտ գիրք է մեր հասարակութեան համար: Մենք մեր ընթերցողը ուշադրութիւնը հրաւիրում ենք այդ գրքի մանաւանդ այն գլուխներին և պատկերներին, որք կ'վերաբերին մեր նիւթին: Պօլսոյ գրականութեան մէջ այսպիսի յաջող և յարմար թարգմանութեան նիւթ ընտրվելը բացառական դէպք է, որովհետեւ բնախօսութեան, բժշկականութեան, առողջապահութեան վերաբերեալ՝ Պօլսոյ վերջի ժամանակների թարգմանութիւնքը՝ զանազան թեթեւ ֆրանսիական հեղինակներից՝ ինչպէս Տրքէ (Կրքէ) և tutti quanti, համապատասխան չեն իւրեանց նշանակութեան. նոքա խակ ընթերցողների երեւակայութիւնը աւելի խանգարում են, քան թէ ճշմարիտ գիտական օգտաւէտ տեղեկութիւնք հաղորդում:

Այս մեր աղբիւրները ցոյց տալով՝ մենք միտք չունինք հասկացնելու թէ՛ մտածել ենք այս գրքոյկով ուսումնարանի առողջապահութեան մի լիակատար և ինքնուրոյն հրահանգ ներկայացնել:

Արկնում ենք՝ այդպիսի հրահանգ, ճիշդ գիտնական հայեացքով, այժմ անկարելի է գրել, որովհետեւ փաստերը դեռ թերի են: Մենք աշխատել ենք միայն, որքան կարողացել ենք, բարեխղճ ճութեամբ վերը բերած ընտիր հեղինակներից օգտաւէտ և յարմար

քաղուածքներ անել. որովհետեւ ուսումնարանի առողջապահութեան հարցը նոր է մշակվում, մենք աշխատել ենք զլսաւորապէս մեր աղբիւններից այն կէտերը քաղել և լռիկաբար դասաւորել, որոնք կարող են, ըստ մեր կարծեաց, փոքրէն և փոքրէն մեր ուսումնարանաց կառավարիչների, վարժապետների, բանխմաց ծնողների և մեր բժիշկների ուշադրութիւնը և հետաքրքրութիւնը՝ աեսնելու, քննելու և զլսաւորը՝ ճշմարտ մեր ուսումնարանի առողջապահութեան հանգամանքները և վեճակադրութեան հարցերը:

Այդ պատճառով, ահա՛, նշանակում ենք այս գործը զպրոցական վարչութեանց, վարժապետաց և բանխմաց ծնողաց համար և ո՛չ դեռահասների կամ հասարակ ժողովրդի համար:

Բժշ. Ա. Բաբայան

Լայրցիդ $\frac{\text{Մայիսի } 28}{\text{Յունիսի } 10}$ 1877 թ.

ԳԼՈՒԽ Ե.

Մարդ, որքան աւելի բան գիտէ, որքան աւելի ուղիղ եւ իսկական փաստերի վրայ հիմնուած է նորա մտածմունքը, այնքան աւելի հեռու կըլինի թմրութիւնից եւ ցնորքներից: Փանի միտքը շատ զարգանայ եւ սովորի չհետեւիլ կեղծ ու կաշկանդող կարծիքների, այնքան աւելի մտաւրի մշտնադիտ բարոյականութեան: Beyer. Die Erziehung zur Vernunft. Cob. 1864. 34.

Անյեւալ դարու վերջին տարիներից սկսած թէ բժիշկներ թէ դաստիարակներ սկսեցին այս և այն կողմից ուշադիր և հետամուտ լինելու ուսումնարանի ֆեասակար ազդեցութեանը աշակերտաց առողջութեան նկատմամբ. բայց ամեն անգամ այս կարևոր հարցը չէր ենթարկվում ճիշդ գիտնական հետազոտութիւնների: Նոյն իսկ Լորինգերի յօդուածը, սպազրած Պրուսական Բժշկ. Անկ. Օրագրի 1836 թ. № 1 մէջ, թէ և շատերի ուշադրութիւնը զրաւեց և մեծ ազդեցութիւն ունեցաւ, սակայն պէտք է խոստովանիլ, որ նորա ասածներն ևս՝ կարճատեսութեան, փորի խցանաց*, բարակացաւի և այլ հիւանդութեանց մասին, որ իբրև թէ տարածուած էին միջին ուսումնարանների աշակերտաց մէջ, դարձեալ անորոշ էին և բուն վեճակադրական հիմք չունէին: Աւստի նորա հակառակորդները, որպէս Նրեյմայերը և այլք, կարողացան նորա դէմ հակաձառել նոյն օրագրի մէջ, նմանապէս թոյլ և աւելի անորոշ հիմքեր յառաջ բերելով:

Ահա հասարակ, այս հարցի վերաբերութեամբ քանի մի ընդհանուր փաստեր և զրութիւնք, որք ակներև էին թվում ուսումնականներից շատերին, փոքր առ փոքր զրբերի միջոցաւ տարածուեցան և ժողովրդի մէջ: Բայց մէկը — ո՛ր հարցնէր այդ փաստերի ներքին հիմունքը կամ զոցա գոյութեան ապացոյցները միշտ

* Փորակապութիւն:

թերի և անկատար պատասխան կատանար : Հազիւ հրբեմն պատահել է զիտնական փորձ այդ հարցի քննութիւնը ճշգրիտ իրական փաստերի վրայ հիմնելու : Եւ հիմայ մեծ յառաջադիմութիւն պիտի համարուի, որ ուսումնարանի վիճակագրութեան սկիզբը զանազան ուղղութիւններով զրուած է՝ զոնեա մի քանի լուսաւոր տեղերում :

Ի՞նչ նիւթ զլսաւորապէս պէտք է ներկայացնէ մեզ այդ վիճակագրութիւնը : — Այն ամենը, ի՞նչ որ կարելի էր անուանել — «Ձանցառութիւնք, ուսումնարանի և ուսումնարանական տարութիւնք» :

Այո՛, մանրամասն, ճիշդ քննական և բաղադատական վիճակագրութիւնը միայն կարող է վերջապէս վճռել մեր խնդիրը՝ թէ ի՞նչ չարիք կամ հիւանդութիւնք է յառաջ բերում ուսումնարանը և ի՞նչպիսի հնարներով կարելի է ազատուիլ դոցանից : Իսկ որտեղ ո՛ր պակասել է այդպիսի վիճակագրական նիւթ, այժմեան զիտնականները հարկաւ դիմել են առողջապահական ընդհանուր կանոններին, որոնք կ'վերաբերին ո՛չ միայն ուսումնարաններին, այլ ամեն հասարակական հաստատութեանց, և կամեցել են այդ կերպով յիշած հարցերը վճռել : Բայց պէտք է ներանալ թէ՛ այդ ձևով կարելի էր ուսումնարանին վերագրել այնպիսի չարիք, որ ուսումնարանին չեն վերաբերում և ընդհակառակը՝ մոռանալ այնպիսիք, որ նոյն իսկ ուսումնարանի պտուղն են և ծնունդը : Ուստի շատ ցանկալի է, որ այդ հարցերին հետամուտ անձինք՝ ուսումնարանի չարիք, վտանգներն եւ ուսումնարանի քննելիս, իրօք վիճակագրական հիմունքներով սպառնալիքները չ'չփոթէին միայն կարծեցեալների հետ և այդ կերպ՝ գործին ճշգրութիւն տալով՝ իրաւունքով գործնական հետեւանքներ սպասէին մեր ուսումնարանական կեանքի մէջ :

ԱԶԳԱՅԱԻ ԵՒ ԿԱՐՃԱՏԵՍՈՒԹԻՒՆ

Առաջին, թէև շատ թոյլ փորձը՝ ուսումնարանի վնասակար ազդեցութիւնը ցոյց տալու, մանաւանդ տեսութեան զգայարանների վրայ, կատարեց այս դարուս սկզբում անգլիացի Ուէրը, որ կամենում էր վիճակագրական կերպով ապացուցանել այդ : Յետոյ՝ թէ՛ Գերմանիայում և թէ՛ այլ տէրութեանց մէջ մասնաւոր անձինք, երբեմն կառավարութեան հրամանով, սկսեցին վիճակագրական տե-

ղեկութիւններ հաւաքել այդ հարցի վերաբերութեամբ : Բայց զրոքազարար այսպիսի տեղեկութիւնները միշտ ընդհատվում էին և անկանոն կերպով կատարվում, հետեւաբար ո՛չ մի հիմնաւոր եզրակացութիւն չէր կարելի մակաբերել դոցանից : Բրեսլաւի բժիշկ Հերման Կոհնը առաջինն եղաւ, որ այս առարկայի նկատմամբ ըսկսեց իւր ամենաճիշդ հետազոտութիւնները, որ միանգամայն համապատասխան են արդի դիտութեան պահանջներին՝ թէ՛ նորան հետեւող աշխատակիցների թուով և թէ՛ դիտողութեանց անշփոթ մեթօդով : Ուստի սորա դիտողութիւնքը շատ կարևոր համարուելու են և մինչև անգամ բոլորովին վճռողական նշանակութիւն կարող են ունենալ այս հարցի մէջ : Կոհնի աշխատութեան արդիւնքն են կազմում այն եզրակացութիւնքը, որ նա դուրս է բերել իւր յիրաւի բազմակողմանի փորձերից և դիտողութիւններից՝ զանազան ուսումնարանների աշակերտների վրայ : Թող աւելորդ չ'համարուի մէջ բերելու այստեղ թէ՛ ո՛րքան և ո՛րպիսի ուսումնարաններ այդ քննութեանց նիւթ են եղել :

- 5 Գիւղական ուսումնարան.
- 20 Աղղջնական կամ ծխական ուսումնարան.
- 2 Օրիորդաց ուսումնարան.
- 2 Միջին ուսումնարան.
- 2 Գործնական ուսումնարան. վերջապէս՝
- 2 Գիմնազիօն :

Դիտեալ աշակերտաց թիւը հասել է 10,060, որոնցից 6,059-ը անմիջապէս զննել է ինքը Կոհնը, մնացածին — վարժապետները՝ նորա ցոյց տուած եղանակով — և խրատով : Վերջերումս Կոհնը դարձեալ զննել էր համալսարանի 410 ուսանողների աչքեր :

Միևնոյն ժամանակ Կոհնը ամեն անգամ նշանակում էր աշակերտների հասակը, նոցա ո՛րքան ժամանակ ուսումնարանում լինելը, ուսումնարանի շէնքը և տեղադրութիւնը և հաշուի տակ էր առնում աչքացաւի յարաբերութիւնը այս ամեն մի պարագային : Այս կերպ՝ վերջապէս այնքան թանկագին թուեր հաւաքեց, որ նոցանից դուրս բերած հետեւանքի ճշմարտութեանը կարելի է միանգամայն վստահ լինել :

Ահա՛ ընդհանուր եզրակացութիւնը այդ թուերից . 10,060

աշակերտաց մէջ հարիւրից 17,1 կամ հազարից 171-ը արդէն բաւականին խանգարուած տեսութիւն ունէին:

Աօհնի հաւաքած թուերը մի առ մի այստեղ յառաջ բերելը աւելորդ է, մի՛ գուցէ յետագայ մի քանի թուերն անգամ ձանձրացնեն մեր ընթերցողներից շատերին: Բայց ի՞նչ արած, երբ հարցն այնքան կարևոր է, որ մեծ զգուշութիւն է պէտք և ցանկալի էր, որ ընթերցողը ինքը իւր սեփական աչքովը համոզուէր այդ թուերի ի՞նչ կերպ փոփոխուելուն:

Ահա՛ ուրեմն նախընթաց ղլխաւոր եզրակացութեան մի քանի մանրամասն կողմերը:

Ի՞նչպիսի ուսումնարաններ		Քանի՞ աշակերտների աչքեր փորր ի շատ: խանգարուած էին	
Գիւղական	ուսումնարան	հարիւրին	5,2
Քաղաքական սկզբ.	„	„	14,7
Միջին	„	„	19,2
Օրիորդաց բարձր	„	„	21,9
Գործնական	„	„	24,1
Գիմնադիօններում	„	„	31,7

Համալսարանների 410 ուսանողների մէջ առողջ և բնական տեսութեան ուժից զուրկ էին մինչև անգամ հարիւրին 68: Այս վերջին թիւը պէտք է հաշուի մէջ չ'ձգել, որովհետև այդ կախումն ունի ուրիշ շատ հանգամանքներից ևս:

Այս աղիւսակից շատ պարզ երևում է, որ քանի բարձրանում է և մեծանում ուսումնարանը (ըստ նշանակութեան), նոյնքան համեմատ բազմանում և առատանում է աչքացաւը աշակերտների մէջ. կամ ուրիշ խօսքերով ասենք. քանի աշակերտը ստորին ուսումնարաններից բարձրն է գնում, նոյնքան առաւել նա ենթարկուած է աչքերի փչարուելուն:

Թողնենք հիմայ միւս աչքացաւերը և առնենք միայն կործառութեանը. այստեղ ևս նոյն ողբալի հետեանքը կ'տեսնենք. այն թէ՛ ամբողջի մէջ՝ ամեն մի հարիւրից արտը աշակերտ կործառութեան է:

Զանազան ուսումնարանաց մէջ		Ահա ինչպէս է բաժանուած կործառուաց թիւը:	
Գիւղական	ուսումնարան	հարիւրին	1,4
Քաղաքակ. սկզբ.	„	„	6,7
Օրիորդ. բարձր,	„	„	7,7
Միջին	„	„	10,3
Գործնական	„	„	19,7
Գիմնադիօններում	„	„	26,2

Համալսարանի ուսանողների մէջ հասնում է մինչև անգամ 60%: Եթէ հաշուի առնենք միայն քաղաքային ուսումնարանները, այն ժամանակ տոկոսը աւելի կ'մեծանայ՝ այն է, հարիւրին 14,1 կործառութեան է:

Այս վերջին աղիւսակի մէջ ամեն ընթերցողի աչքին պէտք է ընկնի թուերի իրարու յետևից աճելը և մեծանալը: Այդ աճումն առաւել ակներև և համոզողական կ'լինի, եթէ մենք մի որևէ ուսումնարանի առանձին դասասաները իրարու հետ համեմատելու լինինք:

Այստեղ յառաջ բերենք միայն Քաղաքային ուսումնարանների դասասաները:

I	II	III	IV	V	VI
—	—	2,9%	4,1%	9,8%	9,8%

Գիմնադիօնների

12,5%	18,2%	23,7%	31%	41%	55,8%
-------	-------	-------	-----	-----	-------

Այս թուերն ևս ակներև ցոյց են տալիս թէ՛ դասատանց բարձրանալը հետ՝ առատանում է և կարծատեսութիւնը աշակերտների մէջ: Ուստի Կօհնը բողբոլվին իրաւացի հրաւիրում է ծնողների և ուսուցիչների ուշադրութիւնը ուսումնարանի վնասակար աղիւցութեան վրայ կարծատեսութեան նկատմամբ, որ աճելով բազմանում է ուսումնարաններում և յարատւելով ևս առաւել պիտի խանգարէ ամեն մի անհատի տեսութիւնը: Ուրեմն՝ ամեն

ջանքով և հողացողութիւնով պէտք է դորա առաջը առնուի : Այսինքն՝ երեխային ո՛չ մի անգամ պէտք չէ կարգացնել տալ ազատ (միջնաշաղ) լուսով, մանաւանդ սղաշար մանր տիպը և դըր-չագիրը երանի թէ՛ բոլորովին երեխայի ձեռք չը տրուի.¹⁾ Նոյնպէս ամենքին պէտք է արգելել կարգալու ժամանակ մէջը ծառած և 4ը-լուխը կախ արած երկարապետ նստելը : Այս բոլոր բաները մանկան աչքե-րին շատ դժուարութիւն են տալիս և վնասում :

ԳԼ. Բ.

ԿԱՐՃԱՏԵՍՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Դոկտոր Կոհնը արդարացի է ասում թէ՛ կարճատեսութեան այսքան ահագին տարածուելու մեղքը միայն ուսումնարանինը չէ, այլ և մասամբ տնական հանգամանքներինն է : Այս հարցը վճռելու դրական հիմն կունենայինք, եթէ զանազան կացութեանց (ժողովրդի դասակարգ) միահասակ երեխաներին իրարու հետ համեմատած լինէինք. օրինակ՝ եթէ առնէինք ուսումնարանաց աշակերտ-ներին և արհեստանոցներինը կամ մի այլ կացութիւնից : Դժբաղ-դարար այդ կերպ և այդ նպատակով հաւաքած ճիշդ նիւթեր չունինք : Բայց առանց ճշմարտութեան դէմ մեղանչելու այսքանս հաստատ կարելի է ասել՝ թէ բարձր դաստանց աշակերտներին հասակակից արհեստանոցները ոչ մի ժամանակ հարեւին 55 — 56 կար-ձատեսութիւն չեն ներկայացրել, ուր մնայ գիւղացիք, որոնց մէջ շատ սակաւ են աչքի տկարութեան դէպքերը : Ուրեմն՝ մեղքը ըստ մեծի մասին ուսումնարանին է մնում : Այսու ամենայնիւ տունը կամ գերդաստունը բոլորովին գերծ չէ մեղադրանքից. որովհետեւ աղօտ լոյսը, սղաշար տիպը, մանր դըրչագիրը, մէջքը ծռած և գը-լուխը քաշ արած նստելը — այս բոլոր վնասակար հանգամանք-

1) Սերոպայի մէջ՝ կարճատեսութիւնը ամենից շատ տարածուած է Գերմանիայում. Այս բանի մի պատճառն էլ կարելի է համարել Գերմա-նական սովորական տառաձեւը եւ դպրոցական աման դասագրքերը, մանաւանդ փոքր բառարանների տպագրերը, որ կ'ասես թէ հնարած է գիտութեամբ մարդկանց աչքերը աւերելու համար : Զարմանք է, որ Գերմ. բժիշկները այդ բանի դէմ ուղղակի նկատողութիւնք չեն անում :

ները մենք նկատում ենք միշտ երեխայի անական պարապման ժա-մանակն ևս : Պէտք է խոստովանել միայն՝ որ տունը այդ պարագա-ները հարկաւ փոխ է առնում դարձեալ ուսումնարանից : Ուսումն-նարանը ուրեմն բացի այն, որ ինքը չէ աշխատում հետեւելու ա-ռողջապահական կանոններին, այլ վատ օրինակ է տալի այդ կողմից : Դոկտոր Կոհնը կրկին և կրկին խրատում է ժողովրդին՝ ու-սումնարան կառուցանելիս միշտ միոք դարձնել լուսամուտների մե-ծութեանը և քանակութեանը, այնպէս որ սենեակները պայծառ-և լուսաւոր լինին. իսկ երեկոյեան պարապմունքներն (զբաղմունք-ներն) լաւ, առատ և մաքուր լոյսի տակ պիտի կատարել : Բացի այս, առաջարկում է նա սովորական նստարանների փոփոխութիւնը : Հին նստարանները ամեն տեղ համարեա՛ միւսնոյն չէնքն ունին, ուստի և ամեն տեղ նորոգութեան կարօտ են : Կոցա անյարմար շէնքիցն է, որ աշակերտները հարկադրուած են՝ մէջքը ծռելով կամ մասամբ կուրծքին ընկնելով՝ գըլուխը այնքան մօտ կախ անել նստարանի գրքակալին (տոջւի տախտակին), որպէս զի կարողանան տպագիրը կամ գրչագիրը ջոկել և կարգալ : Հիմայ տեսէք թէ՛ այս հանգամանքից ի՞նչ է յառաջ գալի¹⁾ :

— Մտն՝ որովհետեւ առարկան կամ գիրը մօտիկից գննելու հարկաւորութիւն կայ՝ աչաց բիբերը բնականաբար պիտի սաստիկ մերձենան իրարու, որպէս զի յարմարին պարզագոյն տեսութեան կէտին կամ անկեանք. այդ շարժումը կատարվում է աչաց արտաքին մկանունքի միջոցաւ, որք իւրեանց ամփոփուելովը (կծկտել) սաս-տիկ ճնշում են աչաց գունտերը և այդ կերպ՝ ուժեղ երկարատե և ստեպ կրկնվելով՝ խանդարում են կամ վնասում նոցա. այսինքն՝ երկարացնելով նոցա հորիզոնական առանցքը՝ ծնուցանում են կար-ձատեսութիւն : Նրկորդ՝ որովհետեւ կարգալիս երեխայի գըլուխը կախ արած ժամանակ նորա վըզի երակները բաւականին սեղմուած են լինում (անկանոն նստարանի և գրքակալի շնորհիւ), հարկաւ-արեան դարձը այդ դէպքերում պիտի ուշանայ և մեծ ուժով ծա-

1) Յետագայ բացատրութիւնները առաւել պարզ անելու համար նկարած էինք աչքի պատկերներ. բայց այժմ էլ յարմարութիւն չունե-նալով տպելու, կ'իսնդրենք հետաքրքիր անձանց Պօլսոյ տիպ «Տարերք մարմնազննութեան և այլն» գրքի տեսութեան զգայարանի գլխի պատ-կերները աչքի առնելու : Կամ միևնոյնը տեսնել Նուրիճանեանի ֆիզի-քայի մէջ :



ւալն զլիւի, երեսի, ուրեմն և աչաց մէջ : Այս կերպ՝ աչքը փոքր
առ փոքր արիւնով լցվում է և գորանից ճ'նշուելով՝ նոյն վիճա-
կին կը հասնի, ինչ որ ասացինք նախընթացում :

— Երբորդ՝ չէ՞ որ այդ արտաքին ճ'նշումները հաղորդվում են
աչքագնտի միջի հեղանիւթին . այս կերպ ահա՛ յառաջ է գալի
նեքին ճ'նշումն աչաց, որոյ ներգործութիւնը ամենից առաւել լինում
է աչքագունտի յետին մասի վերայ . որովհետեւ սա աւելի հեշտ
կարող է տարածուիլ և ընդլայնանալ : Ուրեմն՝ դարձեալ աչքա-
գունտի հորիզոնական առանցքը կ'մեծանայ, որև կ'յառաջացնէ կար-
ձատեսութիւն ¹⁾ :

Թէ՛ այս կերպ բացատրուին կարճատեսութեան պատճառները
և թէ՛ այլ կերպ, մեր ընթերցողաց շատերի համար բանը դորա-
նում չէ, այլ՝ գիտնալու հարկաւորն և կարևորն այս է, թէ՛ քա-
նի՛ ազօտ կ'լինի լոյսը, քանի՛ մանր են տատերը, քանի՛ մենք կը-
սովորենք մեր աչքերը գրքին շատ մօտացնելու և այդ կերպ կար-
գալու, յիշեալ պատճառները, — որպիսի և լինին սոքա, — ա-
ւելի սաստիկ և աւելի վնասակար կ'ներգործեն : Սե դարձեալ թէ՛
աչքին վնասող հանգամանքներից շատը յառաջ է գալիս մեր
այժմեան նստարանների անյարմար շէնքից, որ երեխայքը հարկա-
զրուած են կարգալու համար միշտ՝ մէջքը և գլուխը ծռել և աչ-
քերը աւելի շատ մօտեցնել գրքին : Վեւ կարգալու ժամանակ երե-
կայն կարող է կուրծքը մի փոքր ազատ բանել, եթէ վերահսկողու-
թիւն լինի : Բայց գրեթե ժամանակ միանգամայն անկարելի է, քա-
նի որ մեր նստարանները կ'մնան իւրեանց նահապետական գրու-
թեան մէջ : Սերտացում այժմ՝ ամեն տեղ տարածվում են շար-

1) Երեւելի բնագէտ Հեյլմօլցը և այժմեան մի քանի ակնաբոյժներ
յայտնած են կատկած թէ՛ վերը յիշած արտաքին մկանանց ճնշումը և
նոյն իսկ ներքին ճնշումն միմիայն, կարողանային կարճատեսութիւն
յառաջացնել : Այդ իրողութիւնը բացատրվում է աւելի մանրամասն կերպով
Յիշենք զլիսաւորը՝ փոքր տառեր ջոկելիս աչաց սառնակերպի ընդ-
լայնանալուց և ամփոփուելուց՝ աչքագունտի յետի թաղանթը քաշքաշվում
է և տկարանում և այդ ժամանակ միայն ամեն ճնշմանց զիջանում : Այդ
թաղանթի տկարութիւնը, որ կոչվում է Ս կարպի Ս տաֆիլոմ, քննելով
մի ակնաբոյժ (Գօրրօփօլսկի) հաստատում է թէ՛ կարճատեսութիւնը
ծննդական չէ ըստ մեծի մասին, ինչպէս այդ սովորապէս կարծվում էր,
այլ՝ աւելի ստացական, աչքերի անկանոն գործածութիւնից իբրև յի-
շած ստաֆիլոմի հետևանք :

ժուն և երեխաների կազմուածքին յարմար նստարաններ : Երանի
թէ՛ մեր մի քանի գլխաւոր համարուած կեդրոնական դպրոցները
գարգարէին իրանց դասատները այդպիսի գրասեղաններով՝ օրինակ-
ները (մօզեկները) բերել տալով Պետերբուրգից կամ Գերմանիայից :

ԳԼ. Գ.

ՀՈՍՈՒՄՆ ԱՐԵԱՆ ԳԷՊԻ ԳԼՈՒԽԸ

Արը արդէն յայտնեցինք, որ պարանոցի երկար ժամանակ
կախ պահելը յառաջացնում է արեան հոսանք դէպի գլուխը . և
այդ իրողութեան բացատրութիւնը տեսանք վըզի երակների սեղ-
մուելում, որով արեան վերադարձը զլիսից դէպի կուրծքը բռնը-
վում է և հարկաւ առաւել ուժգին ծաւալում է գլխի կողմերում :
Նեղ հաղուստը, ՚ի հարկէ, նոյն հետեանքը պիտի յառաջ բերէ,
որովհետեւ նոյնպէս սեղմում է երակները :

Այս կերպ ներգործող ուրիշ հանգամանքներ ևս կան : Սեր
անկանոն հին նստարանները ստիպում են աշակերտին, կարգալիս,
ո՛չ միայն գլուխը ծռել, այլև մէջքը : Այս գրութեան մէջ նորա
փորը ծալվում է և սեղմվում, որով փորի ներքինքը ճ'նշում են
դէպի վեր որո՞մաւորի ¹⁾ վըայ, և արգելելով սորա գործունէու-
թիւնը, դժուարացնում են շնչառութիւնը . իսկ փոքր ՚ի շտաֆ րժոտ-
րայած շնչառութեան ամեն մարդ իւր սովորական փորձից տեսած է
և գիտէ թէ՛ կանգնացնում է դարձեալ արեան արագ վերադարձը
էւրծքը, լցնելով իսկոյն երեսը և աչքերը :

Այս բանը կրկին նստարանների փոփոխութիւն է պահան-
ջում :

Դարձեալ մի հանգամանք բերենք : Երեխէն որ ստիպուած է
լինում մեծ ուշադրութիւն նուիրել մի բանի, նորա շնչառութիւնը

1) Սա բաւական հաստ ջլոտ և մտտ թաղանթ է, որ կուրծքի և
փորի մէջ տեղը գմբէթի նման քաշուած լինելով, բաժանում է փորտիքը
(լեարզը, փայծաղը, ստամոքսը, աղիքը և այլն) թոքերից և սրտից, և
էնդուր էլ մերձեք երբեմն անուանում են դորան սրտի առագաստ,
Այս առագաստի վեր և վար իջնելովն է, որ զլիսաւորապէս մեր թոքերը
լայնանում են (օդ ծծում) և սեղմվում են (օդը արտաշնչում) :

բնականաբար և աննկատելի կերպով քանի գնում՝ պակասում է: Ուղեղի այս ազդեցութիւնը շնչառութեան վրայ ամեն մարդ կարող է իւր սեփական անձի վրայ փորձել, երբ մի բան է լսում խորին ուշադրութեամբ (միայն թէ աշխատի նկատելու): Ձայնով կարգալու ժամանակ այս բանը այնքան շուտ չէ երևում (որովհետև կարգալիս մարդ շարունակ շնչառութեան մէջ է), որքան ուշադրութեամբ մի բան լսելիս — : Նւ որ չէ տեսել թէ այս տեսակ լսելուց յետոյ՝ երեխէքը սկսում են սաստիկ յօրանջել, որով ստիպուած են բնազդօրէն լցուցանել թոքերում պակասած օդը (սաստիկ ուշադրութեան ժամանակ)՝ խորը և լիակատար շունչ քաշելով և ահա՛ այս է յօրանջելը (որոշաւը): Եթէ երկար ուշադրութեան ժամանակ ազատ շնչառութիւնը արդելուած է լինում, ուրեմն, վերը ասածին համեմատ, արեան դարձը ուշանում է և գլուխը դարձեալ արիւնով առատանում է: Այս բանը շատ որոշեալ և հասկանալի պահանջմանքի տեղիք է տալի, այն թէ ուսուցիչները պարտական են իւրեանց դասախօսութիւնը գանազանակերպել մերթ երեխի ուշադրութիւնը գրաւելով և լսել տալով, մերթ նորան ինքեան խօսացնել տալով, մերթ կարգացնելով և երբեմն հէնց իսկ դասախօսութեան ժամանակ մամնամարդութիւն անել տալով մի 2 — 3 րոպէ, ինչպէս սովորութիւն է Վերմանիոյ շատ ուսումնարանաց մէջ: Միով բանիւ դասախօսութեան մէջ կեանք և կենդանութիւն պիտի լինի և ո՛չ մեռելութիւն և դերեզմանք:

Այս հանգամանքները և նկատողութիւնքը, որ մենք բերում ենք, դուրսէ մեր ընթերցողներից շատին մանր, չնչին և աւելորդ երեխն. բայց մենք կ'ինդրենք մի բան աչքից չ'թողնել — այն թէ այդ հանգամանքները յարատե ներգործում են և մի ամբողջ սերնդի վրայ. այն ժամանակ հետեանքի մեծութիւնը և չափը յայտնի կ'լինի:

Այս բոլոր հանգամանքների արտադրած արեան հոսմանը բրժիշկները Ֆեֆնայտիան կամ կրոպրաիան անուն են տալի, որովհետև դոցա առիթն է գլխաւորապէս՝ արեան դարձի արդելուլը մարմնի այս և այն մասումն, ինչպէս այդ վերը բացատրեցինք և տեսանք էլ թէ դոքա տեղիք են գտնում ուսումնարանաց մէջ՝ որովհետև մեր ուսուցիչները մեծ մասով՝ ստորջրայտեւիան ստուած բանին ամենեկին ուշք չեն դարձնում և նորա կանոնների էլ չեն աշխատում հետեւելու:

Այժմ տեսնենք թէ ուսումնարանը չունի՞ արդեօք բաւականին հանգամանքներ և առիթներ՝ ներգործական կոչուած արեան հոսանաց համար:

Այս և առաջ երեխայն ուղեղը սաստիկ, անկանոն և անժամանակաշխուտեցնելը:

Ուղեղը բազմազան ջղերի միջոցաւ այնպիսի մի սերտ կապակցութիւն ունի արեան անօթների հետ, որ կարող է ո՛չ միայն սրտի գործունէութիւնը զօրացնել և արեան շրջումը սաստիկ արագացնել, այլ և կարող է նոյա շախտել. օրինակ՝ եթէ այդ կերպ լայնանան վրդի դարկերակները (քներակք), այն ժամանակ արեան ալիքը առատութեամբ պիտի ընթանան դէպի վեր այդպիսի լայնացեալ խողովակների միջոցով և ոռոգեն ամբողջ գլուխը: Այդ ջղային հասանաց անմիջական երեւոյթներն են, որ մտաւորական դժուար աշխատութիւնից յետոյ՝ պատանու երեսը, աչքերը, ականջները կարմրում են և սաստիկ տաքանում, ականջների օղտեղերը կտեսն թէ էրվում են: Բայց երբեմն ընդհակառակը կ'պատահի, մանաւանդ կրոպրաիան հասանաց ժամանակ: Այս դէպքում գլխի տաքանալը և ծանրանալը, աչքերի մի փոքր մթնելը ապացոյց են թէ այտերի (թշերի) դունաթափութիւնից չ'պէտք է խաբուել, այլ՝ պէտք է մտածել, որ արեան հոսանքը դէպի ուղեղը այնքան սաստիկ է, որ երեսի արիւնն ևս ծաւալում է այնտեղ:

Այս տեղ մի նկատողութիւն ևս: Ո՛չ մի դաստիարակ կամ ուսուցիչ մատաղահաս երեխի ձեռք կամ մէջքը չիտալ մի 5 — 6 փթանոց ծանրութիւն, որովհետև հասկանում է թէ երեխի մկանունքը անզօր են այդպիսի ահագին ծանրութիւն վերցնելու: Ամենայն ծնող կամ դաստիարակ կ'արդելէ՞ երեխին անմարա խորաիկներով և կերակուրներով, և այն էլ չափից դուրս, ստամբսը լրցնել. որովհետև դորա հետեանքն ևս յայտնի է, տկարութիւնք ստամբսի և առողջութեան խանգարումն: Հապա՞ ինչե՛ց է որ միւլենոյնը չեն մտածում ուղեղի համար. չէ՞ որ նա էլ մեր կազմուածքի գործարաններից մինն է, որպէս մանքը, ստամբսը, լեարդը և այլն: Չէ՞ որ ուղեղը երկար և ուժգին աշխատեցնելով, դժուարամարս անհասկանալի զաղափարներ նորա մէջ զօրապի խցելով, մենք ինքներա թուլացնում ենք մեր մտածողութեան այդ ընտիր նուրբ գործարանը և երբեմն երեխին ապուշ շինում:

ԳԼ. Դ.

ԳԼԽԱՅԱԽ, ՔԹԻՑ ԱՐԻԻՆՍԱՀՈՍՈՒԹԻՆ

Այլը յիշած թէ՛ կրաւորական և թէ՛ ներդործական արեւնաբաշխութեան անկանոնութիւնը կամ անհաւասարութիւնը զանազան, երբեմն յարատե տկարութիւններ է ծնուցանում աշակերտներին մէջ: Այդ տկարութիւններից երեքը միայն վիճակագրական հետազոտութեանց նիւթ դառած են և բաւականին ապացուցուած: Ուստի դոցա միայն այստեղ մէջ բերելը մեզ իրաւունք կ'համարենք:

ա) Գլխապատ. Գոկտօր Գիյլօմը այդ ցաւը ուղղակի անուանեց ուսումնարանական գլխապատ. որովհետեւ Նիւշաանի ուսումնարաններից մինում 731 աշակերտներից 296-ն այնէ հարիւրին 40-ն, այդ դըւխտացաւից բռնուած էին:

Օրիորդները ենթարկուած էին այդ ցաւին առաւել, քան թէ տղէքը: Առաջինը ներկայացրին հարիւրին 51, երկրորդը՝ հարիւրին 28 միայն: Ամենից շատ նեղութիւն էին կրում այդ ցաւից դեռահաս (մանուկ) աշակերտները:

Բեկկէր բժիշկը նոյնպէս քննել էր 3569 աշակերտ երկու տեսից: Մենք այստեղ այդ երկուսի էլ ընդհանուր եզրակացութիւնքը բերենք, որպէս զի շատ չձանձրացնենք մեր ընթերցողին:

Ըստ մէկին՝ քաղաքային ուսումնարաններում տղայոց մէջ փոքր դաստաները աւելի են այդ ցաւին ենթարկուած. իսկ զիմնազիծներում և օրիորդաց բարձր ուսումնարաններում ընդհակառակն: Ըստ միւսին՝ դուրս է գալի թէ ուսման առաջին տարիները այնքան զլխացաւ չեն պատճառում, որքան յետոյ՝ քանի աւելանայ դասերի թիւը, քանի մեծանայ մտաւոր պարապմանց սաստկութիւնը և պահանջը: Նոյն զլխացաւին նպաստիչ է տեղի նեղուածքը, աշակերտաց շատութիւնը և այլն:

Չպէտք է մոռանանք այստեղ մի այլ ևս հանգամանք յիշել, որից զուցէ մեծ կախումն ունի զլխացաւի տարածուիլը աշակերտաց մէջ: Մեր խօսքն է երկաթեայ վառարանների մասին (երկաթէ փէշեր, սօբաներ) որ այժմն շատ են գործածում թէ՛ քաղաքներում, թէ՛ գիւղերում: Նէվիլ և Տրօսթ գաղղիացի բժիշկները աշխատում են ապացուցանել թէ՛ այդպիսի մի վառարան, երբ կաս կարմրում է, նորա երկաթեայ պատերը տաքութիւնից անօտարանում են, և նո-

րա մէջ յառաջ եկած օդակերպ նիւթերը, որոնց մէջ և ածխաթըթուար (օքսիդը), աննշմարելի կերպիւ քամիւում են և խառնուվում սենեկի օդին: Եւ ով չգիտէ այդ ածխոյ օքսիդի ամենափոքր ներդործութեան վնասակար հեռուանքը մարմնոյ վրայ — զլխացաւ և պոցա, ուշագնացութիւն, երբեմն դող և այլ երեւոյթներ, որ ամենս նկատում ենք, երբ մի որեւիցէ փակ և դոց կամ օդ չբանող տեղում լաւ չվառած ածուխ է մնում, որից և արտադրվում է յիշեալ օդակերպը: Հիմայ մնում է վիճակագրական կերպիւ վաւերացնել թէ՛ արդեօք զլխացաւը ո՞րպիսի համեմատութեամբ, կամ ո՞րքան մասով, կարելի է երկաթէ վառարաններին վերադրել:

Սյգման բժիշկը գրում է թէ՛ իւր բնական նահանգում, ուր մեծ գործածութեան մէջ և շատ սովորական են երկաթէ վառարանները՝ ածխօքսիդի ներդործութիւնից յառաջ եկած թունաւորութեանց դէպքերը շատ յաճախ են:

բ) Քիւի պրիւսիանիւն: Գիյլօմը պնդում է թէ՛ քթից արիւն գալը շատ սուղ չէ աշակերտաց մէջ: 155 աշակերտներից 21-ն այդ տկարութիւնն ունէին. տղոց մէջ աւելի էր (22%), քան թէ աղջիկների մէջ (20%): Առաջինների համար այդ տկարութիւնը պակասում էր դաստաները փոխելուն համեմատ. երկրորդաց համար այդպէս մի կանոն չէր նկատվում: Բեկկէրի թուերը մի փոքր կըզանազանին, բայց նորա այնքան ճիշդ չեն: Ուստի մենք կրերենք միայն նորա ընդհանուր եզրակացութիւնը. այս է թէ՛ քթի արիւնը այնտեղ էր յաճախ, ուր աշակերտեալքը ստիպուած էին օրուայ մեծ մասը դաստաներում մնալ, և շարժողութիւն չունէին ազատ օդի մէջ:

գ) Ելունդ պարանոյն (վզի ուռոյցք, հաստ վիղ): Այս ցաւը Հայաստանում գժուար թէ պատահի, կովկասում դոնեա շատ անձանօթ է, ուստի միայն անունը նշանակելով բաւականանանք:

Այն ինչ՝ զլխացաւը և քթի արիւնահոսութիւնը թէ՛ բըժշկաց և թէ՛ ծնողաց շատերին յայտնի են, իբրև ուսումնարանական կեանքի հետագնացները, ի հարկէ դոցա համար էլ դեռ ևս կարծութիւն կայ առաւել բազմաթիւ զխտողութեանց, որպէս զի մեր եզրակացութիւնքը միանգամայն վճռողական և անկասկած լինեն: Նստ ցանկալի էր այս նպատակի համար, որ բացի բժշկաց հետազոտութիւնքը, մեր ուսուցիչներն ևս չդանդաղէին իւրեանց աշակերտաց մէջ պատահած հիւանդութեանց դէպքերը ամեն անգամ

նշանակելու : Այսու ամենայնիւ , մենք հիմայ ևս մեր գիտեցածից պիտի ճշմարտոր խոստովանեմք, որ ուսումնարանը այդ ցաւերի տարածուելուն և զօրանալուն բաւականին նպաստում է և մի քանիսը իսկ ինքը իւր գորից է ծնուցանում :

Եւ եթէ ուսումնարանի այս զանցառութիւնքը կամ վտանգները մեր այժմեան ուսումնարանական թերի և փաստակար պարագաներից է կախած, ապա ուրեմն, գորա փոխելը և նորից կարգադրելը ամեն մտածող անձնի սրբազան պարտականութիւններից մինը պէտք է լինի . իսկ թէ՛ որպիսի անհրաժեշտ և անխառնափշի պարտք կայ մանաւանդ նոցա վերայ , որոնց յանձնուած է ուսումնարանաց կառավարութիւնը և հոգատարութիւնը և որոնց իսկ պաշտօնն է այդ, թողնում ենք ընթերցողաց ուշիմ դատողութեանը :

ԳԼ . Ե .

ՈՂՆԱՇԱՐԻ 1) ԾՌՈՒԿՈՒԹՅՈՒՆ

Ուսումնարանների գլխաւոր զանցառութիւններից մինն է համարուած շատ բժիշկների կողմից՝ աշակերտաց ողնաշարի կորուստը (մէջքի ծռութիւնը), մանաւանդ շատ յաճախ պատահող մի կողմի ծռութիւնը, որ բժիշկները անուանում են միակողմ ափսոսել : Ակսերը այժմ գորա քննութիւնը :

Ծանրեղը ասում է, «երբ որ համարեա հարեւրին 90 ողնաշարի ծռութեան զէպքեր պատահում են աշակերտներին ուսումնարանական տարիքում և ծռութիւնն էլ ուղղակի համապատասխան է երեխի գրեթե ժամանակ ծռու նստած դիրքին, այն ժամանակ ի հարկէ իրաւունք կայ ուսումնարանին մեղադարա կացուցանել այդ բանի մէջ » :

Գիշտում բժիշկը շատ համոզել պատկերներով համեմատում է երեխի գրեթե ժամանակի դիրքը և գորանից յառաջացած ողնա-

1) Ո ս կ ր ե ա յ ս իւ ն, позвоночный столбъ, la vettobre, die wirbelsäule.

շարի ծռութիւնը և՛ աւելացնում թէ՛ նա 1731 աշակերտաց մէջ 218 (հարեւրին 30) ծռութիւն է գտել : 1)

Անդամուղղող (օրթօպեդ) բժիշկների շատ մի հետազոտութիւններից և գիտողութիւններից հետեւում է նոյնպէս, որ ողնաշարի ծռութիւնը ըստ մեծի մասին նկատուել է մարդու 7 տարեկան հասակից մինչև 12 տարին . թէև այս թուերի մասին զանազան վիճարանութիւնք տեղե ունեցած են «բայց մենք այդ մասին չ'կամենք երկարել, այլ՝ բոլորի ընդհանուր եզրակացութիւնքն կը յայտնենք իբրև հաստատ իրողութիւն, այն թէ՛ սովորական ափսոսելի զէպքերը պատահում են երեխի ուսումնարան յաճախելու հասակում, իբրև կազմուածքի զարգացման հիւանդութիւն» :

Ֆիրխովը բերելով այս փաստերը հետեւեալ քննութեան կէտերն է դնում :

«Եթէ ուսումնարանական տարիքում է պատահում այդ տկարութիւնը, այդ դեռ չէ նշանակում թէ անպատճառ ամեն զէպքերը ուսումնարանից են յառաջ գալի : Նախ որ այդ մտքի համար պակասում են վիճակագրական թուեր և համեմատութիւն այնպէս երկրների և ժամանակների հետ, ո՛ւր ուսումնարան դնալը պարտաւոր է համարուած :

Երկրորդ՝ որ այդ տկարութիւնը նկատուած է առաւել մասով իզական սեռի երեխայոց մէջ : Օրինակ, — եթէ ճշտութեան համար միայն օրթօպեդ բժիշկների հաւաքած թուերը բերենք այստեղ (որովհետև նոցա մօտ տանում են բժշկելու արդէն ամենին պարզ և նկատելի մեջքի ծռութիւն) — Կլոպը հաշվում է իւր մօտ եկած ծռութեան մէջքի երեխայոց իւրաքանչիւր հարեւրից 84 — 89 աղջկունք : Արամսը 173 զէպքից 151-ը իզական սեռի վրայ է տեսել, Կարլը՝ 72-ից 60-ն :

Բացի այս, Ֆիրխովն ասում է թէ՛ առօրեայ գիտողութեանց համեմատ (թէև հաստատ թուեր չ'կան այժմ գորա համար) «ովորական ծռութեան մէջքը շատ յաճախ նկատուել է աղջկանց վրայ, որոնք առհասարակ տանն են մեծացած, երբէք ուսումնարաններում կամ

1) Այդպիսի պատկերների օրինակը մեր հայ ընթերցողները կարող են տեսնել պ. Մ. Միանսարեանցի «կանոնաւոր և վայելուչ գրութեան օրինակների» կողքի վերայ, ուր բաւականին ակներև ցոյց տրուած է թէ՛ ինչպէս երբոր նստողի մէջքը ջուրի նեցուկ և երբ գրասեղանը անկանոն է շինուած, նստողի ողնաշարը կ'ծռուի : Տ. ևս Բագինսկի Օ. Շ. եր. 204—206 :

պանսիօններում չեն եղած և մեծ մասով՝ ձեռագործով են զբաղուած եղելը :

Այս մտքերից յետոյ Ֆիրխովը եզրակացնում է, որ դժուար է ասել թէ՛ միմիայն ուսումնարանն է պատճառ ողնաշարի ծուռութեան տուճը, գերդաստանը գուցէ աւելի մեղաւոր են քան ուսումնարանը : Մանաւանդ որ նոյն իսկ օրթօպէդ բժիշկները իրանք էլ մասնացոյց են եղել օրիորդաց և կանանց ձեռագործի վրայ, կարելու մեքենայի և այլ այսպիսի հանդամանաց, որոնք կարող են զբլխաւոր առիթը համարուել մեքէի ծուռութեան : Ուրեմն իրողութիւնը, ըստ Ֆիրխովի, այսպէս կարելի է ներկայացնել, որ զբքերի վրայ շատ և անկանոն պարապեցնելը տղայոց աչքերին է վնասում, իսկ ձեռագործը և կարը աւելի աղջկանց մէջքին է վնասում :

Ֆիրխովը այս եզրակացութիւնը ՚ի պաշտպանութիւն ուսումնարանի՝ կրկին վիճարանութեան տեղիք տուեց : Ֆիրխովի գրուածից երեք տարի յետոյ դուրս եկաւ բժիշկ Նիլդբախի (մարմնամարզանդամուղղական աւողջարանի կառավարիչ Լայպսիկում) նստարանների վերաբերման վերջին երկրորդ ապագրութիւնը, ուր հեղինակը բացարձակ մեղադրում է զխաւորապէս ուսումնարանաց անկանոն նստարանները : Նա ասում է (եր. 15 — 16) .

Ողնաշարի էրոնիանը (ծուռ մէջքը) աղջկաների վրայ թէև սակաւ ինչ աւել է նկատուում, քան թէ տղայոց, — այնու ամենայնիւ (համեմատելով իւր ստացած թուերը) այնքան մեծ զանազանութիւն չ'կայ, որ այլ և այլ եզրակացութիւնը հանէինք, մտաւոր պատճառը թողած : Տղայոց վրայ ողնաշարի ծուռութիւնը սկզբներում շատ անգամ չի նկատուում և աչքից թողվում է, իսկ աղջկանց վրայ ամենքը իսկոյն նկատուում են . որովհետև տղայոց հագուստը սովորաբար աւելի արձակ է և մէջքը այնպէս քորակ չէ զրկում, որ ծուռութիւնը նկատուի, իսկ աղջկանցը ընդհակառակը, միջաց (տալի) դժագրութիւնը շուտ նկատուում է : Այն դէպքերում, երբ մեքէի ծուռութեան այնքան զարգացել է արդէն, որ ծնողք բժշկի են գիմում, այդ դէպքերում, արական և իգական սեռերը համարեալ հաւասար թուեր են ներկայացնում : Եթէ ՚ի նկատի առնուճք աղջկանց առաւել քնքոյշ և բարակ ոսկրային կազմութիւնը և նոյա սովորաբար տանը և աթոռին կպած լինելու կեանքը՝ ընդհակառակը՝ տղայոց ուժեղ կազմուածքը և ազատ օդում վազվզելը և խաղալը, էն ժամանակ բացատրելի կ'լինի ինչի՞ միևնոյն պատ-

ճառը աղջկանց վրայ փոքր ինչ աւելի վնասակար աղջեցութիւն ունի, քան տղայոց :

Այս իւր զիտողութեանցն աւելացնում է Նիլդբախը մի նկատողութիւն ևս՝ թէ սովորաբար օրիորդները նստարանների վրայ տեղաւորվելիս՝ իւրեանց երկար և կրկնակի փէշերքով հագուստը մի կողմ հաւաքելով են նստում : Այդ կերպ՝ հագուստը զիզուելով, մի կողմը բարձրացնում է, և նստուածքին դարձեալ ծուռ դիրք է տալի : Այս վերջին նկատողութեանը առանձին նշանակութիւն չըտալով գտնանք 17 — 18 երեսներին, ուր Նիլդբախը բերում է ծարների, Կոհնի, Բուխների, և մանաւանդ աւելի վճռողական պրօֆեսոր Հ. Մէյերի կարծիքները թէ՛ երեխայոց ծուռ մէջքը յառաջ է գալիս սխալ նստուածքի զիրքից անհանոն նստարանների վրայ, եթէ մանաւանդ գրասեղանը շատ քորք է և հետո նստարանի եզրից (առջևի ափից) : Նա համաձայնելով այն բժշկաց հետ, որք կանոնաւոր են համարում այնպիսի նստարանը, որի նստատախտակի և դրատախտակի ներսի ափերի պարապէսութեան կամ հաւասար է զըջի կամ ես ստաւէլ օդաւէտ, երբ նստատախտակի ներսի ափը կանցնի դրատախտակի ներսի ափի տակ 5 սանտիմետր դէպի յառաջ — ՚ի վերջոյ առաջարկում է Կոհնի նոր փոփոխուած նստարանը՝ իբրև զբլխաւոր միջոց աշակերտաց մէջքի ծուռութեան դէմ :

ԳԼ . Զ .

ՍԱՊԱՏՈՂԻՆ ԱԶԱԿՈՂՄԵԱՆ

Ողնաշարի ծուռութեան ինդրի մէջ մէկ բան ևս հետաքրքրական է, որ սովորական ծուռ մէքէի դէպքերում ծուռածքի ուսուցիչ մասը գէպի աջ կողմն է լինում (ստապատողին աջակողմեան) ¹⁾ : Օրթօպէդ Ագամը՝ օրինակ՝ 742 ծուռ մէքէից 619 աջակողմեան ծը-

1) Այս փաստը պատկերի վրայ տեսնել ցանկացող ընթերցողին կ'ինդրենք Պօլսոյ տիպ «Տարերք աւողջապահութեան» 1874 թ. դրքի 27—28 երեսներին ուշք դարձնել, ուր նոյնպէս ցոյց տուած է. «Ողնաշարի սիւնում» աւողջ և վնասակար դիրք (նստուածք)», եւս 44—45 երեսներին : Նոյնպէս Bagmcky- Օ. e. եր. 204, 206 և 424 :

ութիւն է նկատել: Միևնոյնը ապացուցանում են Գիլլոմի նկարած՝ գրելու զանազան անկանոն գրութիւնքը, որ ի հարկէ, ունի նշանակութիւն և կանանց ձեռագործի նկատմամբ: Այսպիսի համաձայնութիւն կամ ներդաշնակութիւն գիտողութեանց, որ բերուած են, նոյն իսկ Ֆիրխովը գրուածի մէջ, իրաւի, չէ կարելի պատահական համարել և ստիպում է ամեն քննողին և մտածողին հակել այն բժշկաց կարծիքին, որք այնպում են թէ ծանօթաց 48-իստարակէ՞ սխալ նստուածքից և անկանոն նստարաններից է յառաջ դալիս: Ի հաստատութիւն այս մտքի կարող է լինապէս ծառայել Պարովը այն գիտողութիւնը, որ 282 ծուռ մէջքից 218-ը արտաքին կամ ներքին որեւիցէ հիւանդութեան հետ ոչինչ կապ չունէին և որոնց համար միակ պատճառ մնում էր ընդունել սովորութիւն դառած սխալ նստուածքի զիրքը:

Մեր հայ ընթերցողներից շատերը հիմայ կարող են մեզ հարցնել, գուցէ ձանձրացած թէ՛ փոքր ի՞նչ մէջքի ծանօթաց ի՞նչ փնտս ունի, որ մենք այսքան երկար կանգնացնում ենք նորան այդ հարցի վերայ:

Ֆիրխովը և այլ հիւանդաբանների¹⁾ կարծիքով, ողնաշարի ծուռութիւնը առհասարակ պատահում է մարդուս ոսկրների զարգացման (մեծանալու) հասակին: Հաստատ փաստ է, որ այդ միջոցում ոսկրները զանազան փոփոխութիւնք են կրում, ուրեմն՝ ողնաշարի ամեն մի ողինը փոփոխութեանց և աճելու մէջ է: Թէ ի՞նչպէս է պատահում ոսկրների զրից փոփոխութիւնը, գորա բարակ Թէքնոթանու-Լիւնը երկար քննադատութեան նիւթեր են և զանազան կարծիքների տակ: Մեր ընթերցողները իւրեանց այսչափը պէտք է ներկայացնեն. ոսկրների աճելու ժամանակ, քնքոյշ հասակում երկխայն, եթէ օրինակ՝ երկար ժամանակներով ծուռ նստուածք ունի, մէկ-ո՞ր ծուռ զիրքից, միւս-ո՞ր մկանունքների միակողմանի ձգուելուց՝ նորա ոսկրների աճելը այն կողմը կ'հակի, ուր աւելի ձգվում են նոցա կողքերը. իսկ միւս կողքերը յետ կ'մնան զարգացման մէջ, — և այդ կերպ՝ սկսուած գաւակի ոսկրներից՝ կարող է ծուռիլ ամբողջ ողնաշարը (մէջքը, կոնակը): Բայց ո՛ւմ յայտնի չէ թէ՛ մի շինուածքի սիւնը որ փոքր ինչ ծուռ, ամբողջ շինուածքը իւր զանազան մասերում ծուռ գրութիւն կ'ստանայ. այս միևնոյնը կ'լինի

1) Patho logiste, патологъ.

և մարդուս ոսկրային կազմուածքի մէջ, երբ նորա ոսկրային սիւնը գաւակի (թասի) հետ ծուռի:

Գաւակի ոսկրների ծուռիլը ապագային թէ ինչ փնտսակար հետեանք է ունենում, մանաւանդ իգական սեռի մէջ, այդ պէտք է իմանան և ճանաչեն այն մարդիկ, որոնք մինչև հիմայ չ'գիտան թէ ծննդեան դժուար և մահաբեր դէպքերը լինում են ըստ մեծի մասին՝ ողորմելի մօր գաւակի ոսկրների վաղ ժամանակ ծուռելուց և ծնողաց կամ դաստիարակաց կողմանէ այդ հանգամանքը անուշազիր թողնելուց: Թէ՛ կուրծքի ոսկրների զրից փոփոխութիւնը ինչ փասնագաւոր հետեանքներ ունի, սեղմելով և նեղցնելով դըւլխաւոր խոռոչները, դորա համար բաւական է միտք բերենք Նիլդբախի սպիրոմետրական հետազոտութիւնքը¹⁾: Ծանօթաց տղայոց (13 — 17 տարեկան հասակում) շնչառութեան մեծութիւնը կամ չափը երբորք մտով և երբեմն Կէս մտով պակասում էր, համեմատելով բարեկազմ վանդակ ունեցողների հետ: Ախով չափ պակաս շնչառութիւն: Այդպիսի կազմուածքները չե՞ն, որ սովորաբար լինում են վարսաւոյճ, վարսակոյճ, ջղայն և այլն և այլն, որոնցից շատը այժմ պատահում են ուսումնականաց մէջ և առողջապահութեան ուշք չըգարձնող ուսումնականաց մէջ . . .

Այս մասնաւոր հարցի վերաբերութեամբ ամենից շատ նշանակութիւն ունի արդարամիտ և շրջանայեաց պ. Մայերի եզրակացութիւնը, որը բարակ կերպիւ քննելով նստուածքի մեքենական հիմունքը, պարզ կերպիւ յայտնած է վաղուց և հաստատած վերը յիշուած շատ մի բժշկաց այն կարծիքը թէ՛ նստարանների գրատախտակի հետ ոխութիւնը և բարձրութիւնը նստատախտակից, կանոնաւոր (յենարան) մէջ և, ի հարկաւոր դէպս, պատուանդան չունենալը՝ ստիպում է երեխին գրելու ժամանակ Բնադրութեար վրայ ընկած ոչ ոսր բարձրացնել, գլուխը դէպի չախ ծուռ զրչի գնացքին կամ շարժմանը աչքերով հետեւելու, և այլ ուրիշ շատ բարակ հաշուած հանգամանքներ, որոնցով երեխեն պէտք է ծուռ իւր ողնաշարը: Այդ պատճառով

1) Սպիրոմետրը այնպիսի մի գործիք է, որով չափում են մարդու շնչառութեան ժամանակ գործածած օդի քանակութիւնը, ուրեմն թոքերի ծաւալն ու բովանդակութիւնը: Ընթերցողը այս մասին կանոնաւոր քանի մի գիտողութիւն, բայց պատկերներով, կարող է տեսնել Պօլսոյ տիպ «Տարեք առողջապահութեան» մէջ, 1874 թ. եր 122

նա էլ պահանջում է ուսումնարաններում նստարանների փոփոխութիւն :

Նորա, Ֆիրխովի և բոլոր այն բժիշկների հետ, որք այդ հարցով փոքր ՚ի շատե պարսպել են, իրաւունք ունինք ուրեմն՝ այդ բոլոր փաստերի հիմանց վերայ, պահանջել մեր ուսումնարան կառավարողներից կանոնաւոր նստարաններ ամեն տեղ մտցնել վարժապետներից, որ աշակերտաց անկաւս նստուածքի վրայ միշտ ուշադիր լինեն և ծիծաղելն չհամարեն այն խրատը թէ՛ պէտք է դասաւանդութեան ժամանակ՝ զանազան շարժումներով կամ մարմնամարզութեամբ երեխի յոգնած անդամներին իւրեանց պատկանեալ դրութիւնը և հանգիստը տալ :

ԳԼ. Է.

ԿՈՒՐԾԻԹ (ՎԱՆԳԱԿԻ) ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՏԿԱՐՈՒԹԻՒՆԻ. ԽՈՒՂԱՍՏ

Ուսումնարանը՝ աշակերտաց շնչառութեան գործարանների արկարութեանց ևս պատճառ համարուած է, և մանաւանդ բարակացաւի (թոքախտի) . գորանցից յառաջ դեռ յիշենք Խոլերայի (զօլտուխը, սկրօֆիւլը) : Բժ. Կարմիրայէլը պատմում է թէ՛ մի ծըխական դպրոց մի սենեակից էր բաղկացած, ո՛չ բակ ունէր, ո՛չ յարմար տեղ աշակերտաց խաղալու համար . երեխայքը համարեա ամբողջ օրը ստիպուած էին դաստան մէջ անցկացնել, պարսպել և խաղալ : Տղայոցը և աղջկանց քննելով, որ ընդամենը 24 էին, բըժիշկը գտաւ բոլորին ախտացած խուլխտով : Մանրամասն հարցուփորձը ասպարուցել էր, որ երեխայքը ուսումնարան գնալուց յառաջ միանգամայն առողջ էին : Արնօլդ բժիշկը մի արական մեծ ուսումնարան (Նօրվօօդի մէջ) քննելիս շատ զարմանքով գտաւ 600 խուլխտով հիւանդ, և մահուան դէպքերն էլ ո՛չ հազիւ այդ ուսումնարանի աշակերտաց մէջ : Նրկար ժամանակ այդ իրողութեանց պատճառը համարվումէր աշակերտաց վատ սնունդը : Յետոյ իմացուեցաւ, որ ընդհակառակը՝ օդամաքրութեան պահանջները չկատարուելուց էր այդ բանը : Եւ երբ կանոնաւոր հողմարաններ (վենտիլատոր) շինուեցան բոլոր դասարաններում, և երեխայոց աղատ և մաքուր օդ ծծելուն հոգ տարուեցաւ, ուսումնարանից շուտով

վերացաւ հիւանդութիւնը : Թէև ուրիշ բժիշկներ ևս այսպիսի շատ օրինակներ բերած են, բայց Ֆիրխովի կարծիքով դարձեալ բաւականացուցիչ չ'են, որովհետև ճիշտ վիճակագրական հիմք չ'ունին :

Միայն Բարոնիցոսի¹⁾ մասին կան քանի մի վիճակագրական տեղեկութիւնք, որոնք պարտք ենք համարում այստեղ կարճաօտ յառաջ բերել :

Դօկա Էնգելը՝ հետազօտելով Բերլինի ուսումնարանները, հաւաքելով բաւականին թուեր, եկաւ այն եզրակացութեան թէ՛ ամենից շատ մահուան դէպքեր աշակերտաց մէջ ուսումնարան յաճախած տարիքում պատահել են Լոպտիցի և շնչափողի յարստ Բոր-Բորոմից : Նորա բերած թուերին համեմատ, այդ հիւանդութեանց մահաբեր դէպքերը դեռ սակաւ են երեխայոց մէջ մինչ 10 տարեկան հասակը, իսկ 10—15 տարեկան հասակում թիւը բարձրանում է (12, 96% մահ), բայց զարմանալի մեծանում 15—20 տարեկան հասակում (31, 88% մահ) :

Ի հարկէ, այդչափ մահուան դէպքերը՝ բոլորը չէ կարելի տալ ուսումնարանին, անշուշտ՝ երեխայի անսկան կեանքի և ժառանգականութեան պայմանները անմաս չեն մնում այդ բանի մէջ : Այնու ամենայնիւ, այս իրողութիւնը պէտք է ի նկատի ունենալ ո՛ւմ հարկն է, թէ՛ անկարգ ուսումնարանը ունի՝ հանգամանքներ, որ կարող են այդ տեսակ հիւանդութեանց և նոյն իսկ մահուան պատճառ դառնալ : Այդ վնասակար հանգամանքներից հաշվում է Ֆիրխովը հետեւեալը :

- 1) Բաղմաթիւ աշակերտաց արտաշնչութիւնից անպիտանացած, անմաքուր և երբեմն ապականած օդը :
- 2) Ուսումնարանաց անկանոն և անյարմար շէնքը, որով երեխայք շատ անգամ տաք դասատուներ թողնելով՝ ստիպուած են ուղղակի ցուրտ և սառը օդի մէջ դուրս գալ խաղալու կամ մանդալու ժամանակ : Այսպիսի ուսումնարանաց պատուհաններից և դռներից էլ սովորաբար թափանցիկ²⁾ օդ է՝ անցկենում և օդի այսպիսի փոփոխութիւնքն են, որ մրսացնում են երեխին և ըստ մեծի մասին պատճառում շնչափողի բորբոքում և կործախ հիւանդութիւնք :
- 3) Աղտոտ և անմաքուր պահուած դասատուների փոշին,

1) Թոքախտ, չիխտիկայի
2) Luftzug. сквозной вѣтеръ, vent coulis.

որ ևս առաւել օրի մէջ կանգնում է, երբ թոյլ է տրվում շատ վաղ-
վաղել դասատան մէջ առանց ջրջնդերու (ջուր շաղ տալու) :

4) Երկարատե և անկանոն նստուածքից՝ աշակերտաց շնչառու-
թեան փոքր ինչ դժուարանալը կամ անկանոնութիւնը:

ԳԼ . Ը .

ԲՍՐԱԿԱՑԱԻ ՆԻ ԹՈՒԳԱԽՏ:

Բարակացաւը, (վերէմ, հալումաշ) -- մեր ժողովրդի մէջ յայտ-
նի է արդէն իբրև զարհուրելի անբուժելի մի հիւանդութիւն, որ
վաղ թէ ուշ, բայց փոքր ժամանակում, հիւանդին պիտի զերեզման
տանի: Այս ընդհանուր զաղափարը նոյն իսկ բժիշկներէն է անցել
ժողովրդի մէջ և մինչև հիմայ էլ տեսակ մի բժիշկներ այդ անորոշ
և մութ զաղափարը չեն կամենում պարզել ժողովրդին, որովհետև
«ԲՔիւի» կամ «չեխոպի» խօսքը բժշկին շատ զլրացաւանքից կարող
է փրկել:

Այժմեան հիւանդադիտաց կարծիքը այդ մասին հետեւեալն է
համառօտապէս. բարակացաւը (հասկանալով այդ խօսքով բժշկաց
«բո-բէրչու-լո» բառը) ճշմարիտ, որ ահալի և մահաբեր հիւանդու-
թիւն է, և կարելի է ասել ամբողջ կազմուածքի հիւանդութիւն է,
և ո՛չ միայն թոքերի: Սակայն պէտք է իմանալ, որ այդ հիւան-
դութիւնը այնքան ստէպ չէ պատահում, որքան ժողովուրդը այդ
կարծում է: Այս տեսակ բարակացաւ բո-բէրչու-լո բառ մեծի մա-
սին յառաջ է դալի ժառանգական հիւանդութիւնից և տրամադր-
ութիւնից, կազմուածքի անորոշ անպատմելի խանգարուելուց թէ՛
անպիտան կերակրներից, թէ՛ ջրերի յարատե շատ ընկճած դրու-
թիւնից (մեծամեծ դարբ, վերէ՛ և այլն). և վերջի ժամանակները
բժիշկները դարձեալ ի պատճառ սկսել են համարելու երեխանց
խուլութաը (ջրջուկի և այլ ձևերով), որ յառաջացնելով մարմնի
զանազան տեղերում ժահու և հնամարտ հասանում է վերջը թոքերին:

Պորա հակառակ՝ չեխոպի կամ բարակացաւ կոչվում են ժողո-
վրդի մէջ, և դեռ ևս բժիշկներից, Լոպէրի սովորական հիւանդութիւնը
(Լոպսիս), որ բոլորովին կարող են մահացու չլինել և որոնցից հի-
ւանդը կարող է ազատուիլ: Այդպիսի Լոպսիսը (թոքերի յարատե

բորբոքումը) կարող է յառաջ գալ շատ հասարակ պատճառներից.
օրինակ՝ եթէ քթի հարբուխ ունի և ո՛չ որ ուշք չի դարձ-
նում այդ բանին, հարբուխը տարածվում է փոքր առ փոքր կոկոր-
դի և շնչափողի վրայ, այնտեղից էլ իջնում է և տարածվում թո-
քերի բարակ մասերում. այդ կերպ՝ երեխի թոքերը լքցվում են
հարբուխի հիւթերով: Հազը որքան կարող է այդ աւելորդ և վը-
նասակար հիւթերը դուրս է հանում և եթէ դարձեալ հիւանդի
վրայ անուշադիր են մնում և թողնում են հարբուխը յարատեւելու
(շատ երկար քաշելու). այն ժամանակ հարբուխի հիւթերը թոքե-
րի մէջ սակաւ առ սակաւ ժահր դառնալով և թոքերը
մաշելով կարող են մահ պատճառել: Այս տեսակ բարակացաւը մի-
միայն Լոպսի հիւանդութիւն է և յառաջ է դալի հրեշտայ, թողոտ
տեղեր երկար մնալուց, զրգուիչ թամբաբուի ծուխը երկար գործա-
ծելուց և այլ այս տեսակ շատ հասարակ պատճառներից, որոնց
հեռացնելը մարդս միշտ կարող է: Այս պատճառներին եթէ աւե-
լանում է կուրծքի միշտ սղմուած լինիլը և նորա անկանոն շարժո-
ղութիւնը, այն ժամանակ տարեց տարի յարատեւելով և չբժշկը-
վելով՝ մենք ստանում ենք թոքախտի վերջին աստիճանները, երբ
արդէն թոքերը քայքայվում են: Այս դէպքերը նմանութիւն են
բերում վերը յիշած Բարակացաւ-բո-բէրչու-լո նա և շատերը էդ պատ-
ճառով շփոթում են այդ երկու բանը, որ բոլորովին զանազան են:

1) Բարակացաւ-բո-բէրչու-լո բառ մեծի մասին ժառանգական և ան-
բուժելի հիւանդութիւն է, և համեմատաբար հազիւ է պատահում
բարեխառն երկրներում:

2) Իսկ Լոպսիսը թեթև և բուժելի հիւանդութիւն է, եթէ
իւր ժամանակին հեռացնենք թոքերից և շնչառութիւնից վնասակար
ազդեցութիւնը:

Այս փոքր հայեացքը ձգելով բարակացաւի նշանակութեանց
զանազանութեան վրայ, մի՞թէ ամեն բարեխոհ մտածող մարդ չը-
պէտք է համոզուի թէ՛ անկարգ, անկանոն շնչուած ուսումնարան-
ները իւրեանց թողոտ և մրսեցնող դասատներով, իւրեանց սպա-
կանեալ օդով՝ կարող են Ռեծամեծ վնասեր ծնուցանել սպառնալի սերնդի
մէջ միշտ Լոպսիսի հիմունք դնելով, որ սկզբից ահալի չեն և դիւ-
րութեամբ հեռացվել կարող են:

Արդարև պէտք է խոտովանիլ (որքան էլ հաստատ թուեր չու-
նենանք), որ երեխայոց մէջ ամենից շատ հաւ և բժի (կոկորդի) յու-
ստանում են ուսումնարան գնացողները: Դաղղիացի Վերնուան (Etat
5

hygiénique des lice'es de l'empire 1857 — 8. Paris p. 20) յայտնում է, որ գաղղեացուց ուսումնարաններում ամենից շատ տարածուած է բէի և շնչափոշի հարբուխը :

Եթէ աշակերտը թոյլ կազմուածք ունի և տրամադրութիւն, այդ հարբուխները նորան կարող են զոհ շինել ապագայ թոքախտի, եթէ այդ բանի յառաջը չբռնուի իւր ժամանակին, ուսումնարանի շէնքը և օդամաքութեան վիճակը բարեկարգելով, աշակերտաց տարուայ եղանակին համեմատ, ոչ թանգ, բայց յարմար հազուատին հոգ տանելով և այլ վերը յիշած հանգամանքներից խուսափելով :

ԳԼ. Թ.

ՓՈՐԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՅ ՀԻՒԱՆԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Փորակապուկեան ¹⁾ և պետտետուլեան ²⁾ մասին թէև շատ անգամ կրկնուած է թէ ուսումնարանի անառողջ հանգամանքներից աշակերտաց մէջ յառաջ են գալի, սակայն դորա համար ճիշտ քննութիւնք չ'կան :

Այդ երկու հիւանդութիւնքը իրար հետ շատ սերտ կապ ունին, և որովհետև մեր ժողովրդի մէջ «մայասուլը, բարասիլը» շատ մեծ և զանազան նշանակութիւն է ստացել, աւելորդ չի լինիլ այստեղ մի երկու խօսքով բացատրել թէ ի՞նչ է «մայասուլը» և ի՞նչ կապ ունի փորակապուկեան հետ :

«Մայասուլը» ճշգրտութեամբ կոչվում են այն փոքրիկ ուռուցանքները նստատեղի բոցաբոցի շուրջը, որոնք յառաջ են գալի այդ տեղի արեան երակների լայնանալուց և ուռչելուց: Ի՞նչուց կարող են ուռչել այդ երակները: Ահա պատճառը մի օրինակով: Յայտնի է թէ արիւնը անդադար չըջում է մարմնի զանազան անդամներում և մաս սերում: Մի տեղում, որ արեան շրջանը փոքր ի շատէ արգելվում է և դժուարանում է արեան վերադարձը դէպի սիրտը, այն տե-

1) խցումն, փակութիւն, запоръ. Չէպդ:
2) Մայասուլ, բարասիլ, геморрой, hemorrhoides.

ղում արեան երակները լքցվում են և ուռչում: Հիմայ երեակայինք թէ՛ անմարս և վատ կերակրներից կամ նստական կեանքից աղէքի ներքևի բաժինը ամեն անգամ անկանոն կատարում է իւր գործը. այդ պատճառով աղէքի նշանակալ այդ մասերում կարող է պարսպալ աստուալ և այդ կերպ ահա յառաջ է գալի փորակապուկութիւն: Միւս կողմից պէտք է հասկանանք, որ պնդացած նշանակալ սեղմելով փորուտեաց ներքևի բաժնի երակները, պէտք է արեան դարձը մարդու յետի կողմերից դէպի փորը փոքր ինչ արգելի, եւ պատճառով յետի կողմի երակները արիւնով կ'լքցուին և կ'ուռչին և երբեմն դուրս գալու ժամանակ պրիստիստիստ ևս կ'լինի. ահա այս է հոցապուլը: Ընթերցողը հիմայ կարող է հասկանալ ա) թէ ճշմարիտ փորակապուկեան և մայասուլը մէջ մեծ կապ կայ, բ) թէ «մայասուլը» էնպիսի բան չէ, որ «բոց» ունենայ, «մարդուս բուզն ընկնի», չըգիտեմ՝ «աչքերն ընկնի», ինչպէս մեր ժողովրդի մէջ զործ են ածում այդ խօսքերը զանազան պատու հեգիներէ և ջատակներէ շնորհիւ:

Թէ՛ յարատե նստողական կեանքը այդ տեսակ փորակապուկութիւն է պատճառում, անդառութեանը վնասում և դորանից հոցապուլ է յառաջ գալի, այդ ճշմարիտ է և դիտուած է այն ուսումնարանաց վրայ, որք ամբողջ օրերը նստած՝ զրքերի մէջ մըքլում են: Բայց այդ չէ նշանակում թէ ուսումնարանին կարելի է մեղադրել այդ բանում, եթէ քանի մի ուսումնական և առհասարակ նստական կեանք վարողները այդպէս են:

Մարսողական գործարանների վերաբերութեամբ առ հասարակ ուսումնարանին հետեւեալ փաստերով միայն կարելի է զգուշացնել: Ամենին յայտնի է, որ երբ աշակերտները ստիպուած են իւրեանց ժամանակը համարեա անընդհատ ուսումնարանում անցկացնել, առաւօտից մինչև կէսօր և մէկից մինչև 5 — 6 ժամը, — նրանք սկսում են՝ ճաշին տուն գալիս՝ շատ սակաւ ուտել, մտածում են շուտով ուսումնարան վաղելու և երեկոներն էլ կերածի վրայ էնպէս ուշադրութիւն չեն դարձնում, կ'ասես թէ՛ էլ առաջուայ ակտիւակը չունեն, կորցրել են: Կերակուրը շուտ-շուտ նոցա ստամոքսում քացխում է, սորանից յառաջ է գալի անկանոն մարսողութիւն, անկանոն արտաքնոց (ոտաց ճանապարհ) գնալ, երեխայոց այտերը կորցնում են քիչ-քիչ իրանց սովորական թարմ վարդի գոյնը (արիւնը պակասով է կազմվում), նոքա սկսում են լզարիլ, զգում են անդամների թուլութիւն, տխրութիւն և այլն:

Այսպիսով բժշկ Գասար¹⁾ այս հետեւանքները շատ մանրամասն նկարագրել է ժողովրդական դպրոցները մեղադրելով: Իսկ մենք այդ հետեւանքները առաւել մեր գիտնող իծնէրո՞՞մ ենք նկատել, քանզ թէ մեր սկզբնական դպրոցներում: Եղ պատճառով՝ մեր դիմնադիմներում ճաշից յետոյ դասեր աւելացնելուն և մեր երեխայոց մտաւոր ո՛ւժերը չափից դուրս բեռնաւորելուն չէ կարելի համակրել: Իսկ մեր ծխական դպրոցաց կառավարիչներին կարելի է խորհուրդ տալ ճաշից յետոյ մի փոքր ուշ սկսել դասերը և գոնեա 2 - 3 ժամ թոյլ տալ երեխայոց մնալ տանը ճաշից յետոյ:

ԳԼ. Ժ.

ՍԵՌԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՏԿԱՐՈՒԹԻՒՆՔ

Աշակերտելոց սեռական անդամների այս և այն անկանոն գրգռմանց վատ հետեւանքներին ուշադրութիւն դարձրած է նոյն բժ. Գասար վերը յիշած իւր գրուածի մէջ:

Այդպիսի գրգռմանց պատճառ մի կողմից՝ թէև կարող են համարուել դասատներում երկար և անկանոն նստելը, նստատեղի կողմերի տաքանալը, ուղեղին աշխատեցնել և ձանձրացնելը (անկանոն, անմարս դաղափարներով՝ նորան մտածողութեան գրաւիչ նիւթ չտալով), փորի խցանքը (փակութիւնը) — որից կարող է յառաջ գալ արեան յորդ հոսումն դէպի սեռական անդամները: Մանաւանդ մեղադրում են այդ պատճառներով գիշերթիկ տղայոց ուսումնարանները և օրիորդաց պանսիօնները:

Միւս կողմից, պէտք է խոստովանինք նախ՝ որ ճիշդ վիճակագրական թուեր չունենք այդ պատճառների մասին, երկրորդ՝ որ եթէ սովորական շրջահայեաց գիտողութեանց նայելու լինինք, այն ժամանակ գուցէ այդ հարցի մէջ ուսումնարանին այնքան չմեղադրենք, այլ զխաւոր դերը տանք շրջապատող կեանքի վրա օրինակին:

Եւ իրաւի, եթէ մի ժողովուրդ բարոյապէս ստոր դրութեան

1) Բժշկական առաջարկութիւնք ժողովրդական դպրոցաց վերաբերողութեան համար, 1863 թ, եր. 7.

մէջ գտնվող ազգերով է շրջապատուած, իւր մէջ երկու սեռերի անբնական, անկանոն և անհաւասար ընտանեկան և հասարակական յարաբերութիւններից, բարքը ապականել է՝ — մի՞թէ այդ ապականութիւնը բնականաբար չէ փոխադրվել փոքր ի շատէ և ուսումնարանին: Եթէ մեր գերդաստանների մէջ ամենևին ուշք չեն դարձնում, թէ ի՞նչ բան կարելի է խօսել և կատարել երեխայոց մօտ, ի՞նչ բան մեղք է անգամ երեխայի ականջը հասցնել. եթէ մեր գերդաստանների մէջ սովորութիւն չէ դառել երեխաների և պատանիների ննջարանները առանձին յարմարաւոր կերպով կարգաւորելու, խուսափելով զանազան տաքացնող և գրգռող անկողններից «հորթիներէ», այլ սովորաբար նոցա քնացնում են ամուսնացեալների ննջարաններում իրար մօտ վեր թափած, — մի՞թէ պատանիք այդպիսի գերդաստաններից վատ օրինակներ չպիտի դուրս տանեն և ուսումնարանին հաղորդեն:

Եթէ մի ժողովրդի սեռական օրինաւոր յարաբերութեանց անբաւարար և անյարմար դասաւորվելուց նոյն իսկ հասակաւորք անգամ չըվախենալով Աստրծուց և չամաչելով մարդկանցից ձգտում են ուսումնարաններից 12 — 13 տարեկան տղայք որսալ իւրեանց վաճառութեան համար, — եթէ վերջապէս մի ժողովրդի հասարակ խօսակցութիւնն անգամ սեռական անդամների վերաբերեալ յիշանելով և բացազանչութիւններով լիքն է, որ երեխէն ամեն րոպէ լուծ է և ինքն էլ դործածում նոյն խօսքերը, մի՞թէ այնուհետև որ և իցէ իրաւունք կ'մնայ միայն ուսումնարանին մեղադրելու

Թէ առհասարակ արուագիտութիւնը ի՞նչ կերպ կարող է յառաջ գալ կենդանեաց և մարդոց ցեղերում, թէ ի՞նչ հետեւանքներ կարող է ունենալ ուսումնարանի աշակերտաց մէջ, այդ հետեւանքները կազմուածքի (սեռական անդ.) արտաքին փոփոխութիւններից են, թէ՞ դեռահաս աշակերտելոց բարոյականութիւնը խախտելուց, — թէ՞ ճանաչողականութիւնը երբ կարող է այն զարհուրելի հետեւանքներին հասցնել, որք նկարագրվում են երբեմն մեծ անզգուշութեամբ զանազան ժողովրդական գրքերի մէջ, — այս հարցերի մանրամասն քննութիւնը առանձին տետրակի բաներ են և այստեղ այդ մասին երկարելը անյարմար է: Միայն աւելորդ չիլինիլ, հետեւելով Ֆիրխովին բերել հետեւեալը աշակերտուհի օրիորդաց նկատմամբ:

Ինչհանրապէս շատ և շատ հոգսերի կարօտ է օրիորդաց այն ժամանակը, երբ նոր, առաջին անգամը, պիտի երևին նոցա ահաւանքները (լուսինը): Այդ միջոցում ահա՛ թէ՛ գերդաստանը և թէ՛

ուսումնարանը՝ խոհեմ, հասկացող մայրերի և վերակացուհիների ձեռքով մատակարարուած՝ փորձնական խորհրդով և առողջապահական խրատներով (մանաւանդ չմոռացուին՝ դոլ ջրերով ընդհանուր վաննաներ շարաթը մի երկու անգամ), պէտք է օգնեն խեղճ օրիորդներին, վերջինքս այդ միջոցին ներքին մութ զգացմանց տակ ենթակայ են զանազան գայթակղութեանց :

Ահա՛ այդ կարճ միջոցի առանձին հոգատարութիւնը կարող է բարեբաղդ և աղնուաբարոյ հետեանքներ ունենալ օրիորդաց կըրթութեան մէջ և ժողովրդի հաւատարմութիւնը դէպի աղջկանց ուսումը շատ և շատ աւելացնել :

Այն դէպքերում, երբ ծանականութիւնը աշակերտեւոց մէջ յառաջ է գալի ուսումնարանից, այսինքն ընկերների վատ օրինակից ու վարժապետաց անուշադրութիւնից, — այդ անպատահութեան յառաջն առնելու համար կարճաժամ կերպով բերենք այստեղ հետեւեալ խրատներն ևս, օգուտ քաղելով մասամբ Բաղինակու «Ուսումնարանական առողջապահութիւն» վերնագրով գրքից :

Աշակերտները դաստան մէջ երբէք չպէտք է իրարու շատ սեղմուած նստին: Գասաւանդութիւնը չպէտք է լինի ձանձրացող և թմրացող, այն աշակերտները, որոնք յօրանջել սկսում են, պէտք է իսկոյն ուսուցչի ուշադրութիւնը իրանց վերայ գրաւեն — նոցա կանգնացնել, նոցա հետ խօսել և այլն. եթէ շատերի վերայ ձանձրութիւն նկատվում է, իսկոյն ընդհատել մի 2 ըրպէով դասախօսութիւնը թեթեւ մարմնամարդութեամբ :

Մնաւ ժամանակ, ուր՝ գետ կայ, աշակերտները կանոնաւոր հրակողութեան տակ պէտք է շարաթը դէթ մի 2 անգամ սառը ջրում լուացուին և լողալ սովորեն:

Ուսումնարանի վերակացուն իւր համար անպատվութիւն չը պէտք է համարէ, այլ՝ ընդհակառակը իւր իսկական պարտք՝ հսկել պատահանքներին, որ երկու աշակերտ միասին փակ արտաքնոց չմննեն և այլն: Վարժապետները պիտի պահանջեն, որ դասի ժամանակ զուրս դնացող աշակերտը շատ շուտով վերադառնայ:

Մենհամեստ, տգեղ և խայտառակ յիշոցների գործածումը աշակերտաց մէջ իւրաքանչիւր վարժապետ պիտի աշխատի արմատախիլ անել՝ իրբե նշան վերին աստիճանի գոհակութեան: Այնպիսի աշակերտը, որ չ'նայելով կրկնակի ազգարարութեանց չի զգուշանում, և միևնոյն ժամանակ գոյնազոյն է իւր վատ օրինակով՝

ծանականութեան սովորութեամբ, պէտք է վերջապէս հեռացուի ուսումնարանից:

Պնանականութեան տարածման առաջն առնելու համար մանաւանդ շատ ուշադիր պէտք է լինեն պահիճ կառավարողները. չափից դուրս գրգռել կերակուր (համեմեղէնք) չմատակարարեն. աշակերտաց փոխաշորին ուշք դարձնեն, որ նոքա սեռական անդամները չգրգռեն, մաքրութիւն պահանջուի ամեն քաղափոխում. պէտք է խելացի կերպով զգուշացնեն աշակերտներին այն վեպասանութիւններից, որ կասես թէ՛ գրվում են՝ մարդկանց երեակայութիւնը և սեռական բնազդութիւնը աւելորդ կերպով զարթեցնելու համար... Ահա՛ այսպիսի խրատների ո՛ր ուշադրութիւն դարձուի դաստիարակութեան գործի մէջ զեկավարութիւն վերցնողների կողմից, էլ չի պիտի կրկնուին այն այլանդակ և անպատմելի երեւոյթները. օրինակ՝ Լազարեանց ճեմարանի պանսիօնում, Թիֆլիզի գիմնազիճնի պանսիօնում, իգական ինստիտուտում, Եջմիածնայ նախկին ուսումնարանում, Ներսիսեան դպրոցում: Այդ զարհուրելի երեւոյթների պատմութեանց հիման վերայ մարդ պիտի կարծէ թէ՛ նոյն իսկ ուսումնարանը իրանք երբեմն աշխատում էին այդ հաստատութիւնը սեռական մարութեանց բուն շինել և էպիդեմիա տարածել ժողովրդի մէջ, վերադարձնելով ժողովրդին կրկնապատկուած այն, ինչ որ մասամբ նորանից փոխ էր առնում ուսումնարանը — ցաւալի փոխադարձութիւն

ԳԼ. ԺԱ.

ՓՈՒԱԴՐԱԿԱՆ ՀԻՒՆԴՈՒԹԻՒՆՔ

Հասարակ կարմրուկը (корь, la rougeole) և շտապոյն կարմրուկը (սկարլատին) յայտնի է, որ փոխադրական հիւանդութիւնք են մանուկների մէջ:

Պատահել է շատ անգամ, որ այդ հիւանդութիւններով վարակուած երեխայք, տգէտ ծնողաց կամ ուսուցչաց անհոգութիւնից՝ այդ հիւանդութիւնքը տարածել են ուսումնարանի մէջ, ուսումնարանի միջոցով ամբողջ քաղաքի մէջ: Կարմրուկը միշտ սկսվում է

քթի հարբուխով և աչքերի կարմրելով, որ շարունակվում են (դեռ մորթի վրայ կարմրուկը չ'երևցած)։ ահա՛ այդ սկզբնական շրջանում կարմրուկը փոխադրվում է ուրիշներին, և այդ միջոցին պէտք է զատել հիւանդ երեխին՝ միւսներից։ Շառագոյն կարմրուկը (սկարլատինը) յայտնի է, որ ամենից շատ փոխադրվում է այն ժամանակ, երբ շրջապատողները համարում են հիւանդին առողջացած. այսինքն երբ առողջանալու վրայ եղող երեխի մորթի թեփը բարակ կերպիւ վար է դալել կամ խտակվում է մորթը։ Ահա այդ միջոցներին պէտք է զգուշանալ երեխանց դուրս հանել և ուսումնարան ղրկել։

Պէտք է խոստովանել ևս որ ճառչապուր (խօլերա), ծաղիկը (օսպա), շնչարգէլ հաղը (կօկլիւշ) և կրոպուլ բեֆէլէրիսը ¹⁾ — այս բոլոր ահալեցաւերը անկարգ և անկանոն ուսումնարանների միջոցով մեծ տարածականութիւն են ստացել և էպիդեմիէն (ժամտախտը) սաստկացրել։ Այդ միւսները չի կարելի ասել և հաստատել վարցաւքի (տեֆէ) և թանչքի (դիզենտերի, ջանսի-բժեպ) մասին, որք ուսումնարանաց հետ շատ սակաւ կապ ունին։ Թէև բերուած են մի երկու օրինակ, երբ ուսումնարանի խմելու ջուրը աղտոտ տեղերից բերվելով, ուսումնարանի միջից վարցաւքի (տիֆի) էպիդեմիա է յառաջացել։ Բայց այնու ամենայնիւ դա շատ բացառական դէպք է, և այն էլ պատահել է զիշերօթիկ ուսումնարաններում, ուր աշակերտները փակուած, միւսներին վատ պայմանների մէջ՝ (անմաքուր օդ, վատ և անբաւարար սնունդ և կեղտոտ արտաքնոյններ) մնացել են երկար ժամանակներով։

Մորթի փոխադրական հիւանդութեանց և զանազան ուտիշներին (պարադէտների) ուսումնարանի միջոցով տարածուիլը շատերին, նոյն իսկ ժողովրդի մէջ յայտնի փաստ է։ Մանաւանդ մեր փոքր քաղաքների ուսումնարանաց աշակերտների վրայ ո՛չ հազիւ կարելի է նկատել՝ քոս, քոբ, շատ յաճախ — ֆոնջ (քաչալ), վապ ոջի։

1) Այս մահաբեր ցաւը սկսվում է բզի ուռոցքով, որը շարունակվում է ներքեւ կոկորդի և շնչափողի վրայ, սկսում է խեղդել երեխին։ Սաստիկ եղած ժամանակ՝ անդամալուծութիւնք ևս պատճառում է։ Այս տեսակ հիւանդութեանց տարածման ժամանակ, երեխանց ցրուիլը փակ ուսումնարանից, դուրս տանելը սարտ տեղեր՝ մաքուր օդ ծծելու. բամբակից շինած «պահպանիչներ» (բերանը և քթի ծակերը պահող) երեխանց վրդերը սառը ջրերին սովորացնելը — սոքա են համարվում հնարք փոքր ինչ։

Ջարմանք է, որ մինչև հիմայ կանոնաւոր կարգադրութիւնք չ'կան ժողովրդական ուսումնարաններում այդպիսի փոխադրական կամ վարակիչ ախտերը ուսումնարանից հեռու պահելու։ Մեր մէջ ծրնողք շատ անգամ զարմանում են և նեղանում անգամ, որ իրանց դոնջոտ կամ քոսոտ աղին հոգաբարձուք կամ վարժապետք տուն են վերադարձնում, որ բժշկուի, յետոյ ուսումնարան յաճախէ՛...։

ԳԼ. ԺԲ.

Ծ Ա Ղ Կ Ի Պ Ա Տ Ո Ի Ա Ս Տ Ո Ի Մ Ն

Փոխադրական և վարակիչ հիւանդութեանց զլիաւորներից փոքր ինչ քննութեան տակ առնենք նախ ծաղիկը, որի կտրելուն կամ պատուաստելուն դեռ լիովին ընտելացած չէ մեր ժողովուրդը, և որը երբեմն կրկին պէտք է պատուաստվի ուսումնարանում, եթէ վերջինքը ծաղիկի պարստածան (էպիդեմիայի) պատճառ չ'ուզենան լինել։

I

Սերջի ժամանակներս ծաղիկի պատուաստելու դէմ քանի մի զրուածներ ¹⁾ դուրս եկան, որք ապացուցանում են թէ ծաղիկի կորելը երեխայոց մէջ աւելի վատթար հիւանդութիւններ է տարածում, քան թէ օգուտ բերում, բայց այդ կարծիքները ծայրայեղ են և միայն մասնաւոր փաստերի վրայ հիմնուած։

Բնդհակառակը՝ հասկացող ծնողք և ուսուցիչք պիտի տարածեն թէ՛ քաղաքներում թէ՛ մեր գիւղերում մանաւանդ՝ այն ճշմարիտ միտքը, թէ՛ ծաղիկի կորելը հաղորտորներին փրկում է վաղաժամ մահից։ (տ. Nutzen und Schaden der Schutzpocken-ympfung. v. Prof R. Demme Bern 1878.)

1) Մատնացոյց լինենք հակառակորդներից զլիաւորապէս՝ Լայպցիգի պրօֆ. Germann-ի 3 հատ. գրքին, Hisforisch-krtische Studien über den Jetzigen Stand „der Jmpfrage“ Leipz. 1875. պրօֆ. Рудневъ-ի յօդուածներին իւր հրատարակած ամսագրի մէջ „Журналь паталогіи и анатоміи и пр.“ за 1876/77 г.

Այս բանի ապացուցութեան համար բաւական են հետեւեալ թուերը :

Ուսումնասիրելով ծաղկի պատուաստելը դեռ լիակատար կանոնաւորուած և պարտաւորիչ չէ : Ուսական պաշտօնական վիճակագրական տեղեկութիւններից յայտնի է, որ ծաղկից մեռնողների թիւը երբեմն հասել է տարեկան մինչև 10 հազարը. այն ինչ միւս եւրոպական տէրութեանց մէջ, ուր ո՛ր ծաղկահասարակեանք շատ կանոնաւորուած է և պարտաւորիչ իւրաքանչիւր բնակչի համար (Պրուսիա, Բավարիա), համեմատելով ժողովրդի քանակութեան հետ, ծաղկից մեռնողների թիւը վերը բերած թուից 15 — 20 անգամ պակաս է :

1871 թ. ծաղկի էպիդեմիայի (տարածման) ժամանակ Վիեննայում սրտօժիտ. Հերբայի դիտողութիւններից բերենք հետեւեալը : Այն հիւանդներից, որոնց ծաղիկը յառաջ կտրուած էր՝ մեռել են հարիւրից միայն 8 մարդ, իսկ որոնցը չէր կտրուած՝ — հարիւրից 52 մարդ :

Այս փաստերից յետոյ մեր ուսումնասիրաններին ահա՛ ի՛նչ է հարկաւոր ճիշդ խմանալու : Արդարև, մանկան ծաղիկը մի անգամ էպիդեմիայի չէ ապահովացնում նորան ամբողջ կեանքում ծաղիկի հիւանդութեան դէմ, ինչպէս այդ կարծւում էր յառաջ : Բայց ում որ ծաղիկը կտրուած է, նա դո՛ւնեա՛ մի ժամանակամիջոց կարող է ապահով համարվել : Սորանից երևում է հետեւեալ կարծիքը. շատ լաւ կլինէր պատանիներին 13 — 14 — 15 տարեկան հասակում կրկին ծաղիկը պարտաւորելու. և երբ մի տեղում ծաղիկը շատ տարածվելու վրայ է կամ սկսվում է, այն ժամանակ ուսուցիչները քարոզեն և համոզեն դպրոցի վարչութեանց, որ բժիշկ հրաւիրուի՝ աշակերտաց, եթէ կարելի է, բոլորի ծաղիկը կրկին էպիդեմիայի :

Արիւնդի պարտաւորման օգուտը այժմ երևում է մանաւանդ Պրուսիական զօրքի մէջ, ուր ամեն զինուոր բնդունվող՝ նախ պէտք է պատուաստվի կրկին անգամ. Բերլինի ծաղկի էպիդեմիաների վիճակագրութիւնը ցոյց է տալի, որ զօրքի մէջ շատ սակաւ ծաղկի հիւանդութիւն էր պատահում, համեմատելով ժողովրդի հետ :

Վիճակագրական տեղեկութիւնները ցոյց են տալի, որ այն տէրութեանց մէջ, ուր ծաղիկ կտրելը կանոնաւորուած է և պարտաւորիչ, երկսեռ ուսումնասիրաններից պակասել են չէպէտ երեաները,

և ժողովրդի միջից այն խեղճերը, որոնք ծաղիկը կտրել են աչաց լոյսը :

Ասածներս բաւական են ծաղիկի պարտաւորման և կրկնապատուաստման կարեւորութեանը համոզելու : Բայց դորանից չպէտք է հետեւցնել թէ՛ ծաղիկ կտրելու ժամանակ պարտաւորութիւն հարկաւոր չէ : Ընդհակառակը՝ վերջի ժամանակներս յայտնուեցան շատ փաստեր, որ վատաւոյժ, վարակուած երեխաներից ծաղկի հիւթը վերաներլվ և առողջ տղին պատուաստելով՝ այս վերջինին հաղորդուած է առաջինի ցաւերը. հին մնացած և վատացած ծաղկի հիւթը երբեմն ուղղակի առողջ երեխային ժանտատենդ է պատճառել և այն : Ուրեմն ծաղիկ կտրելու համար պէտք է հրաւիրել այդ բանի մէջ փորձուած բժիշկներ և ծաղկահասարակեանք, մանաւանդ ուշք դարձնել, որ պատուաստելու հիւթը՝ առողջ ծնողաց առողջ և թարմ երեխայի վրայից առնուած լինի :

Եւս առաւել լաւ և ապահով կլինի ծաղիկի հիւթը վեր առնել հորթի վրայից (կովի ծաղիկ), որին այդ նպատակի համար առաջուց պատուաստում են առողջ երեխայի ծաղկի հիւթը, յետոյ հորթի վրայի ծաղկի բշտիկներից հաւաքում են (առանձին դորա համար յարմար շինուած ապակիների մէջ) և գործ ածում շատ և շատ երեխաների վրայ :

Հորթի ծաղիկը առաւել անվտանգ է (վատ հիւանդութիւն, գաղղիական ցաւ և այլն չի տարածուիլ նորանից) և աւելի զօրութիւն ունի : Ընդհակառակը՝ վերջի ժամանակներս ապացուցուած է, որ ծաղիկի ծաղիկի հիւթը պատուաստվելով մանուկից մանկան վերայ, քանի զնում է, ուժը նուազում է և շատ փոքր ժամանակ ապահովացնում ծաղկի հիւանդութեան դէմ : Գերմանական կառավարութիւնը վերջի տարիներում հաւաքելով ամենաճիշդ տեղեկութիւններ յօգուտ և ՚ի վնաս ծաղկի պատուաստման՝ վճիռ կայացուց պատուաստումը պարտաւոր անել իբրև փրկարար միջոց կանոնաւորելով առաւել պատուաստման գործը ժողովրդի համար : Զուիցերիայի բժշկաց ժողովը նոյնպէս ծաղկի պատուաստումը ժողովրդի մէջ պարտաւոր անելու հարկաւորութիւնը հաստատեց վերջի տարիքս : Ծաղկի հակառակորդների կողմը դեռ այնքան թոյլ է, որ իրաւունք չենք համարում շտապով Հայերիս մէջ տարածելու նոյա կարծիքները :

ԳԼ. ԺԳ.

ՈՒՍՈՒՄ ՆԱՐԱՆԻ ԱՐՏԱՔ ՆՈ՞Ց

Արեւի է բաւականին ճիշդ համարել այն միտքը թէ՛ վարակիչ հիւանդութիւններից՝ զարհուրելի խօլերան, թանջքը և տիֆը (վարցաւքը), եթէ ուսումնարանաց միջոցով կարող են տարածուել, դորա գլխաւոր պատճառը պէտք է համարել ուսումնարանաց վատ արտաքնոցները: Այդ պատճառաւ պարտք ենք համարում քանի մի խօսք նուիրել այդ հարցին, մանրամասն քննաբանութիւնը մի կողմ թողնելով:

Յվեցը ¹⁾ խորհուրդ է տալի արտաքնոցները ուսումնարանի շէնքի մէջ չ'ընել, այլ ուսումնարանից այնքան հեռու, որ դասատներէ մէջ վատ հոտ չ'տարածուի, և միեւնոյն ժամանակ աշակերտք ստիպուած չ'լինեն ձմեռը շատ հեռու վազել և անզուշութեամբ մրսել:

Ի հարկէ, ամենից լաւ է, նեղ, երկար կարրիդորով բաժանել արտաքնոցը ուսումնարանի շէնքից, որ ձմեռը աշակերտք չ'մրսեն. այդպիսի կարրիդորը շատ պատուհաններ պիտի ունենայ, որ և հեռու լինեն դասատան պատուհաններից:

Յվեցը ասում է որ միտքով կարող է առանձին լինել բաժան խսկական արտաքնոցի խուցերից. միզարանի յատակը սալած քար պէտք է լինի և յատակի պատի տակով տէտք է անցկենայ երկար սալ քարից կամ ասպիդից (լիզաքարից)՝ փոս-խողովակ, զանազան ծակերով: Այդ խողովակների երկարութիւնը պէտք է բաժանել թիթեղի (ժեշթի կամ այլ աժան նիւթի) տախտակներով, խողովակի ակերից արշին կամ արշին ու կէս բարձրութեամբ, այնպէս որ ամեն բաժանմունքում մի աշակերտ միայն կարողանայ տեղաւորուել:

Խսկական արտաքնոցների համար Յվեցը ասում է, որ ուսումնարանի բոլոր աշակերտաց համար մի արտաքնոց չ'ընելը շատ անպատեհ և անյարմար է: Նոյնպէս ընդդէմ է նա, որ մի մեծ սենեակի մէջ երկար նստատեղիք չ'ընուին մեծ մեծ ծակերով, այլ պահանջում է բաժանել այդ ծակերը, առանձին խուցիկներ չ'ընելով, հաշուելով ամեն մի 20 — 25 աշակերտի համար այնպէս մի խու-

1) Տես եր. 155 — 6 մեր յառաջաբանի մէջ յիշած գրուածքի մէջ:

ցիկ, որի վերեւը կարող է բաց մնալ: Նստատեղիքը երեխայոց հասակին պէտք է յարմարցրած (ուրեմն դասատների համեմատ), արտաքնոցի պատերը պէտք է ներկել իւղային ներկով, կամ այնպիսի մի նիւթով, որ մատիտով և կաւիճով զանազան անբարոյական խօսքեր և յիմարութիւնք գրելը անկարելի լինի և աշակերտաց երկար չ'պահէ արտաքնոցներում:

Իբրև շարունակութիւն և լրութիւն Յվեցի կարծեաց, բերենք հետևեալ սողերը Մ. Միանսարեանից, որը մասնաւոր ուշադրութիւն դարձրած է այդ հարցին ¹⁾:

«Արտաքնոցների փոքր պիտի լաւ քարով և կրով շինած լինի, նոյնպիսի յատակով փայտէ կամ դարձեալ քարատաշ աշէն տաշան: Փոքր ամիսը զոնեա մի անգամ պէտք է մաքրել և աղբը տանել քաղաքից դուրս և հեռու տեղ արտերի վրայ թափելու համար: Սըլխալ կարծիք է և շատ մեասակար թէ գեանի տակից փոքրիկ ջրի խողովակներով կարելի է աղբը՝ նոյն ջրի հոսանքով՝ մինչև գետը հանել: Այդ հնարը երևակայական է, որովհետև փորձը ցոյց է տալիս թէ՛ ամենայնրոյ, սաստիկ անձրևի ջուրն անգամ չէ տանում աղբը շատ հեռու. լցնում է միայն աղբով ջրանցքների խողովակները և այդ կերպ՝ աղբը ջրի մէջ մնալով՝ աւելի շուտ քայքայվելուց և գորրչիւննալուց, աղտոտ և թոււնաւոր օդ է տարածում շուրեք կողմը և զանազան հիւանդութեանց պատճառ դառնում: Անդլեայի շատ արտաքնոցները, որոնց աղբը ջրի խողովակներով են մաքրում, բոլորովին ուրիշ կերպ են շինած: Նոցա ջուրը ահագին քանակութեամբ և սաստիկութեամբ շարունակաբար հոսում է աղբանոցների միջով, մեծ վարպետութիւն է գործ դրած և միլիոններ ծախսած նոցա վրայ, քանի որ այդ մենք չ'ունենք, լաւ է փոքր ջրերով մեր արտաքնոցների աղբերը ևս աւաւել չ'հոտեցնենք:

Պիտի նայել, որ անձրևի և լուացքի ջուրը արտաքնոցի փոսի մէջ չ'լքցուի և չ'հաւաքուի: Արտաքնոցի փոսից մինչև տան վերի յարկը մի երկար ու վերեւ նեղ (ձաղառածե) օղահան շինեն (ինչպէս հնոցների ծխահանը), որ աղտոտ օդը խողովակներով բարձր հանէ, և հեռացնէ սրահից՝ ու արտաքնոցի փոսն էլ որսան կարելի է չոր պահէ: Այս հանգամանքների մանրամասնութիւնքը, ի հարկէ, պէտք

1) Տես „Կանոն. և վայելուչ գր.“ վերնագրով գրքի 146 — 148 երեսները:

է ցանկացողք լաւ ճարտարագետներէց տեղականան և պլան նկարել տան:

Արտաքնոցի նստելու տեղեց մինչև փոքր պէտք է լաւ շինարարական զինկով (ցինկով) պատած խողովակ լինի, որ պատերը չոր մնան և ապականած օդ չտարածեն:

Փոշխոյրած ածուխը, կրի քլորիտը (хлористая известь, (chlorure de chaux) առաւել ևս կանաչ արջասպը (երկաթային ծծրմբատը, զաճը, желѣзный купоросъ, vitriol vert) կարբօլի (ֆենօլի) թթուի հետ արտաքնոցների մէջ ածելով՝ կարելի է բաւականաչափ աղբի ապականութեան յառաջը առնել և օդը մաքրել: մանաւանդ եթէ այդ նիւթերը առանձին անօթներէ մէջ ևս արտաքնոցներում դրուած մնան կամ փոխանէրը թաթախած կախին զանազան անկիւններում:

Ուսումնարանի արտաքնոցի մեծ սենեակը (որի մէջ բայ խրջիկներ են շինուած) պէտք է արձակ լինի, լաւ լուսամուտներով և օդաբանուկներով (հողմարարներով), պատի մէջ առանձին ձազառած և խողովակ փոսի խողովակի նման, ձազառած և երկար ու բարձր — օդահան:

ԳԼ. ԺԴ.

ՎԻՐԱԽՈՐՈՒԹԻՒՆԻՔ (ԱՆԳԱՄԱԽԱՆՏՈՒԹԻՒՆԻՔ)

Ուսումնարանի մէջ վերաւորութիւնք կ'պատահին կամ զանազան անկանոն խաղերից, կամ աշակերտաց իրար հետ կռուելուց և կամ վարժապետաց դազանաբարոյ սովորութիւնից՝ փայտով (զաւազանով), քանոնով, ապտակով աշակերտներին զանահարելուց: Զանազան բժիշկներ այս կարգի ուսումնարանական վնասներից յիշում են, իբրև յաճախ պատահած դէպքեր — թե, ոտք կոպրուելը, այդ անգամները զանազան յօդուածներից դուրս ընկնելը, — դաստակի կամ ոտի ծռուելը, թեև այդ փաստերին վերաբերեալ ճիշդ վիճակագրական տեղեկութիւնք չեն ևս չկան: Իբրև մասնաւոր դիտողութիւնք բերենք քանի մի օրինակներ, մի գաւառական ուսումնարանում մի կատաղի վարժապետի հարուածից (քանոնի սուր ծայ-

րով երեխին զլինին) աշակերտը հիւանդացաւ, երկու շաբաթ յետոյ յայտնուեցաւ երեխի վրայ Ռաչխոյրած, որը շատ ստէպ ստէպ կըրկնրվում էր և որի վաանդաւոր հետեանքն ամենին յայտնի է: Նոյն քաղաքի մի ողորմելի և փակելի փոքր դպրոցում աշակերտք իրար հետ կռուել էին, կովող մի 12 տարեկան երեխին այն աստիճան թակել էին, մանաւանդ մէջքին զանազան հարուածներ հասուցանելով (ուրիշները հաւատացնում էին թէ՛ վարժապետն է այդ կերպ քանոնով ծեծել), որ երեխի ոյնաշարի ուղեղը բորբոքուած էր, աշակերտը փէտացած դրութեան մէջ, — մկանանց ցնցումից, 3 օր հազիւ ապրաւ: (Այս իրողութիւնը երկու բժշկաց վկայութեամբ է):

Նոյն քաղաքի Հող. Կպրոցի մի քանի տղէք սկսել էին առանց վերակացուի «Կանգալալըշի» խաղը և այն աստիճանի անզգուշութեամբ այդ խաղը կատարում, որ մինը բաւականին մեծ բարձրութիւնից շարժման ժամանակ վայր ընկնելով՝ ստացաւ գլխի վէրքերից և քթից սաստիկ արիւնահոսութիւն, որը խիոյն չէին կարողացել կտրել, և աշակերտը մահուան դուռը կարող էր հասնել, եթէ կանոնաւոր բժշկական օգնութիւն չ'գար: Այսպէս դէպքեր էլ շատ կարելի էր բերել մեր ուսումնարանաց կեանքից, զարհուրելի ապտակներից խլուրեան, հարել և այլն, բայց այսքանն էլ բաւական ենք համարում զզուշութեան համար և մանաւանդ ապացուցանելու համար թէ՛ որքան կարևոր է ամեն ուսումնարանի մօտ ունենալ, օրինաւոր վերակացուի հսկողութեան սով:

1. ԿԱՆՈՒՄԱԽՈՐ ԽԱՂԱՆՈՒ ԵՒ ՄԱՐԲՆԱՄԱՐՁՈՒԹԵԱՆ ՏԵՂ.

Այդպիսի տեղը, ի հարկէ կարող է լինել ուսումնարանի մեծ սրահում: Ըստ առաջարկութեան Յվեցի¹⁾, խաղալու և մարմնամարզութեան տեղը, բացի այն որ բաւականին արձակ պիտի լինի, նորա գետինը այնպէս պէտք է շինուի, որ թացութիւն որքան կարելի է քիչ վերցնէ, քարայտակ՝ վրէն մի երկու խաւ աւաղ լըքցրած: Այդ տեղերում բաւական է եթէ մի կօկ սիւն լինի, որի վրայ կարելի է սողալով բարձրանալ, մի թռչելու փայտ, որը կարելի լինի բարձր և ցած դարսել և մի ոչ շատ բարձր զուգահեռական կողերով սիւների վրայ փայտէ շինուածք, որի մէջ աշակերտները թեւերով կախ ընկած՝ կարողանան զանազան անվաս շարժումներ

1) Եր. 159 — 160 յիշած գրքիս:

անել: Զմեռը խաղալու համար, Յվեցը պահանջում է ամեն կանոնաւոր ուսումնարանից առանձին ծածկուած դահլիճ ունենալ նոյն կարասիներով: Իսկ ամառը արեգակի անմիջական ազդեցութիւնից երեխայոց ազատելու համար, լաւ կ'լինէր բացօդեայ տեղում մեծ հով տուող և շուտ բուսնող ծառեր տնկել, ինչպէս ակացիէք, տալիէք¹⁾ (օխլամուր), կաղամախի ծառ (ղավաղ²⁾ և այլն: Մարմնամարդութեան մեծ գործիքները (հսկայական քայլեր, մեծադիր և բարձր սանդուխներն) ուսումնարանի սրահում պատշաճ չեն և երբեմն մեծ վտանգների պատճառ: Այս հարցերին շատ մօտ է ժողովրդական դպրոցաց

II. ՊԱՐՏԵՂԻ ԿԱՄ ԱՅԳՈՒ ԽՆԻՒՐԸ

Պէտք է սովորութիւն դառնայ, որտեղ որ այդ կարելի է, ուսումնարանի մօտ մի պարտեղ կամ այգի ունենալու, ո՛չ խառն վարժապետի տան պարտեղի հետ, այլ իսկապէս աշակերտաց համար և իւրաքանչիւր երկու կամ երեք աշակերտին մի մի կտոր (մարկ) դետին բաժանուի խաղալու ժամանակ մշակելու (ծառ տնկել. խխար ցանել և այլն), այնպէս որ աշակերտք ինչ որ հասցնեն կարողանան իրանց համար տուն տանել: Այդպիսի հիմնադրութիւնը մեծ օգուտ կունենայ, մէկ որ աշակերտաց մկանունքների շարժմանց պահանջը առաւել կ'լրացուի այդ կերպ, երկրորդ որ վտանգաւոր և երբեմն անօգուտ խաղերից հեռու կ'պահէ աշակերտաց, երրորդ, որ աշակերտք՝ գործնական, փորձառական կրթութիւն և ուղղութիւն կունենան առանց մեծամեծ ծախսերի և ուսումնարանական շատ իրերացուցական պիտոյքների, որ մեղանում դեռ թանգ է ձեռք բերել:

Յվեցը, որ ժողովրդական ուսումնարանաց յառաջադիմութեան հարցերի մշակող և հետևող է ի վաղուց հետէ, ասում է թէ՛ այդպիսի այգիներ ժողովրդական դպրոցների մօտ՝ այժմ տարածվում են Անգլիայում, Բելժիքայում, Զուիցերիայում, Հօլլանդիայում: Գերմանիայում ինքը դիտած է Լէյպցիգի և Վէյմարի այդ տեսակ նոր հաստատված երկու ժողովրդական դպրոցներ, որ շատ բա-

1) Tellia, Linden.
2) Peuplier, Pappel.

րերարոյ և օգտաւէտ հետևանքներ են տալիս¹⁾: Նա համոզուած է թէ՛ այդպիսի պարտեղներ կամ այգիներ, վաղ թէ ուշ, պիտի անհրաժեշտ պիտոյք դառնան ամեն մի ժողովրդական դպրոցի, թէև սկզբից դժուար պիտի երևի այդ շատերին: Նա մասնացոյց է լինում այն ժամանակներին, երբ «Ճանկանց ծառիցը» (կինդերգարտէն) միանդամայն անբարձրէլէ էր համարվում, բայց 10 — 20 տարի չանցաւ, հիմայ Գերմանիայի համարեա ամեն քաղաքում «մանկանց ծաղկոցներ» տարածված են: Նոյնպէս շատ դժուար էր համարվում, իբրև գործնական ուղղութիւն, օրիորդաց դպրոցներում քեթարձ մտցնելը. բայց այժմ ո՛չ ոք չի կարող ներկայացնել օրիորդաց դպրոց առանց ձեռագործի: Նորա կարծիքով այս միւլենոյնը պիտի լինի և «Կարոյանի այգիները» վերաբերութեամբ:

Այդու կամ պարտեղի տարածութիւնը, նայելով աշխատաւոր աշակերտաց թուին, պէտք է լինի, ըստ Յվեցի, 3000 — 6000 քառակուսի ոտք (238 — 477 \square մետր):

Այս հարցի հետ մօտ ծանօթանալ ցանկացողին Յվեցը առաջարկում է պրօֆեսօր Կարլ Բեդերմանի գիրքը. „Die Erziehung zur Arbeit, eine Forderung des Lebens an die Schule“ Leipzig 1852.

ԳԼ. ԺԵ.

ԶՂԱՅԻՆ ԵՒ ՀՈԳԵԿԱՆ ՀԻՒԱՆԳՈՒԹԻՒՆՔ

Այսքան զանազան հիւանդութիւնք և տկարութիւնք հաշուելով և մի առ մի քննելով, արժան է փոքր ինչ խորհել թէ՛ այդ ցաւերը ընդհանրապէս ինչ ազդեցութիւնք կունենան երեխայոց մտաւորական կեանքի վրայ: Անտարակոյս, այդպիսի փոքր ի շատէ տկար վիճակի մէջ (շատ անգամ անուշադիր ուսուցչաց աննկատելի) երեխայի հոգեկան դրութիւնը բաւականին աւերված է լինում առ-

1) Վէյամբրինը մենք ինքներս տեսած ենք և հետագօտած. օրինակելի չէր, որովհետև աշակերտներին իբրև բանւոր մշակներ էր աշխատեցնում այժմեան կոպիտ վերատեսուչը. իսկ յառաջ շատ լաւ է եղած միմիայն ազատ ժամանակ աշխատելիս են եղել:

հասարակ մարդու դժուարանում է երկար մտածելու և մտաւոր աշխատանք կատարելու, եթէ այս կամ այն կերպ կազմուածքը անառողջ կամ անբնական զրից մէջ է. և բացի այդ, եթէ երեխէն ստիպուած է ևս իւր կարողութիւնից վեր աշխատանք վերցնելու, հարկաւ դորա հետեանքը պիտի լինի ուղեղի գործունէութեան բաւականին խանգարումը:

Մի քանի բժիշկներ հաստատում են մինչև անգամ թէ ուսումնարանն ևս մեղաւոր է, որ երեխաների մէջ աւելանում են օրէց օր ջշակոն և ուղեղի տկարութիւնը, որպէս է յանկարծակի Ռալֆ Կոչընդի կամ լոսանգոսիան (էիպլեպսի), սուրբ Վիպի Կաթուածը (որ դժուարաբոյժ տկարութիւններից մէկն է), յետոյ վերջապէս հոգեկան հիւանդութիւնը կամ խելագարութիւնը (այս բանը մանաւանդ պնդում է Գէյթը):

Ֆիրխովի կարծիքով, այդ վերջի միտքը դեռ ևս իւր տակ այնքան լիովին փաստեր, վիճակագրական տեղեկութիւնք չունի: Նա միայն պարտք է համարում զգուշացնել ժողովրդին և մասնացոյց լինել թէ «տհա՛ ոյս բանի մէջ եւ մեծ վրասն է կոչ»:

Ըստ ասութեան Ֆիրխովի, մինչև ցայժմ այդ վտանգը այնպիսի երեխաների վրայ է նկատուած, որոնց վրայ բացի յիշեալ ներգործող պատճառները (ուղեղի անկանոն և անժամանակ ու չափից դուրս բեռնաւորելը և այլն), կից են եղել և մարմնի պակասութիւններ և կամ առանձին արտադրութիւնք¹⁾ կազմուածքի: Ուստի զանազան ուսումնականք վճիռ են տուել, նայելով թէ այս և այն դիպուածում ուսումնարանի զանցառութիւնքն են աւելի զօրեղ հանդիսացել, թէ՞ նոյն իսկ ժառանգական տրամադրութիւնը և երեխի թոյլ կազմուածքը:

Ըյայտի դէպքերում շատ կարևոր էր ուշք դարձնել և ուսման եղանակին կամ մեթոդային ուսումնարանի մէջ, ուսուցչաց անձնական ազդեցութեանը և նոցա ինչպէս երեխաների հետ վարվելուն:

Շատ լաւ կ'լինէր, եթէ ծնողք թոյլ կազմուածքի տէր տղոց՝ ամենեւին ուսումնարան չուղարկէին մինչև 10 — 12 տարին: Իսկ տանը՝ կանոնաւոր վերահայեցողութեան տակ՝ այդպիսիների հետ

1) Расположение.

ընտիր վարժապետներ չափաւոր Կերպով պարապէին: Որովհետև յիշուածի այդպիսիների հետ շատ զգոյշ և քնքոյշ վարմունք է պէտք: Իսկ ո՛ւմ յայտնի չէ թէ՛ մեր դեռ շատ ուսումնարաններում աշակերտների հետ տմարդօրէն և երբեմն միանգամայն գազանաբար վարուել զիտեն: Յաւն այն է որ հասարակութիւնն ինքն ևս դեռ արդարացնում է վարժապետաց այդպիսի վարմունքը, զանազան պառակտական առակների սխալ ազդեցութիւնով

Աւերը (Վ. զլխի վերջումը) նկատեցինք, թէ մարդիկ սովորաբար զիտեն թէ՛ երեխաների ստամոքսը որ լքցուի շատ անմարս կերակուրներով՝ ստամոքսը խանգարվում է: Նոյնը յայտնի է միանունքների մասին, որ եթէ չափից դուրս շատ ծանրութիւններով բեռնաւորուին, նոքա թուլանում են և այլն. հարցրէք ևս ի՞նչ միւլնոյնը չեն մտածում ուղեղի մասին:

Որովհետև, կ'պատասխանենք, մարդուս միւս գործարանների խանգարուիլը անմիջապէս և շուտ նկատվում է, իսկ ուղեղինը այնքան նկատելի և հասկանալի չէ ժողովրդին: Շատերը չ'զիտեն թէ ուղեղը ի՞նչ նշանակութիւն ունի կազմուածքի մէջ: Իսկ կրթութեան և դաստիարակութեան գործի մէջ դեռ շատերը ուշադրութիւն չեն դարձնում թէ՛ ուղեղը ի՞նչ կապ ունի մարդուս հոգեւոր, մտաւոր ոյժերի հետ: Կան դեռ ևս շատ վարժապետներ և դաստիարակներ, որ մարդուս հոգին մի առանձին իր են համարում, որ դրուած է կազմուածքի մէջ իբրև զատ էակ, թերևս կազմուածքի մի որևէ անկիւնում (քունջո՛ւմ): Այդ հայեացքն է, որով մինչև հիմայ ժողովրդի մէջ բոլոր ջղական և հոգեկան հիւանդութիւնքը գերբնական բաներ են համարվում, որովհետև այդ գէպքերում կարծում են թէ՛ բարի և խելացի հոգու տեղ՝ զբսից մի չար և անառակ բան է մտնում մարդուս մէջ: Այդ հայեացքն է, որ ժողովրդի մէջ հազարաւոր վնասակար սնտոխապաշտութեանց և խաբերայութեանց տեղիք է տալի. «չարքերի հանդիպել, քաղակ ընկնել» . խելագար հիւանդների հետ զարհուրելի և անպատմելի վարմունքները ասածիս ապացոյց են: Միւս կողմից այդ հայեացքով վարժապետներն և դաստիարակները կարծում են, որ հոգին էնպէս բան է, որ զրքերից ինչ բան ուղեւաս և ինչքան որ տաս, կարող է սերտել. եթէ աշակերտը մի բան չի հասկանում կամ չի սերտում՝ նա ծոյլ է, թակելու (ծեծելու) արժանի է Նրբ որ այդ մի հայեացքը մարդու կեանքի զանազան ճիւղերում այդքան ազդեցու-

Թիւնք կարող է ունենալ, պարտք է մեզ մեր ընթերցողն ուշադր-
րութիւնը հրաւիրել այդ հարցի գէթ հարեանցի քննութեանը:

ԳԼ. ԺԶ.

ՀՈԳԵՎԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՄԷՋ

Այժմեան ուսումնականաց, իմաստասիրաց, կրթեալ մարդոց
մեծ մասի մէջ ընդհանրացած կարծիք է թէ՛ որպէս գերդաստանի,
նոյնպէս ուսումնարանի մէջ ջշակման և հոգեկան հիւանդութեանց տա-
րածվելը կարգիլուի, և մարդոց կանոնաւոր կրթութիւնն և զար-
գացումը ճշմարիտ յառաջադիմութիւն կանէ միայն այն ժամանակ,
երբ դաստիարակներ և ուսուցիչներ առանց այլ և այլն որոշ կեր-
պով ըմբռնեն և իրազորեն կեանքի մէջ հետեւեալը:

Թէ՛ մարդու բոլոր հոգեկան կեանքը (մտաւոր և բարոյական)
ուղեղի և ջշեղի արտայայտութիւնն է, թէ՛ մարդու բոլոր բնաւո-
րութիւնը՝ ուղեղի և ջղային դրութեան զանազան ժամանակների
ունակութիւնք և սովորութիւնքն են: Թէ՛ ուղեղի և ջղերի կանո-
նաւոր գործունէութիւնը կախուած է կազմուածքի միւս գործարա-
նաց (թոքի, սրտի, աղբի և այլն) համագործութիւնից (ուղեղի
հետ), ուրեմն մարդու առողջ դրութիւնից:

Ա՛յ երջի ժամանակներս մեր մէջ էլ սովորութիւն է դառել ա-
սել և կրկնել իբրև անհերքելի ճշմարտութիւն, լստինական առածը
«առողջ հոգի առողջ մարմնի մէջ» բայց ցաւալի է, որ նոյն իսկ
այդ միտքը կրկնողները չեն աշխատում գորա բոլոր հետեւանքները
իրազորել կեանքի մէջ, այլ՝ յափշտակվում են այս կամ այն մար-
դու, քանի մի ուսումնականաց մասնաւոր օրինակներով, որ չնայե-
լով վատառողջ կազմութեան կամ հիւանդ դրութեան, այնու ա-
մենայնիւ մեծամեծ գործեր են կատարել, հանձարեղ զբքեր գրել և
այլն: Այդ մասնաւոր օրինակները հիմնովին չ'քննուած են յառաջ
բերվում և լատինական առածը՝ այն մտքով թէ՛ առողջ միտքը,
առողջ դատողութիւնը՝ առողջ ուղեղի և զգայարանաց արտայայ-
տութիւնն են, կ'մնայ իբրև անհերքելի ճշմարտութիւն:

Շատ պիտի երկարէր, եթէ մենք այստեղ գորա համար հա-

րիւրաւոր ապացոյցներ բերէինք բաղդատական անդամադնութիւնից
թէ՛ կենդանեաց բոլոր ցեղերի շղթայակապ — աստիճանների մէջ
քանի որ աւելանում է գլխի ուղեղը և բարդվում ջղային դրու-
թիւնը, այնքան առաւել զարգացած են լինում այդ ցեղի մտաւոր
ոյժերը: Հազարաւոր փորձեր կան կենդանեաց ուղեղի վրայ անմի-
ջապէս կատարված, որ միւսնոյնը ապացուցանում են: Թողնէք այդ
ամենը, որպէս զի վիճարանութեան անդէք չ'տանք, և աչքի առ-
նունք մարդոց վրայ դիտուած սովորական փորձերը: Ո՛ւմ յայտնի
չեն այն փաստերը, որ ուղեղի այս և այն հիւանդութիւնքը իսկոյն
փոխում են մարդու հոգեկան կեանքը և խառնաշփոթում ու ցնո-
րում մարդու միտքը: Գանգին (գլխին) հասցրած հարուածները
ինչպիսի զարհուրելի հետեւանքներ են ունենում հոգու վրայ: Ոգե-
լից ըմպելեաց ազդեցութիւնը ուղեղի և ջղային դրութեան վրայ
ո՛վ չէ փորձել:

Այս մտքերին համաձայն հոգեկան հիւանդութիւնք ասելով
մենք ի՞նչ պէտք է հասկանանք: Ըստ մեծի մասին ուղեղի և ջղ-
ային դրութեան այս կամ այն նիւթական փոփոխութիւնը, որով
ուղեղը շեղվում է իւր սովորական գործունէութեան ընթացքից,
յարուցանելով սխալ տեսիլքներ, ցնորքներ և այլն և այլն. ինչպէս
որ թոքերը և աղիքը հարբուխից բռնուած ժամանակ զանազան ան-
սովոր երեւոյթներ են յայտնում (հազ, ցաւ և այլն). այնպէս էլ
ուղեղն է: Ինչպէս որ թոքերը կամ աղիքը աւելորդ արիւնից և վը-
նասակար հիւթերից իստակուելով՝ կառողջանան, այնպէս էլ ուղեղն
է: Ուրեմն խելագարը հիւանդ է, ինչպէս հիւանդ է բարակացաւ
(թոքախտ) կամ փորացաւ ունեցողը:

Չղերի և հոգեկան հիւանդութեանց (խելագարութեանց) մի
քանի տեսակները երեխաների մէջ ևս կ'պատահին. դաստիարակ-
ները և ուսուցիչները, որքան կարելի է, պէտք է այդ դէպքերին
փոքր ի շատէ ծանօթ լինեն: Մենք կ'բերենք մի քանիսը միայն:
Ախոնդացաւը (հիպոխոնդրիէն) ջղական դրութեան այնպիսի մի հի-
ւանդութիւն է, որով մարդս արեւ է գնում յուսահատութեան
եթէ մի փոքր հիւանդութիւն ունի: Նա ընդհակառակը՝ երեւակա-
յում է իւր մէջ հազար տեսակ ցաւեր և տանջանքներ. կեանքի
ուրախութիւնքը և բերկրանքն էլ չ'կան այդպիսի հիւանդների հա-
մար, որովհետեւ նոցա ջղերը չեն կարող զգալ այդ ուրախութիւնքը.
Նոքա կորցնում են հաւատը իրանց ոյժերի վրայ, ո՛չ մի գործի ե-
ռանդ չունեն: Այս հիւանդութիւնը, և սորա բարձր աստիճանը

անհամար (մեղանքօրիս) շատ փոքր երեխաների վրայ արտայայտվում է մշտական լացով, անհանգստութիւնով և ոչ մի բանից չ'բաւակա- նալով: Անկիրթ մայրերը երեխային այդ դէպքերում չարաճճիկ և անհնազանդ համարելով՝ ծեծում և հարուածում են, որով ևս ա- ռաւել սաստկացնում թէ՛ երեխի հիւանդութիւնը, թէ՛ իրանց տանջանքը: Անգլիացի յայտնի հոգեբոյժ (պսիխատր) Մաուզսլին ասում է թէ՛ այդ դէպքերը շատ անգամ յառաջ են գալի երեխայի վրայ ժառանգական հիւանդութիւնից, մանաւանդ ծնողաց հնացած և ծածկուած գաղղիական ցաւից. այս ցաւի դէմ տուած դեղերը բոլորովին առողջացնում էին այդպիսի երեխայոց:

Երբ որ մի 12 — 13 տարեկան պատանոց ջղային դրութիւնը այդպէս ընկճուած է լինում և յարատւում է, այն ժամանակ նորա ուղեղի մէջ յառաջ են գալի և խելացնոր գաղափարներ և մտքեր:

Մաուզսլից բերինք հետեւեալ դէպքերը: Մի տղայ իւր դեռ 5 տարեկան հասակից մի քանի զարմանալի բաներ էր անում, բայց ո՛չ որ առանձին ուշադրութիւն չէր դարձնում այդ բանին: Օրինակ ընկերների հետ փողոցով անցկենալիս՝ յանկարծ կ'կանգնէր՝ և ժա- մերով տեղից էլ չէր շարժիլ և այլ այսպիսի փաստեր: Նա շարու- նակում էր ուսումը մինչև իւր 12 տարին: Այդ ժամանակ նորա վրայ երեցաւ որոշ հոգեկան հիւանդութիւն — սեւամաղձ (մեղան- քօրի) զանազան ահուդողի խելագար մաքերով: Նորա հոգեկան դրութիւնը շատ ընկճուած էր, նա ամեն բանից վախենում էր, միշտ լաց էր լինում, շատ վախենում էր դպրոցի ընկերներից և մանաւանդ վարժապետից, որոնք իբրև թէ՛ ինչ վատ բան լինէր ուսումնարա- նում, գողութիւն, անառակութիւն — միշտ նորան անմեղ տեղը մեղադրում էին: Վիշերները անհանդիստ էր, շատ ծանր շունչ էր քաշում, միշտ խօսում էր քնած ժամանակ: Քանի մի տարուայ ըն- թացքում պատանին առողջացաւ. բայց մի երկու զարմացքի շար- ժումներ այնու ամենայնիւ վրէն մնացին: Օրինակ՝ եթէ պատահ- մամբ մի քար ձգէր, նա էլ չէր կարող բռնել ձեռքը՝ — ձգելու շար- ժուածքներ մի քանի անգամ իրար յետեւից պէտք է անէր: Եթէ թքէր, միւկնոյնը իրար յետեւից անդադար պիտի կրկնէր և այլն: Այդ անկանոն շարժուածքները ինքն էլ զգում էր և ուզում էր ուղ- զել, բայց չէր կարողանում խելճը:

Միւս այդ տեսակ հիւանդութիւնով բռնուած երեխանց ցնորք- ները վերաբերում էին կրօնական գաղափարների, իրանց մասնուած էին համարում սասանաների ձեռքը, գժոխք, տանջանք . . .

13 — 15 տարեկան հասակի պատանեաց մէջ սեւամաղձը շատ անգամ ինքնասպանութեան գաղափարների ձեւով է յառաջ գալի. շատ հազիւ այդ պատահել է 8 — 9 տարեկան հասակում ևս:

Մաուզսլին ասում է թէ՛ կասկած չ'կայ, պատանեաց ինքնաս- պանութիւնը շատ անգամ յառաջ է եկել կամ «պոպոթից» յառաջ վա- խենալուցը, կամ պատժից յետոյ: Երբեմն՝ ծնողները և վարժա- պետները իրանց կողիտ վարմունքով հասցրել են աշակերտներին այն աստիճանի ջղական գրգռմանց և հոգեկան անբաւականութեան, որ սոքա դիմել են ինքնասպանութեան:

Ծայրէ բժիշկը յիշում է մի 11 տարեկան տղայ, որ վարժապե- տի մշտական կողիտ և վատ վարմունքից այն աստիճան զոլուել էր կեանքից, մինչ ամեն հնար փորձում էր իրան սպանելու, յառաջ փորձել էր իւրեան սովամահ անել, այդ որ չէր յաջողել, փորձեր էր արել իւրեան խեղդելու:

Այս փաստերը բերելով Մաուզսլին ասում է, որ չ'պէտք է մոռանալ դոցա վերաբերութեամբ և ժառանգական տրամադրու- թիւնքը:

Յորոյան հիւանդանոցի օրինակներ էլ շատ կան երեխայոց մէջ, որ շատերը անառակութիւն կարծելով՝ ծեծում են, փոխանակ հի- ւանդին բժշկել տալու:

Էսկիրօլ երեւելի հոգեբոյժ գաղղիացին պատմում է երեք տա- րեկան մի աղջկայ մասին որ միշտ զարմանալի անհամեստ շարժում- ներ էր անում. ծնողք փոխանակ՝ երեխայի առողջութեանը նպաստե- լու՝ խտակելով նորա սեռական անդամները և լողացնելով միշտ, նո- քա կարծում էին սաստեղով վրկել իբրև «վատ սովորութիւնից», բայց սխալուեցան, որովհետև աղջկը վերջ ի վերջոյ տիրացաւ յա- ւերժահարսանց ¹⁾ հիւանդութեան:

Շէսլամ բժշկից Մաուզսլին բերում է հետեւեալ պատմութիւնը մի 10 տարեկան պատանեկի մասին, որի գերդաստանի մէջ խելագա- րութիւն երբէք չէր եղել: Այդ տղայն 2 տարեկան հասակից այն- պէս չար էր և անհնազանդ, որ տանը անկարելի էր պահել. 10 տարեկան որ եղաւ, բոլոր տունը նրանից դողում էր, և ամեն բա- նում ստիպուած էին նորան զեջելու, եթէ ո՛չ պատուում էր իւր վը- րայի հագուստը, ջարդում էր, ինչ որ ձեռաց տակը ընկնէր և շատ

1) ymphomania.

անգամ բոլորովին հրաժարվում էր ուտելուց: Ուսման մէջ լաւ յիշողութիւն ունէր, բայց կարդալու և պարապելու ցանկութիւնը երբեմն միայն զայն էր, այդ պատճառով ո՛չինչ չէր սովորում հիմնաւոր կերպով: Բարեկամութեան և փափկասրտութեան զգացմունքները նորան անյայտ էին. երբէք միւս տղայոց հետ չէր խաղում, սաստիկ սիրում էր չարչարել կենդանեաց. օրինակ՝ եթէ ձեռքը մի կատու էր ընկնում, իսկոյն պոկում էր նորա «բեխերը» ասելով «ինձ պէտք է քո միրուքը» և յետոյ նրան ձգում էր վայր պատուհանից կամ կրակով այրում էր:

Այս և ուրիշ տեսակ հոգեկան հիւանդութեանց շատ օրինակներ կան երեխայոց մէջ:

Այն ժամանակներից, երբ բժիշկները այս բոլոր հոգեկան տարօրինակ փոփոխութեանց պատճառը հասկացան՝ իբրև ուղեղի և ջղային գրութեան խանգարմունք, և քննելով այդ խանգարմունքը ջղերի զանազան տեսակ փոփոխութիւնքը, օրէց օր յոյսեր են ստանում բժշկելու մարդուս հոգեկան ցաւերը: Նոյնպէս էլ դաստիարակները ծանօթանալով ուղեղի և ջղային գրութեան կանոնաւոր զարգացման օրէնքներին, պէտք է կանոնաւոր զարգացնեն երեխանց ուղեղը առանց հիւանդութեան պատճառ դառնալու:

Այն ուսուցիչը որ երեխի միայն հոգին և մարմնը կամենայ զարգացնել, առանց ուշք դարձնելու նորա կազմուածքի և ուղեղի առողջապահութեան օրէնքներին, նման է այնպիսի ժամադործին, որ ուղեղը տրուած ժամացոյցի միայն պահէրը (նետերն) է շարժում և իւր ուղած ժամանակի վրայ կանգնացնում, իսկ բոլորովին չի մտածում ժամացոյցի ներքին մեքենայի ուղեղուն, սրբելուն և իստակ պահելուն, այնպէս-որ մէկ քօքելով նետերը ինքնիրանց շարժին և ժամանակը կարգով ցոյց տան:

Ուղեղի և ջղերի առողջապահութեան գլխաւոր կէտերը սօքա են ¹⁾:

Մարդու ուղեղը իւր գործունէութեան սկիզբը առնում է նախ արիւնից, յետոյ արտաքին արտադրութեան սկիզբը զգայարանաց միջոցով:

Ուրեմն քանի զգայարանքները առողջ պահուին և կրթուին,

¹⁾ Մանրամասնութիւնքը, որ կ'վերաբերեն ուղեղի եւ ջղային գրութեան անդամներին, բնախօսութեան եւ հիւանդարանութեան, կազմում են այժմ մարդկային գիտութեան շատ հետաքրքրական մասը, եւ օրէց օր աւելի եւ աւելի յառաջ են գնում:

որ առողջ ուղեղին բարակ և բազմակողմանի տպաւորութիւնք հասցընեն, էնքան այդ ուղեղը լաւ մտածելու ընդունակ կ'լինի:

Ուղեղին յարմար չափով մարմնի արիւն պիտի մատակարարուի, ուրեմն կազմուածքի միւս գործարաններն կանոնաւոր պիտի գործեն:

Ուղեղը առողջ պահելու համար պէտք է իմանալ առհասարակ ջղերի այն յատկութիւնը, որ չափից դուրս երկար գրգռվելով բոլորովին խանգարվում են. քանի մատաղ է ուղեղը, այնքան աւելի միջոց պիտի տրուի նորան հանգստանալու ամեն մտաւոր աշխատանքից յետոյ:

Մարմինների արտադրութեան ուղեղի մէջ հաստատուելու համար (յեղոյս-լեւան ոյժ) պէտք է որ նորա կրկնուին և որքան կարելի է շատ զգայարանաց միջոցաւ ուղեղին հասնին, որ ամեն տպաւորութիւն լիակատար պարզ պատկեր հանդիսանայ ուղեղի մէջ իւր զանազան կողմերով (մարտոյոս-լեւան ոյժ):

Ուղեղը այն ժամանակ տպաւորութիւնքը կանոնաւոր կերպով և լաւագոյն կընդունէ, երբ ամեն վայրկենում կամ միջոցներում մի գործով են նորան զբաղեցնում և ոչ երկու (որ երկուսն էլ անկատար կ'տպաւորվին) (աշարար-լեւան ոյժ):

Ուղեղը կանոնաւոր և որոշեալ ժամերին որոշեալ բաների աշխատեցնելով՝ կարելի է մարդուս մէջ սովորութեան ծնուցանել և հաստատել (հաստ ոյժ):

Ուղեղի շարունակ գործելը, մանաւանդ մատաղ հասակում, խանգարում է և պակասեցնում ասպազային երեխի մտաւոր ոյժերը:

Ուտելուց յետոյ իսկոյն ուղեղին աշխատութիւն տալը վնաս է:

Մտադրութեամբ պարապելու համար օրուայ կանուխ ժամերը առաւօտից մինչև ցերեկ՝ առաւել օգուտ է, քանց գիշերը:

Չանք և զժուար մտաւորական արհեստ ունեցողները, և աճման (զարգացման) վրայ եղող երեխայք աւելի հարկաւորութիւն ունեն քանստը, քան թէ անգործ մարդիկ և աւելի հասակաւորները:

Ահա՛ բնութեան այս օրէնքներին և սոցա հետեանքների վրայ հիմնուած դաստիարակութիւնն և դասաւանդութեանց նոր եղանակներն (մեթօդաներն) են, որ ուսումնարանին ճշմարիտ յառաջադիմութեան քայլեր են հաղորդում: Ամօս Կօմենտուսի, Պետալօցցու, Իխտերվիզի, Ֆրօբելի բոլոր աշխատութեանց հիմքն այն էր, որ բնութիւնից շեղուած դաստիարակութիւնը կրկին բնութեան օրէնքներին վերադարձնեն և այդ կերպ հաստատեն ճշմարիտ իրական,

մարդկային դաստիարակութիւն, — քիչէն և մտաւորական անբաժան կատարելութեամբ: Նորա այդ կարողացան անել ո՛չ իբրև բնագէտ՝ հոգեբոյժ, այլ իբրև մանկավարժներ, որ հանձարեղ մտքով ուշադիր եղան Բնութեան ցոյցմաններին:

ԳԼ. ԺԷ.

Ե Ձ Ր Ա Կ Ա Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ք

Այս գլխի մէջ, հետևելով Ֆիրխովին, յառաջ բերենք՝ իբրև եզրակացութիւնք և իբրև լրացումն գրուածիս ամբողջութեանը՝ գլխակարգութիւնը այն բոլոր պարագաների, որոնց պէտք է ուշադրութիւն դարձնեն դպրոցաց առողջապահութեան և վիճակազրութեան հետևող անձինք:

I. Դասասանների օդը: Օդի մաքրութիւնը և բարեխառնութիւնը ուսումնարանի մէջ շատ մեծ առողջապահական նշանակութիւն ունի և կախուած է՝

ա) Դասասան Բեժո-Լիւնից և աշակերտաց թուից. ըստ Յվեցի ամեն մի դասատունը 50—60 աշակերտից աւելի չպէտք է վերցնէ. իւրաքանչիւր աշակերտի համար նստելու տեղի լայնութիւն գոնեա մէկ քառակուսի Բեպր, և գոնեա 10 խորանարդ մետր տարածութիւն օդի պէտք է հաշուել:

բ) Օդաճարձակութիւնը. պատուհաններում պէտք է հողճարձակներ շինել (վինտեյլատոր). շատ յարմար են համարվում պատուհանների վերևի ապակիի տեղ շատ բարակ ծակծակած թիթեղներ (ժեշտեր) դնել:

գ) Սենեակների աստիճանները. պէտք են լաւ քարէ վառարաններ, լաւ գիսցողի ձևով շինուած. որքան կարելի է խուսափել երկաթեայ վառարաններից:

դ) Ուսումնարանի շէնքի չոր փեղ շինուելուց, որ դասատուների պատերը և տախտակամածը (յամակը) ամենևին խոնավութիւն չունենան,

ե) Դասասանները աղբից և Լուղից ճարձակ պահելուց:

II. Դասասանների լոյսը,

Որ կախում ունի՝ ա) դասատանց պատուհանների դրո-Լիւնից

և Բեժո-Լիւնից. պատուհանները դասատան մի կողքից պէտք է լինեն և ըստ մեծի մասին արևելեան և հարաւա-արևելեան կողմից: Եւ նստարաններն էլ այնպէս պէտք է դարսուին, որ լոյսը ձախ կողմից աշակերտին դայ և ոչ աջ կողմից, պատուհանները պիտի լինեն լոյս և բարձր, այնպէս որ պատուհանի վարի մասը գրասեղաններից քիչ բարձր սկսուի, իսկ վերի մասը հասնի մինչև առաստաղը. պատուհանները լաւ է ճաղածեւ տախտակէ ծածկոցներ ունենան ներսից, փոխանակ վարագոյրների:

բ) Ուսումնարանի ճօրի շրջապահներից և պատերի փոխներից. ուսումնարանի տեղը պէտք է լինի որքան կարելի է հեռու մեծամեծ շինուածներից, ուրեմն՝ ոչ քաղաքների մէջ տեղը, այլ՝ որքան կարելի է ազատ տեղում կամ հրապարակի վրայ կամ մեծ պարտէզով շրջապատուած լինի:

գ) Անոնոսոր արհեստական լուսադրո-Լիւնից. գիշերային պարապմանց ժամանակ լապտերները կամ մոմերը հմտութեամբ տեղաւորված պիտի լինին (վերևից, առջևից, ձախ կողմից, բայց երբէք ո՛չ աջ կողմից), պատրուգը հանգիստ պիտի վառուի, որ բոցը անդադար աջ և ահեակ չշարժի:

III. Դասասանի մէջ աշակերտաց նստելու եղանակը: Նստարանի տախտակի և սեղանի կանոնաւոր յարաբերութիւնը, նստելու յարատեւութիւնը (այս մասին արդէն բաւականին խօսուած է):

IV. Մարմնի դասասան ճարտարութիւնը: Նստ ցանկալի է, որ կանոնաւոր հսկողութեան տակ կատարուէին և խրախուսուէին աշակերտները խաղալու, պարելու, լողալու, այգում աշխատելու: Այս բոլորի համար ժամանակները շաբաթուայ և օրուայ մէջ շատ յարմար դասաւորուած լինեն, որ ընդմիջելով երեխայից մտաւոր պարապմունքը, նրանց թարմ և առողջ պահեն:

V. Մասոր աշխատանքը: Սորա որքան յարատեւը, զանազանակերպութիւնը, ազատ ժամերի և փոփոխութեանց տեղողութիւնը. տան և ուսումնարանի պարապմանց զանազանութիւնը: Նրբ պէտք է երեխայն սկսէ ուսումնարան յաճախելը:

VI. Պարիթիւնը: Ուսումնարանի մէջ կանոնաւոր կարգապահութիւնը (դիսցիպլինան) պէտք է ճարձակ պարիթիւնը վերացնէ, իբրև սարսափելի անպատեհութիւն:

VII. Բճշկո- ջուրը, եթէ աղբիւրի ջուր է, աղտոտ տեղերից չպիտի բերուի. եթէ գետի ջուր է՝ պէտք է մաքրուի (ածուխի խաւերից անցկացնելով՝ քամելով և այլն):

VIII. Ուսման պիտոյքները և դասադրքերը պէտք է տպած լինին խոշոր տառերով, պարզ և մաքուր: Իրացուցական դասառովութիւնը երեխայոց հոգին կանոնաւոր զարգացնող մեթօդն է:

ԳԼ. ԺԸ.

ԳՐԱՍԵՂԱՆՆԵՐԻ ԷԱՐՑԸ ՄԵՐ ՄԷՁ

Ուսումնարանի ընդհանուր առողջապահական և վիճակագրական պայմանները փոքր ի շատէ քննելուց յետոյ, պէտք է այժմ՝ դունեա հարեանցի մտաբերենք մեր սեփական ժողովրդական ծխական դպրոցները:

Աղէքսանդրապօլու, Ախալցխայու, մասամբ Երևանու, Նախիջևանու, իսկ շատ մեծ մասով՝ Տաճկաստանի հայոց մէջ՝ դեռ ևս շատ տարածուած են «քունջ ու պուճախներում» այսպէս կոչուած «վարժասները» իւրեանց տիրացու (տացու) կամ «խաթուն» վարպեաներով: Գրասեղանների փոփոխութեան խնդիրը այս դպրոցներին չի վերաբերիլ, որովհետև սոքա դեռ բոլորովին գրասեղան չունին և չեն դործ ածել:

Այս դպրոցների շատ մասը ներկայացնում են ինչպէս յայտնի է, մի մի սենեակ, յատակը — թաց և խոնաւ դետին . առաստաղը գուրկ տախտակամածից . պատերը ցեխով «վաղած» պատուհանները իրացուց հեռու փոքր ծակեր և կամ երգիքի վրայ մի մեծ ծակ խաչերկաթը մէջ տեղը:

5 — 6 տարեկան մանուկներ, աղջիկ, տղայ, թուով 25 — 40 հաւաքւում են բոլորը մի այգալիսի սենեակում, ծալապատիկ նրստում են իրանց «փալանների» վրայ, առաւօտուայ ժամը 7-ից մինչև 12-ն, ճաշից յետ 1-ից մինչև 5-ն գողգողում են «այբ — այբ, բեն — բեն» «աշխատողականաց» և այլն: Վարդէօր գաւազանը ձեռին մէջները ման է գալի երբեմնապէս սորա գլխին, նորա մէջքին դրդելով, երբեմն՝ հրամայելով աշակերտներին, որ տապրակներից հանեն աներից բերած կերակրեղէնքը ճաշակելու և այլն: Երևակայեցէք ի՞նչ հոտեր են կանգնած լինում այդ նեղ սենեակում . . .

Արպետը եթէ ման չէ գալիս, նստած է իւր անկիւնում, սաղմոսի մի գլուխ քաղում. նորա շուրջը կարելի է տեսնել ժամե-

րով չոքած չոր աշակերտներին շարքով, որ առանձին դասեր են քթի տակ բնթբնթում:

Այս հանգամանաց մէջ ի՞նչ գրասեղանների հարց, ի՞նչ բան . . . Իրաւի, եթէ ճիշդ վիճակագրական տեղեկութիւնք ունենայինք ձեռաց տակ, պէտք էր որ խօսէինք թէ՛ այդ նո՛մ, Խոյ և Տուրք սենեակներից յառաջացած անգլիական ցուր (սոխոյոս) սասնապատիկ աւելի կարող չէ՞ն ծամուել մատաղահաս երեխայոց ուկրները և ամբողջ կազմուածքը, քան թէ որև իցէ անկանոն նրստարան կամ գրասեղան: Ծալապատիկ և չոքած յարատե նստիլը սեղմելով մի անգամից շատ երակներ, կարող է պատճառել աւելի մեծ արեան հոսումն դէպի նստատեղէքը և այլն, քան թէ անկանոն նստարաններից յառաջ բերածը: Նոյն իսկ սովորական ծուռոսները (պղղերը, pes valgus, որ մեղանում շատ տարածուած է) և ծուռ մէջքը այդ տեսակ նստելուց առաւել շուտ կարող են յառաջ գալ և այլն և այլն: Ուրեմն՝ գրասեղանների հարցը մեր մէջ շատերին վաղաժամ կարելի է թուի այդ փաստերի հիմանց վրայ:

Բայց՝ միւս կողմից՝ մենք ի՞նչ ենք տեսնում: Ժամանակի և յառաջագիտութեան անխուսափելի հոսանաց տակ մեր ժողովրդական դպրոցները, մանաւանդ մեր հոգևոր ծխական դպրոցները, այժմ օրէ ցօր աւելի և աւելի բարեկարգվում են:

Նարցնում ենք. լաւ չէ՞, որ այդ բարեկարգութիւնը կատարուի առաւել փորձուած օրինաւոր և դիտնական հիմանց վրայ և նորութիւնը անձոռնի կերպով չմանի մեր մէջ:

Օրինակ՝ աշակերտաց գրասեղաններ մեր հոգևոր ծխական դպրոցներում այժմ տարածվում են և մեւա գործում: Լաւ չէ՞ լինիլ, որ փոխանակ պետական գաւառական ուսումնարանների անկանոն գրասեղաններից օրինակ վերցնելու, մերոնք այժմէն իսկ կանոնաւոր գրասեղանների ճօրէններ (կաղապարներ) ունենան և նոցա օրինակով պատրաստեն մեր դպրոցաց համար:

Այս կէտից նայելով, ուրեմն՝ մեր մէջ էլ վաղ չէ գրասեղանների հարցը զարթեցնելը: Սակայն անշուշտ գորանով չպէտք է յափշտակուիլ այնպէս ինչպէս այդ մի ժամանակ ևս Գերմանիայում էր և Պետերբուրգում, որ ուսումնարանի առողջապահութեան հոգատարութիւնը և հետազօտութիւնքը, բոլորը ամփոփվում էին միայն գրասեղանների հարցի վրայ:

Մեր մէջ մանաւանդ այդ հարցը յառաջ տանելու համար բաւական չեն գրաւոր մանրամասնութիւնք, «տրակտատի» ձևով

գրուածներ . զանազան թիւերի մանրակրկիտ աշխատներով ինչպէս Մ. Մ. Միանսարեանցի գրուածն է «Աանոնաւոր և վայելուչ գրութեան և այլն» վերնագրով գրքի մէջ : Նոյն իսկ բերանացի պատմելը և նկարելը կամ պատկերներ ցոյց տալը մերոնց մէջ գործին չէ օգնում, ինչպէս դորան ապացոյց են Ս. Բէգնազարեանցի փորձերը Աղէքսանդրապոլում որ մեր հիւանները (գուրգարները)՝ բոլոր գործը պարզ չ'ներկայացնելուց մի քանի անյաջող նոր նստարաններ յառաջ բերին : Իսկ Թիֆլիզում այդ բանը աւելի կանոնաւոր կերպով յառաջ տանելու համար դեռ ո՛չ որ չի ուղում մտածել . ո՛չ մի գրավաճառանոց մինչև ցայսօր ինխախախտ չունեցաւ կանոնաւոր գրասեղաններ շինել տալու՝ պատենա ստանալով՝ տարածելու ամբողջ Աովկասի մէջ : Մ'նում է միակ հ'նար՝ զարգացած կենտրոններինց գրասեղաններ ճարտարապետներ, որ հոգաբարձութիւնը նոցա օրինակով շինել տան :


Մ. Մ. Միանսարեանցին մի փոքրիկ քայլ է մնացել այդ գործնական ճանապարհին զալու : Որովհետև նա այն աստիճան սիրում է այդ հարցը , որ իւր անունով ևս գրասեղան ունի , փոփոխութիւն անելով Երևանն-Առնցէի գրասեղանի մէջքի վրայ, նա կարող էր այդ «Միանսարեան գրասեղանները» տարածել դիւրութեամբ, եթէ նա ուղարկէր Պետերբուրգից մեր գլխաւոր ուսումնարաններին փոքրադիր օրինակներ (մօդելներ) երեք տեսակ՝ երեք հասակի համար, 6-ից — 10, 9-ից — 12, 12-ից — 14 կամ 15 տարին : Այդ մօդելների հետ նա կարող էր մի քառածալ երեսի վրայ տրպած կարճառօտ հիմնական բացատրութիւնը ևս տարածել, — այդ ամենը հարկաւրապատիկ աւելի նորան կ'վարձատրէր և մեծ առաւելութեամբ կ'փոխարինէր նորա բոլոր աղիւսակները և նստարանների ստուերագրերը ¹⁾ :

1) Թէև մեր գրքոյկի նիւթից դուրս է, բայց վնաս չի լինել այստեղ մի հարեանցի նկատողութիւն անելու Մ. Մ. Միանսարեանցի «Աանոնաւոր և վայելուչ գրութեան և այլն» գրքի գլխաւոր մասին : Այն յեղափոխութիւնը կամ, աւելի ճիշտ, կանոնաւորութիւնը, որ առաջարկում է հեղինակը վայելուչ գրութեան համար, ճշմարիտ և օգտաւէտ պահանջ է նկարիք : Բայց հեղինակը այն աստիճան դարձեալ բարգաւրել է և ծանրացրել գործը, որ սա բոլորովին յառաջ չէ գնում մեր ուսումնարանաց մէջ : Մենք մտաբերում ենք թէ՛ ինչպէս գծաւարանում էր Աղէքսանդրապոլում մանկավարժական ժողովը ուսուցիչ գտնելու, որը հասկանալով և համոզմամբ գործ դնէր Մ. Մ. Միանսարեանցի գրութեան ցանցերը և

Մենք մեր կողմից բաւական համարելով այդ հարցի վերաբերութեամբ գրքոյկիս քանի մի գլուխների մէջ բերուած բացատրութիւնները կանոնաւոր գրասեղաններ ընդունելու համար, կաւելացնենք այժմ այդ հարցի նկատմամբ եղած բոլոր վիճաբանութեանց հիմնական եզրակացութիւնը թէ՛

Գորոյսի մաս գրասեղանները (նստարանները) պէտք է երեխայի վրա այնպէս չափուած չեամ լինին, ինչպէս հագուստը չափում են : Այդ սեղանները պէտք է աշակերտներին յարմար գտն իւրեանց բոլոր ամբողջութեամբ՝ լին բարձրաւելիւնով, լին լայնութիւնով լին խորութիւնով, եւպէս որ աշակերտի նոցա վրայ հանգիստ դիւր ունենան մշտ—նստած և հանգնած ժամանակ, գրասեղանից դուրս գալիս և ներս մտնելիս, հարբայիս և գրելիս :

Ահա այս պահանջներին համապատասխանող գրասեղանները

բաց թանաքով գրուած դադափարները : Գերմանիայում շատ մանկավարժներ գրութեան մեթոդի կայի մէջ միանգամայն աւելորդ շոայլութիւն են համարում ընդհանրապէս այդ տեսակ ցանցերը և բաց թանաքով գադափարները : Գանցերի փոխարէն նոցա կարծիքով շատ յարմար են չորս գիծ այս տեսակ , իսկ բաց թանաքով գադափարներ առաջարկելը կարող է համարուել կրկնումն միևնոյն կլինտիխանի մեթոդայի իւր չափից դուրս մեքենաբարութեամբ որ վերջ ղոյ կ'ձանձրացնէ երեխանց : Որովհետև բնագոյրար նմանեցնելու աշխատելը աւելի արագացնում է և զարգացնում մկանունքի սովորութիւնը, քան թէ ստիպեալ մեքենայաբարը : Այս շիման վրայ նկարչութեան լաւ վարժապետները հէնց սկզբից չեն թոյլ տալի աշակերտներին բարակ թուղթ պատկերի վրայ դնելով կամ պատուհանի ապակու վրայից՝ պատկերներ հանել, այլ պահանջում են միշտ հեռուից նմանեցնել առաջը գրուած սև թանաքով գեղեցիկ օրինակին : Այս պատճառները եթէ համողական թուին, պ. Միանսարեանցին, այն ժամանակ լաւ կ'լինէր իւր գրքից՝ գրելու մեթոտիկայի կարճառօտ հիմունքը մանակ լաւ կ'լինէր իւր գրքից՝ գրելու մեթոտիկայի կարճառօտ հիմունքը դուրս բերելով տպէր սև-թանաքով-օրինակների տետրի մէջ, այդ միակ տետրը միայն տարածէր ամեն տեղ : Իսկ պատմական և տեսական մասը եւ այլն առանձին գրքի նիւթ շինէր, գուցէ մասնագիտաց շատ հետաքրքրական : Այդ կերպ՝ գլխաւոր գործը անհամեմատ կաժանանայ, մատչելի լինէր եւ իրազործելի մեր բոլոր աղքատիկ զպրոցների մէջ : Եւ այդ շատ ցանկալի է . որովհետև ժամանակ է խոստովանել, որ մեր հին տառերով 5 — 6 տարի վայելչագրութիւն պէտք է սովորել, որ մարդ կարողանայ փոքր ի շատէ գեղեցիկ եւ միևնոյն-ժամանակ արագ գրել հայերէն : Այն ինչ Միանսարեանցի առաջարկած տառերի ձևով առաւել յաջող կարելի է հասնել այդ երկու նպատակին : Ով չէ փորձել այդ բանը թող փորձէ գոնեա մի ամսի չափ իւր կամ իւր աշակերտաց վրայ :

կարող են բաւականացնել թէ՛ բժիշկներին և թէ՛ մանկավարժներին :

Գերմանիայում ուշք դարձնելով զանազան տեսակ նոր գրասեղանների շինուածոց, մենք պարտք ենք համարում այստեղ մատնացոյց լինել՝

1. Առնցէ-Նիլդբախի գրասեղանների օրինակներին, բայց սա, որպէս և շուեդականը, իւր թանգութիւնով և բարդութիւնով (զըժուար շինուածք) մեր մէջ հազիւ թէ տարածուի:

2. Գոթայի վարժուհեաց սեմինարի գրասեղանների ձևին, որ ունենալով բացուող և խփուող առանձին նստատախտակներ, բաւականին յարմար են վերը բերած նպատակին. բայց ոչ այնքան յարմար և առողջապահ, որքան

3. Այլապէս վաւերացած (պատէնդատ) գրասեղանները: (Գարոց. վիճակ. տեսուչ Տ. Հաստի շինուածքը): Այդ գրասեղանները՝ թէ երկու տեղանիքը, որ ամենից յարմարն են, թէ մի տեղանիքը, յառաջ ու յետ մղուող գրատախտակներով շատ աժան և յարմար ենք տեսնում մեր ուսումնարանաց համար. մեր դպրոցական վարչութիւններից որոնք կ'ցանկան այդ յարմար և աժան գրասեղանները փորձել և ուսումնարանի մէջ մտցնել, շատ դիւրութեամբ կարող են ձեռք բերել զորա փոքրագիր կաղապարները (մօդելները): Քող բարեհաճին յայտնել իրանց պահանջը (գաղղիերէն կամ գերմաներէն) հետեւեալ հասցէով Strassburg. Judengasse № 15. Buchhandlung von Dultz u. comp., ուր կ'գտնուին դպրոցական ուրիշ զանազան պիտոյքներ ևս ¹⁾:

Այժմ նկատելու է ընդհանրապէս, ինչպէս Ֆիրխոֆն էլ առաջարկում է, թէ՛ կանոնաւոր գրասեղաններն այն ժամանակ իւրեանց լիակատար նշանակութեան կ'հասնեն, երբ դպրոցների մէջ ստապիլ և անխափանելի կարգ մտնի ամեն դասատուն կամ բաժինը մտնող աշակերտ որոշեալ տարիքով ընդունուի և ընդունելութեան ժա-

1) Մի մօդել, չ'գիտենք Փարիզից թէ որ տեղից, բերուած է Մարիամեան Օր, դպրոցի համար, բայց անյաջող ընտրութիւն. որովհետև ոչ նստատախտակը և ոչ զրքակալը բաց ու խուփ են լինում. և գլխաւոր-նստատախտակը գրատախտակից բաւականին հեռու է, որ կ'նշանակէ, բացի գեղեցկութիւնը, ուրիշ զանազանութիւն չ'ունին հին գրասեղաններից, ցաւալին այն է, որ այդ օրինակով շինուած են բոլոր դասատուների գրասեղանները. և բաւականին մեծ գումարով:

մանակ, դասատունը փոխելիս, հաւասարամեայ աշակերտաց հասակներն կանոնաւոր կերպով չափուին ու գրուին. այդ թուերից միջին թիւը յետոյ կ'գտնուի զանազան տեղերի համար: Տեղական աշակերտաց հասակի այդ ճիշդ չափերով և աչքի առաջ եղած օրինակով (մօդելով) ամեն հիւան մեր գաւառներում կարող կ'լինի կանոնաւոր նստարաններ շինել:

Բայց պէտք է ասել, որ այդ տեսակ վիճակագրութիւնը չեղած տեղն էլ, դարձեալ աւելի օգտաւէտ են Մ. Ս. Միանսարեանցի առաջարկած գրասեղանները և մեր այժմ ցոյց տուածները, քանզ հրները, եթէ մօտաւորապէս հասակներին համեմատ բաժանեն աշակերտներին. ուրեմն գրասեղանները դասատանց համեմատ միակերպ չ'բաժանեն, այլ ամեն դասատունում 2 — 3 զանազան հասակի գրասեղաններ (նստարաններ) դասաւորեն, ինչպէս այդ արած է հաւանելի կերպով Մարիամեան Անանեան օրիորդաց ուսումնարանի պ. տեսուչը:

Ուսումնարանի առողջապահութեան հարցերը աւելի լրացնելու համար, մեզ պէտք էր ի վերջոյ ժողովրդական դպրոցի ամբողջ շէնքի և յատակագծի կամ պլանի մասին խօսել: Բայց այդ հարցի մանրամասնութիւնքը գրքով բացատրելը մեր հասարակութեան համար ձանձրութիւնից զատ ուրիշ հետեանք չ'էր ունենալ: Այդ բանի իրադործումը մեր մէջ կարելի է բան հասկացող տեղական ճարտարապետների միջոցով, ինչպէս այդ տեղի ունեցաւ Աղէքսանդրասոյում: Այդ քաղաքի հասարակութիւնը՝ հրաման ստանալով մեծ եկեղեցու հրապարակի վրայ ուսումնարան շինելու (թէև տեղը խսկապէս այնքան յարմար չ'էր, բայց դորանից լաւ քաղաքը չունի իւր ողորմելի դիրքով) գառաւ վրացի երիտասարդ ինժ. իշխ. Քուսմանովին: Այդ պարոնին մեր կողմից յանձնեցինք մեր ձեռաց տակ եղած բոլոր նիւթը ուսումնարանի շէնքի առողջապահութեան պայմանների նկատմամբ: Պարոնը խղճմտանօք հետեւելով այդ գործին կազմեց մի պատուական պլան, որ հաստատուեցաւ: Շատ և շատ ցանկալի է, որ քաղաքացիք չ'փոխէին սկզբնական մտադրութիւնները և առանց մի կէտ շեղուելու այդ պլանից շտապեն շինել ուսումնարանը, որ կ'լինէր օրինակ միւս քաղաքաց դպրոցների համար:

Վ Ե Ր Գ Ա Բ Ա Ն

Այս գրքոյիը գլխէ 'ի գլուխ ընթերցողներին շատերը տեսնելով և տեղեկանալով այսքան շատ պահանջներին ուսումնարանի վերաբերութեամբ՝ մի քանիսն էլ գուցէ զարմացած կամ վախեցած զանազան հիւանդութեանց նկարագրութիւնից, կարելի է վերջապէս հարցնեն թէ՛ «նոյնայր, էս մեր հայրերը, մենք, մեր տղէքը մեր հին վարժատներում հօտովորել ենք, — հապա ինչի՞ կարձատեսութիւն, մէջքի ծռուիլ, բարակացաւ, փոխադրական հիւանդութիւններ և այլ բարբ ու ճակ վարժատնից չենք տեսել: Էս ինչ նոր բաներ է, որ մտնում են էս մեր բժիշկները»:

Այս հարցին պատասխանելով մենք էլ վերջացնենք մեր խօսքը:

Սիրելի ընթերցող, աշխարհիս երեսին շատ բաներ կան, որոնց պատճառները մարդիկ չ'գիտենալով, ուրիշ պատճառների են տալի նոցա: Եւ երբ զիտութիւնը ցոյց է տալի իսկական պատճառները՝ մարդիկ երկար ժամանակ չեն ուզում հաւատալ, մինչև որ զիտութեան հետ միացած փորձը համոզ է նոցա հաւատալու:

Այս մտքի հազարաւոր հետաքրքրական ապացոյցները ընդհանուր պատմութիւնից մի կողմը թողնենք. վեր առնենք օրինակներ բժշկական պատմութիւնից:

Քանի որ մարդիկ չ'գիտէին թէ՛ «իֆիլիս» կոչուած ախտ կայ, նորա երեւոյթները տրվում էր ուրիշ պատճառների և ոչ ոք չէր մաքառում սիֆիլիսի դէմ: Նոյնպէս երկար ժամանակ չ'գիտէին թէ՛ ժառանգական հիւանդութեանց մի մասը յառաջ է գալի ծրնողաց սիֆիլիսը լաւ չ'բժշկուելուց. այդ պատճառով ոչ ոք չէր մեղադրում սիֆիլիսին:

Քանի որ խելագարութեան բուն պատճառները, (կաղմուածքի մէջ) մարդկանց ծանօթ չէին, այդ հիւանդութեան դեպքերը սուսանի գործ էին համարվում, և այլն. խղճալի հիւանդներին զանազան գերբնական յատկութիւններ էին տալի և ըստ մեծի մասին անպատմելի կերպով շարժարում էին նոցա. Բայց այժմ հեռուում են այդպիսի հիւանդներին բժշկել, ինչպէս միւս սովորական հիւանդներին: Ամեն բարեկիրթ քաղաքում սկսում են կանոնաւոր և շատ յարմարութիւնով հոգեկան հիւանդաց աներ շինել և այլն:

Քանի որ մարդիկ կարծում էին թէ՛ առհասարակ հիւանդութիւնները անհասկանալի դիպուածներ են և նոցանից կարելի է փրկուել այս և այն աղօթքով, դեղով կամ բեցեպտով, — ոչ ոք չէր մտածում ամբողջ քաղաքների առողջապահութեան վրայ: Բայց երբ տեսան, փորձուեցան, համոզուեցան, թէ՛ մի քաղաքի մէջ հիւանդութիւնը պակասում են գլխաւորապէս քաղաքի առողջապահութեանը հոգ տանելուց. օրինակ՝ ապականող գործարանները քաղաքից հեռու տանելուց, խմելու ջուրը իստակ պահպանելուց, շուկայի (բաղարի) կերակրեղէնքը հսկողութեան տակ դնելուց, արտաբնոյցները և փողանցքները կանոնաւոր կերպիւ մաքրելուց, շրջակայքի հոտած ձահիճները չորացնելուց և այլ այսպիսի ընդհանուր պայմաններից, այժմ այդ պատճառով՝ իւրաքանչիւր բանխմայ քաղաքային վարչութիւն — ամեն բանից յառաջ՝ քաղաքի առողջապահութեան պայմանների մասին է մտածում, խորհուրդ հարցնելով բժշկական ընկերութիւններից և այլն:

Ահա՛ այսպէս էլ այժմ ուսումնարանաց առողջապահութեանց հարցն է: Քանի որ մեր գաւառներում՝ ծուռ ու մուռ ոտներով, կուղումուղ մէջքով, սեխաձև գլուխներով երեխաների հանդիպելիս նոցա զանազան անպատելի հիւանդութիւնքը քննելիս, մեր սերնդոց բնատուր քաջակազմութեան օրէ ցօր մանրանայը և այլանդակուելը նկատենք և այդ բոլորը գերբնական պատիժներ չ'համարենք, — այնքան առաւել և այն ժամանակ կսկսենք իսկական պատճառները որոնել գերդաստանի և ուսումնարանի կրթութեան անկանոն պայմանների մէջ և նոցա փոփոխութեանը ամեն ջանքով պիտի հետեւինք

Մանաւանդ մտածելու է այդ կողմից մեր խեղճ աղջիկների մասին, որք մեր մէջ աննշան էակներ համարվելով՝ մատաղ հասակից բարձի թողի վեր ընկած են մնում միշտ տան մէջ և նոցա կանոնաւոր կրթութեան մասին շատ սակաւ են մտածում մեր գաւառներում: Բայց չէ՞ — որ դոքա ևս պիտի լինին մեր մէջ սուղջ և խելայի սերունդ յառաջ բերողները



Յ Ե Ի Ե Լ Ո Ի Ե Ծ

Որովհետև Թիֆլիզի և Կարնոյ (Երզրումի) ուսումնարանական հանգամանքները փոքր ՚ի շատե հետադատող երևեցաւ այս մտտերս Կովկասեան զինուորական շրջանի ակնաբոյժ զօկտ. Ռէյխը — զիտուութեան հաւատարիմ անձն. ուստի հարկաւոր ենք համարում իբրև յաւերւած հաղորդել մեր ընթերցողներին քանի մի զիտողութիւններ նորա աշխատութիւնից (Медиц. Сборникъ И. К. М. О. № 27 за 1878. г. և Протоколъ № 10 за 1878/9) :

I.

ԹԻՖԼԻԶԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱՅ ՄԱՍԻՆ

Ռէյխը քննել է Թիֆլիզի չորս ուսումնարանների աշակերտաց աչքերը. կլասիքական արական զիմնադիօնի, օրիորդաց զիմնադիօնի, քաղաքային ուսումնարանի և վարժապետական ինստիտուտի: Հեղինակի թուերը լիակատար հաստատում են գրքոյկիս Ա. և Բ. գլուխների բոլոր եզրակացութիւնքը աշակերտաց աչքերի տկարութեան հարցի մասին՝ ապացոյց գրքոյկիս մէջ բերուած մտքերի ճշգրութեան և նշանակութեան:

Համառօտութեան համար այստեղ յառաջ բերենք Ռէյխի աշխատութիւնից այն կէտերը կամ եզրակացութիւնքը, որ յսակապէս հայերիս կ'վերաբերին:

Հեղինակի բերած բոլոր աղիւսակներից և թուերից երևում է

1. Թիֆլիզի պետական զիմնադիօններում ուսններից յետոյ հայոց տարրը քանակութեամբ գերազանցում է վրացիների և այլ ազգութիւնների վրայ: Այն ինչ՝ սկզբնական ուսուցող ուսումնարաններում հայոց թիւը շատ սակաւ է:

2. Արաբական զիմնադիօնում քանի բարձր է գնում դաստան կարգը, այնքան արագ աճում է կարծատեսութիւնը հայ և վրացի աշակերտների մէջ, քանզ ուսնների:

Իրաւի, կլաս. զիմնադիօնի 534 աշակերտներից ¹⁾ դալիս է,

Իւրաքանչիւր հարիւրին՝	
Ռուսներից	30 կարճատես
Հայերից	38 ,,
Վրացիներից	44,5 ,,
Հրէաներից	45,4 ,,

Օյլգա Ֆեոդորովի զիմնադիօնի 570 աշակերտուհեաց մէջ ²⁾ հայ և վրացի օրիորդները ուսնների համեմատութեամբ ներկայացրին փոքր ինչ սակաւ դէպքեր կարճատեսութեան.

Հարիւրին	
Ռուսներից	56 կարճատես
Հայերից	23 ,,
Վրացիներից	14 ,,

— Ռուսական քաղաքային ուսումնարանի մէջ 101 աշակերտներից (42 վրացի, միմիայն 7 հայ, 52 ուս և այլազգիք) — հայերը կարճատեսութեան առաւել պրօցենտ (0/0) ներկայացրին:

— Վերջապէս՝ Ալէքսանդրեան վարժապետական ինստիտուտում 54 հոգուց (20 վրացի և իմերեկ, 8 հայ, 26 ուս և այլն) — հայ վարժապետացուները ամենից սակաւ կարճատեսութիւն ցոյց տուին:

3. Այս թուերից դօկտ. Ռէյխը մի այլ ընդհանուր եզրակացութիւն է դուրս բերում թէ՛ տեղացի (բնիկ) ժողովրդի մանուկների մէջ առաւել արտադրութեան կայ կարճատեսութեան, այդ պատճառով նոցա մէջ առաւել շուտ աճում է նպաստող հանգամանքներում աչաց տկարութիւնը:

Հեղինակի այս եզրակացութեան հետ դժուար է լիովին համաձայնել, քանի որ ժողովրդական մեր միւս դպրոցների աշակերտ-

1) Ռուս 241, հայ. 164, վրացի 74, մնացածը ուրիշ զանազան ցեղեր:

2) 318 ուս, 129 հայ, 56 վրացի, 17 հրէայ, 20 գերմանացի, 24 լեհացի, 3 թուրք, 1 իտալացի, 2 յոյն:

ները և աշակերտուհիք չեն քննուած, քանի որ չգիտենք մեր ժողովրդի մէջ ո՞րքան տարածուած է կարճատեսութեան տկարութիւնը: Եւ կարիք չկայ անորոշ «տրամադրութիւն» խօսքին պիմելու, երբ աւելի հասկանալի պատճառ կայ թէ՛ ինչն՞ օրինակ՝ արական գիմնադիժնում տեղացի աշակերտները առաւել կարճատեսութեան պրօցենտ են ներկայացնում: Այն է թէ՛ տեղացիք բարձր դաստաներ անցնելու համար 2 — 3 անգամ աւելի աշխատանք պէտք է գործ դնեն, քանզ ուսանելը: Բացի լատինական և յունական բառարանները, որ յիշում է Ռէյսը, տեղացիք ուսուէլէն լեզուի համար ևս որքան և ո՞րքան առաւել պիտի աշխատեն . . .

Ինքը՝ պ. Ռէյսը, կլասիք. գիմնադիժնի դաստաներում աւելի փոքր թիւ կարճատեսների գտաւ, քանզ բարձր դաստաներում. ուր մինչև 71% է հասնում — զարհուրելի պրօցենտ. Իսկ միւս ուսումնարանաց մէջ, ուր աշակերտաց աշխատութիւնը չափազանցութեան չեն հասցնում, համեմատաբար բարեխառն է բարձր դաստանում. օրինակ՝ օրիորդաց գիմնադիժնի 40%, քաղաքային ուսումնարանի — 21%, իսկ վարժապետաց ինստիտուտի 15%:

Համեմատելով եւրոպական գիմնադիժններին, ուր աշակերտաց աչքեր քննուած են, բացի Հէյդելբերգինը, ո՛չ մինի բարձր դաստանում այդպիսի զարհուրելի թիւ կարճատեսութեան չենշմարտում, ինչպէս տեղոյս կլասիք. գիմնադիժնում — 71%:

Վարժապետական ինստիտուտում կարճատեսութեան և առհասարակ աչաց տկարութեան սակաւութիւնը Ռէյսը մեկնում է նախ՝ վարժապետացուաց մեծ մասով այնպիսի գաւառներից (սարեցիք և այն) լինելուց, ուր աչքերի ժառանգական առողջութիւնը տիրապետում է, և ուր սկզբնական ուսումնարանների պարամունքը սովորաբար չափից չեն անցնում, ինչպէս այդ մեծ քաղաքներում է: Միւս կողմից՝ ինստիտուտում դաստաների կանոնաւոր լուսաւորութեանը (լուսարաշխութեանը) ուշք է դարձուած, երեկոյեան պարապմանց համար շինծու լոյսը (լամպաները) շատ յարմար կերպով մատակարարվում է և այն:

ՀՆԱՐՆԵՐ ԿԱՐՃԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՅԱՌԱՋՆ ԱՌՆԵԼՈՒ

Ռէյսն ևս կարճատեսութիւնը ըստ մեծի մասին ստացական է համարում. բոլոր, նա ասում է, այդ տկարութիւնը այն մանուկների մէջ աւելի շուտ աճում է, որ կարճատես ծնողներից են: Այդ-

պիսի գերդաստաններում մանուանդ պէտք է ուշադրութիւն դարձուի դեռ շատ փոքր հասակում մանուկների աչաց, որ միշտ շատ մօտ առարկաների վերայ աչքերը կրթուած չլինի. բաց օդը շուտ-շուտ դուրս բերել՝ հեռաւոր առարկաների վերայ նայելու սովորեցնել: Փոքր ինչ մեծացած մանկան չ'թոյլ տալ երբէք գլուխը քաշարած երկար ժամանակ շատ մանր առարկաներով զբաղելու: Թէ որպիսի ազդեցութիւն ունին աչաց տկարութիւն յառաջ բերելում վաղ գրասէղաները աշակերտների համար. այդ մասին չ'կրկնենք, որովհետև բաւականին մանրամասն յիշած ենք վերը՝ համապատասխան գլուխներում:

Ռէյսն ևս քանիցս կրկնում է այժմ որ ծնողները և դաստիարակները պէտք է առանձին ուշադրութիւն դարձնեն երեխայոց վատ սովորութեան՝ առարկաները անպատճառ աչքերին մօտ բռնելու կամ գլուխը անուշադրութեամբ գրքին կամ գրչագրին շատ մօտեցնելու: Եթէ մշտական նկատողութիւնը չի օգնում վատ սովորած երեխին՝ գլուխը բարձր պահելու. այն ժամանակ նա առաջարկում է, հետևեալ ստիպողական միջոցներ գործ դնելու. 1) Ծնօրաքաջ կոչուած տախտակ սեղանի ակին կպցնել: Այս հնարը, ըստ մեր կարծեաց, չափից դուրս խիստ է. աւելի լաւ է 2-րդ առաջարկութիւնը — Այդպիսի երեխայի գլխի մագերին կապել ժապաւէնի մէկ ծայրը, իսկ միւս ծայրը կապել գրասեղանի մէջքին այնպէս, որ երեխայն գլուխը շատ-որ կուայնել ուղեւայ — մագերը յիտեից ձգուին և նա այդ կերպով ամեն անգամ զգուշանայ:

Երբ պատանու կարճատեսութիւնը նկատվում է միայն այնով, որ նա հեռուի առարկաները լաւ չեն տեսնում, — այդ դէպքում բաւական է սովորական միջոցները գործ դնել, այն է թէ՛ գրել և կարդալը ամեն մի կէս ժամից յետոյ ընդհատուի 5 — 10 րոպէով: Ծրագի կամ լամպայի լոյսով մինչև կէսգիշեր և աւելի չ'թողուի պարապելու, մանրատիպ բառարանները և գրքերը սակաւ գործ ածել և այն, որ մենք Ա. և Բ. գլուխներում յիշած ենք:

Երբ երեխայն 14 բթամատից (գիւյմից) հեռու չի կարող կարդալ կամ գրել — ահա՛ այդ դէպքում միայն հարկաւոր է կանխաւ կոչուած ակնոցներ գործ ածել. պէտք է այդ ակնոցների ամենաթեթեւ աստիճանները ընտրուին, միմիայն սովորական հեռուութեանում բռնելու համար: զժբաղդաբար աշխատում են ծնոյք կամ պատանիք ինքնազուլի ընտրել կրպակներում այնպիսի ակնոցներ, որ շատ հեռուն ցոյց տան: Այդպիսի ակնոցները օրէ ցօր կարճա-

տեսութիւնը սասակացնում են և շատ վատ հետևանքների հասու-
ցանում :

Երբ մատաղ հասակում կարճատեսութեան վերին աստիճան-
ները նկատելի են լինում, այդպիսի երեխաներին լաւ է հեռու պա-
հել ուսումնարաններից, միայն անական աղատ ուսումը այդպիսիներին
վայել է :

ՆՈՒՍՏԵՍՈՒԹԵԱՆ դէպքերում, երբ երեխայք թէ հեռուն և
թէ մօտ նայելիս աչքերին շատ դժուար է արհեստաբար արհեստաբար
աչքերը շատ շուտ դադրում են ամեն մի պարապմունքից, այդ դէպ-
քերում ահա՛ պահանջում են բժշկները մատաղ հասակում ևս ամ-
ենեւին խորթ չհամարել երեխայի համար ակնոց ընտրել, որ կոչ-
վում են կոնվէքս, աստիճանը բժշկին ընտրել տալով: Այդ դէպքերում
ակնոցը հարկաւորութիւն է աչքերը ապագայ կուրանալուց պաշտ-
պանելու համար :

Գալով դասատների կանոնաւոր լուսաբաշխութեան հարցին,
Ռէյլը երիտանի և միւս առողջապահների նման պահանջում է,
որ ամեն մի քառակուսի ոտք յատակի տարածութեան համեմատ
30 քառակուսի բթամատ (դիւլմ) պատահանի ապակի հաշուով:

Նոյսը անհրաժեշտ կերպով պէտք է ձախ կողմից ընկնի գրա-
սեղանների վրայ, ինչպէս այդ վերեւը յիշած ենք :

Ի վերջոյ Ռէյլը շատ տխուր նկարագրութիւններ է անում
թիֆլիզի կլասիքական դիմնադիօնի և մի քանի մասնաւոր պանսի-
օնների լուսաբաշխութեան պայմանների մասին:

Մանաւանդ վառելալոյսը երեկոյեան պարապմունց համար շատ
մեծ ուշադրութեան արժանի է: Առատաղեց սեղանների վերայ շատ
բարձր կախ արած լամպաները տափակ և լայն աբաժուրներով բա-
ւականին անյարմար են իրանց տակը շուտք ձգելով: Աբաժուրները
պէտք է կոնաձև (լոյսը հաւաքող) լինեն և փոքր ինչ թափանցիկ
(կաթնազոյն ապակուց և այլն): Պատին կպցրած մի երկու լամպա-
ներ մի քանի շարք գրասեղանների համար, միայն աղտոտ լոյս տա-
լով, ՚ի հարկէ դատապարտելի է

Լաւ կ'ընէր, եթէ ուշք դարձուէր երեկոյեան լուսաբաշխու-
թեան ներսիսեան հոգևոր վարժ. Սեմինարիայի մէջ, ուր լամպա-

ները (լապտերները) թէ՛ լուսով և թէ՛ արհեստով շատ նահապետական
կերպարանք կ'ներկայացնեն ¹⁾ :

Տեղւոյս Նայիանեան օրիորդաց դպրոցի օրուան լուսաբաշխու-
թեան պայմանները մենք շատ յաջողակ գտանք և գրասեղանները
լոյսի համեմատ շատ կանոնաւոր դարսուած: Գրասեղանները իրանք
իդէալականից բաւականին հեռու են :

Մարիամեան օրիորդաց դպրոցի շէնքը իւր շատ յարմարու-
թիւններով՝ ափսոս լուսաբաշխութեան կողմանէ փոքր ինչ անյար-
մար է: Մի քանի դասատներում պատահանները բոլոր դէպի հիւ-
սիս են դուրս գալի և գրասեղաններն էլ ուղղակի պատահանների
դէմյանդիման շարած և ոչ ձախից դէպի աջ կամ յետեւից :

Այս ուսումնարանի նստարանների մասին վերև արդէն կար-
ձառուս խօսեցինք :

II.

ԿԱՐՆՈՑ (ԷՐՋՐՈՒՄԻ) ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱՑ ՄԱՍԻՆ

Կարնոյ ուսումնարանաց վերաբերութեամբ Ռէյլի դիտողու-
թիւնքը բաւականին հարեանցի են, որովհետև իբրև զօրաց ակ-
նաբոյժ փոքր ժամանակով միայն կարին պատահելով մանրամասն
հետազօտութիւնք չէր կարող անել: Նա ուշադրութիւն է դարձ-
րել տեղւոյն հայոց երկու ուսումնարանաց: Պ. ակնաբոյժը այդ
դպրոցները քաղաքի բոլոր դպրոցներից ամենաընտիրքն է համա-
լում: Բոլոր աշակերտեցոց աչաց կարճատեսութեան կամ հեռա-
տեսութեան պայմանները հետազօտելու միջոց չունենալով՝ նա ու-
շադրութիւն է դարձրել միմիայն աչաց թաղանթի (աչքագունտի
և կոպերի բարակ մաշկու) կարծրութեան և մանր հատիկներին (ար-
խօնէրին) :

1) Իսկ Ներսիս. Գալոցի շինուածքի, նստարանների և այլ ուսում-
նարանական պայմանների հակառողջական կողմերը քննելը, հարկաւոր կը-
լինի առանձին տետրակի նիւթ շինել, ինչպէս որ այդ արինք 4 տարի
յառաջ ուսումնական թանկան պայմանների մասով:

Օրիորդաց դպրոցում նա քննած է 229 աշակերտուհի.
Արական դպրոցում ,, ,, 141 աշակերտ.

Հարիւրին:

Օրիորդաց մէջ երեւացել է 67 աչքացաւ.
Տղայոց մէջ ,, 73 ,,

Չարմանալի մեծ տոկոս (պրօցենտ.), ոչ մի եւրոպական ուսումնարանում, որ այդ կողմից քննուած է, այդպիսի մեծ թիւ աչքացաւերի չի ներկայացնում: Յաւալին այն է, որ այդ տեսակ կարմրութիւնը և մանր հատիկները թերթեւունքների ներքի կողմը — հայերի մէջ ամենեւին տկարութիւն ևս չեն համարվում, իբրև սովորական երևոյթ:

Ռէյխը ասում է որ աշակերտերը մէջ այդ աստիճան շատ աչքացաւերի տարածուիլը այնքան ուսումնարանի մեղքը չէ, որքան անհաս հանդամանքների:

Երկու դպրոցաց մէջ ևս, ըստ Ռէյխի, դասատները բաւականին բարձր, ղեղեցիկ, մեծ, ըստ լուսաւորող պատուհաններով, օդամաքութիւնը բաւականին ապահոված. աղտոյութիւն կամ կեղտոտութիւն ուսումնարանաց մէջ չէ նկատուած: Օրիորդաց ուսումնարանը մինչև անգամ ամենամաքուր կարելի է կոչել: Բայց այդ թէ՛ աշակերտները և թէ՛ աշակերտուհիք դասատուն մտնելուց յառաջ նախապէս հանում են իւրեանց ցեխոտ կօշիկներ կամ ոտնամանները և պահում են նշանակուած պահարաններում (տօլապներում) առանձին խցիկների մէջ: Օգը ուսումնարանում եթէ գերազանց մաքուր չէր, բայց և որևիցէ դարչահատութիւն չունէր: Կպրօցները այսպէս ղեղեցիկ նկարագրելուց յետոյ դօկտ. Ռէյխը գտնում է Կարնոյ բնակչաց անական պայմաններին.

«Վերջինքը բոլորովին հակաուղղական են: Փոքրիկ օթեւաններ, ձմեռը ներքնայարկում — փոքր սենեակների մէջ, պատուհանները ծակերի նման, օդամաքութիւնը սակաւ, խոնավութիւն, կերակրողէնների հոտեր, — տան չորս կողմը խոհանոցի մնացորդների դարչահատութիւնը»:

Եթէ այս պարագաներին աւելացնենք և մեր տեղեկութիւնքը Կարին եղողներից թէ՛ ամառուան սենեակներն ևս ըստ մեծի մասին ախոռների (գոմերի) վրայ են շինուած, որտեղից անհնար (աչքին վնասող) գոլորչիք տարածվում են. եթէ ՚ի նկատի առնենք միւս կող-

մից, որ Կարնեցիք իւրեանց արտաքնոյնները ուղղակի նախասնեակների մէջ են տեղաւորում — չգիտենք ինչի այսպիսի դարչահատութիւնք սենեակներին մօտ, — այն ժամանակ՝ պէտք է համաձայնել Ռէյխի հետ թէ՛ անական համագամանքներն են պատճառ աշակերտերը այդչափ աչքացաւերի:

Վստ չէր լինել եթէ մեր Կարնեցի եղբայրք սովորութիւն անէին գոնեա երեկոցոյ ոչքերը սոփոստ շոտակ ջրով՝ փոքր ինչ «ռում» (Rhum) խառնուած մէջը (մէկ բաժակ ջրին մի թէյի դրգալ) կամ փոքր ինչ շիպ:

Ուսումնարանաց աւողջապահութեան հարցերին հետևող անձանց պարտք ենք համարում այստեղ մատնացոյց լինել մի նոր գրուածի վերայ, որ այս օրերս մեր ձեռք հասաւ.

„H. Cohn-ի Die Schulhygiene auf der Pariser Weltaufstellung.“ (Ուսումն. և ուղղ. ջրապահութեան Փարիզէան աշխարհագործական), Breslau 1879. Այս գրուածքում ուշադրութեան արժանի կարող են լինել ուսումնարանական շէնքի յատակագծերը:

14 փետր. 1879
ԹԻՖԼԻՉ

Հ Ր Ա Ի Է Ր

Այս գրքոյկի վաճառումից յառաջացած գումարը, զուրս գարով տպագրական ծախսը՝ հաւաքուելու է «ՓՈՐՁ»-ի խմբագիր պ. Աբգար Յովհաննիսեանի մօտ, և նշանակվում է յատկապէս առողջապահութեան և բնագիտութեան վերաբերեալ զանազան փոքրիկ տետրակներ տպագրելու՝ մեր զիւղական ժողովրդոց մէջ տարածելու նպատակաւ: Հրաւիրում ենք մեր բժիշկներին և բնագէտներին օգնելու այս գործին՝ յօդուածներ և թարգմանութիւններ հասուցանելով մեզ: Յոյս ունէինք թէ՛ մեր այս առաջարկութիւնը կայսերական Կովկասեան բժշկ. ընկերութեան մէջ վաղուց պիտի արձագանգ գտնէր, եթէ 1875 թուին գործը չձանրացնէին. . . : Երբ բաւականաչափ տպագրութեան արժանի նիւթ հաւաքուի, այն ժամանակ մասնաւոր խմբագրութիւն պիտի կազմուի տեղումս պ. Աբգար Յովհաննիսեանի և իմ գործակցութեամբ՝ այդ կարևոր գործը փոքր առ փոքր մասնաւոր հնարներով յառաջ տանելու:

Ա.Ի.ՏԻՔ ԲԱԲԱՅԵԱՆ

ԲՈՎՆԵԴԵԿՈՒԹԻՒՆ

Երէս:

Յառաջարան	3
Գ.Լ.ՈՒԻՍ Ա.	
Աչքացաւ և կարճատեսութիւն	12
Գ.Լ.ՈՒԻՍ Բ.	
Կարճատեսութեան պատճառները	16
Գ.Լ.ՈՒԻՍ Գ.	
Հոսումն արեան դէպի զլուխ	19
Գ.Լ.ՈՒԻՍ Կ.	
Գլխացաւ, Քթի արիւնահոսութիւն	22
Գ.Լ.ՈՒԻՍ Ե.	
Ողնաշարի ծռուիլը	24
Գ.Լ.ՈՒԻՍ Զ.	
Սապատողին աջակողմեան	27
Գ.Լ.ՈՒԻՍ Է.	
Կուրծքի գործարանների տկարութիւնք. Խուլխաւ	30
Գ.Լ.ՈՒԻՍ Ը.	
Բարակացաւ և թորխաւ	32
Գ.Լ.ՈՒԻՍ Թ.	
Փորի գործարանաց հիւանդութիւններ	34

	երես:
ԳԼՈՒԽ Ժ.	
Սեռական գործարանների տկարութիւնք	36
ԳԼՈՒԽ ԺԱ.	
Փոխադրական հիւանդութիւնք	39
ԳԼՈՒԽ ԺԲ.	
Ծաղկի պատուաստումն	41
ԳԼՈՒԽ ԺԳ.	
Ուսումնարանի արտաքնոց	44
ԳԼՈՒԽ ԺԴ.	
Վիրաւորութիւնք (անդամախախտութիւնք)	46
I Կանոնաւոր խաղալու և մարմնամարդութեան տեղ	47
II Պարտէզին կամ այգու խնդիրը	48
ԳԼՈՒԽ ԺԵ.	
Ջղային և հոգեկան հիւանդութիւնք	49
ԳԼՈՒԽ ԺԶ.	
Հոգեկան հիւանդութիւնք երեխանց մէջ	52
ԳԼՈՒԽ ԺԷ.	
Եզրակացութիւնք	58
ԳԼՈՒԽ ԺԸ.	
Գրասեղանների հարցը մեր մէջ	60
ՎԵՐՋԱԲԱՆ	66
ՅԱՒԵՆՈՒԱԾ.	
I Թիֆլիզի ուսումնարանաց մասին	68
II Կարնոյ (Երզրումի) ուսումնարանաց մասին	73
ՀՐԱԻԷՐ	76

ՄԵՋ ՆԿԱՏԵԼԻ ԵՂԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

	եր.	Տող	Սխալ:	Ուղիղ:
	7	23	1875	1877,
	—	27	հիւանդութիւն	հիւանդաբանութիւն,
	8	26	ընտրութիւն է իսկ	ընտրութիւն է, իսկ,
	27	վ.տ.	Bagmsky	Baginsky,
	33	2	էթէ քթի	էթէ աշակերտը քթի,
	35	20	ուսումնարանաց	ուսումնականաց,
	39	5	քաղափոխում	քայլափոխում,
	—	16	ուսումնարանը	ուսումնարանի վերակացուք և այլն,
	41	22	Historisch—krtische	Historisch—kritische,
	41	վ.տ.	Журналь патологіи и а- натоміи	Журналь норм. и патолог. гистологіи и пр.,
	46	վ. 2	մի	Աղէքսանդրապոլու,
	47	1	երեխին	երեխայի,
	49	ճան.	Վէյմարինը	Վէյմարինը,
	55	ճան.	ymphomania	Nymphomania,
	64	վ.տ.	մեծ գումարով:	Մեծ գումարով: Այնինչ կարե- լի էր առաւել դիւրութեամբ տեղւոյս իգական գիմնազեծնի նստարանների նման շինել տալ, որ առաւել օրինակելի են:
	72		վառելալոյս ,	արուեստական լոյս:

THE HISTORY OF THE
CITY OF BOSTON
FROM THE FIRST SETTLEMENT
TO THE PRESENT TIME
BY NATHANIEL BENTLEY
VOLUME I
PUBLISHED BY G. B. LITTLE & CO. BOSTON
1822

THE HISTORY OF THE
CITY OF BOSTON
FROM THE FIRST SETTLEMENT
TO THE PRESENT TIME
BY NATHANIEL BENTLEY
VOLUME I
PUBLISHED BY G. B. LITTLE & CO. BOSTON
1822



2013

« Ազգային գրադարան »
19181

NL0053352

